



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասուբյեկտն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

դասմանել և տարածել կրթող ցանկացած մեդիայում կամ կրիչով  
մեդիայիսկ կամ օգտագործել սակայ կրթող սակերկնու համար կորը

You are free to:

**Share** – copy and redistribute the material in any medium or format

**Adapt** – remix, transform, and build upon the material



2658

245

6-77

1892

2010







245

6-77

# ԵՐԳԱՐԱՆ

ՈՐ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

ՍԱՂՄՈՍՆԵՐ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԻՊ

6-77

245  
6-77

معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۱۲ و  
۳۰۸ تاریخچه و ۱۰۸ نومرولی رخص  
مصارف آمریقان مسیو شرکتی طرفندن ت

ՀՈՒՅՈՒ Ս

U.S. A.P.

1892

Dojumbant

58659-h

'20 01

1362-72

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Եփեսացւոց թղթոյն մէջ, Գ. Ե. 19  
 Առաքեալը կը յորդորէ հաւատացեալներն ու  
 սերով թէ «Սաղմոսներով ու օրհնութիւն  
 ներով և հոգեոր երգերով մէջերնիդ խոսակցելով,  
 երգեցէք ու սաղմոս ըսէք Տէրոջը  
 ձեր սրտերուն մէջ»։ Այս սառաքե  
 լական պատուէրին համեմատ հաւատացեալ  
 ՚ի սկզբանէ հետէ սոյնոր են, առանձին, ու  
 տանեօք, ընկերութեամբ կամ հրատարակեալ  
 զու, երգովք և օրհնութեամբք յայտն  
 իրենց բարեպաշտ զգացումները։ Այսպէս  
 օրհներգութիւն կամ սաղմոսերգութիւնը  
 միշտ Գրիստոնէական պաշտաման կարևոր մէկ  
 մասն եղած է։

(690)

Աստուածային պաշտաման մէջ երգերու  
 այս պէտքը դիւրացնելու համար է որ Գրիս  
 տոնեաց ընկերութեանց մէջ երգերու խօսու  
 զածոներ կը գանձուին, ինչպէս որ Յանկաւ  
 տանի Աւետարանական Եկեղեցեաց գործա  
 ծութեամբ համար ալ այսպիսի հաւաքում  
 ներ, թէ եղաւ <sup>պատմ.</sup> առանց եղաւ  
 նակի, ապէս <sup>պատմ.</sup> անգամ ՚ի յ  
 ընծայու եղանակով ինչպէս է ահաւան  
 արտ Եփեսացւոց երգումն, որ նախընթաց

ագրութիւններէն աւելի նոյս է, քանզի  
 ու, կիրակնօրեայ Դպրոցաց երգարանէն  
 ըստարակապական պաշտաման յարմար՝ ընտ-  
 անաւ առնուած երգերէն զատ, կան  
 սե բոլորովին նոր յօրինուած երգեր, և,  
 հրոզ՝ Սաղմոսաց դահաջուցիչ ոտանաւոր  
 թարգմանութիւն մը շունենայով, առջի տը-  
 ագրութեանց մէջ գտնուածներուն գրեթէ  
 ար, և քանի մը նորոգ թարգմանուած  
 սաղմոսներ: Ասոնց ամէնքն ալ այս նոր  
 տպագրութեան մէջ յատուկ կերպով մը, այն  
 և ալ նիւթոց վերաբերեալ երգեր և  
 սղմոսներ զատ զատ ՚ի մի հաւաքուելով,  
 պատշաճ կարգաւ դասուած են, որպէս զի  
 այն նիւթերէն մէկուն վրայ երգ մը խըն-  
 դրողն՝ ուղածը իւրաքանչիւր մասնական  
 շաւաքածոյին մէջ որոնելով՝ կարենայ գի-  
 ւաւ իրեն յարմար երեցածն ընտրել:

Երանի թէ այս գրքոյկը որժամոզներն  
 արք, կանայք և տղայք, ինչ որ իրենց Ա.Ս.  
 տուածն ու փրկիչը հանապազօր փառա-  
 բանելու մէջ հանութիւն գործով ՚ի վախ.  
 հանի յարմար ըլլան, նրա շնորհ փա.  
 յանչաց դասակ 2-7-ը ահից ըլլալ յա-  
 իրանս՝ մեր Տէ. Յիսուս. Քրիստոսի  
 հօքը:

# ՀՈԳԵԻՈՐ ԵՐԳԵՐ

## Ա Ս Տ Ո Ւ Ա Մ

1 Փ-----ն-----ն-----ն ----- Ա-----ն-----ն-----ն . Ս-----ն-----ն-----ն . Ճ . (8, 6) .

1 Ամէն երկիր Տէրն օրհնեցէք  
երգով և ցնծումով .

Տէր Աստուծոյ ծառայեցէք  
Ուրախ , անկեղծ սրտով :

2 Ճանչցէք որ Տէրն է մեր Աստուած ,  
Մեզ ինքն է բանեղծեր .

Մենք ժողովուրդ ենք ընտրուած ,  
Մենք ենք իր ոչխարներն :

3 Փառարանող գոհութիւնով  
Անոր գոհութեան մըտէք .

Եւ իր հարկ մեր յիշելով  
Անոր հարկովեցէք :

Ինչպէս

Իր

Ազգէ

Իր

2 Փ-----բ-----բի-----ն ----- Ա-----ն-----ն . Սաղ 118 :  
( 11 , 8 ) :

1 Ամէն երկիրներ , Տէրօղմով ցնծացէք  
Դադով և ուրախութիւնով .

Տէր Եհովային քնծաներ մատուցէք  
Հողւով ու ճշմարտութիւնով :

2 Քանզի դերադանց բարերար է մեր  
Որ մեզ ըստեղծեր է , և մենք

Անոր խոտաւէտ արօտին ոչխարներ  
Պիտի անոր ձայնը լրանք :

3 Անոր սուրբ դռներըն եկէք դռնօթ  
Անոր սրբահները մըտէք .

Անոր ծափ զարկէք հոն , և օրհնեցաւ  
Թեամբ .

Անոր անունէն դոհացէք :

4 Զի ինք մեր Աստուածն է . ՚ի յաւիտեանց  
Կեցած են ու պիտի կենան

Անոր խորհուրդներն ու գործքերն  
Թաղից .

Ազգէ մինեւ ազգ յաւիտեան

3 Եւր . Սաղ

1 Թող ըստեղծ  
Բնակիչներէն և



Քրկչին անունը թող օրհնեն  
Ամէն երկիր, լեզուք ամէն :

- 2 Է յախտեան քու գրթութիւնդ,  
Է մինայուն ճշմարտութիւնդ .  
Քու փառքըդ թող միշտ երևնայ,  
Մինչև աշխարհքս վերջանայ :

4 Աստուծոյ փառքն ինչպէս յարմարեալ է  
Սաղ . ԻԹ . (10) :

- 1 Տէրոջը արեւք, ո՛վ ազգք մարդկային .  
Տէրոջը արեւք փառք եւ զօրութիւն .  
Տէրոջը արեւք փառքն իր անունին,  
Ըրէք Աստուծոյ երկրպագութիւն :
- 2 Մեր Տէր Աստուծոյն ձայնն է զօրաւոր,  
Եւ շատ վեհափառ են իր պատգամներն .  
Ամենք կը սարսնն աշխարհքս բոլոր,  
Կը կորսնցընեն իր թշնամիներն :
- 3 Տէրն է յաւիտեան ամենք նստող,  
Եւ ոչո՛ք պիտի ապրի թողութաւրդին .  
Տէրն է զօրութիւն արեւոյ է, օրհնող  
Իրեն զամացող ընտրեալ սուրբ ազգին :

5 Ա.-----ձ էր --ձն գ--րծ+եր--վը գ-------րե--ւ է .  
Սաղ. ԺԹ. (Տ) :

- 1 Երկինք յայտնի կը քարոզեն  
Տէրոջը փառքն ամէն ատեն .  
Օրն ալ աւուր խօսք կը յայտնէ ,  
Գիշերն հանճար միշտ կը պատմէ :
- 2 Լեզու շունին և շեն խօսիր ,  
Անոնց ձայները շեն լսուիր .  
Բայց խօսքերնին ան տեղ կ'երթայ ,  
Ուր որ արևն իր լոյսն կու տայ :
- 3 Տէրոջն օրէնքն է երկնային ,  
Կը նորոզէ մարդոց հոգին .  
Վըկայութիւնն է ճշմարիտ ,  
Կ'ընէ տղէան ըզգօնամիտ :
- 4 Իր կանոններն շխտակ սիրուն  
Սրտից կու տան ուրախութիւն .  
Պատուիրանքներն են շատ պայծառ ,  
Աչաց կու տան լոյս մշտամլառ :
- 5 Անոնք ընտիր են ոսկիէն  
Ախորժելի անոյշ մեղրէն .  
Երբ քու ծառայ զանոնք պ հէ ,  
Մեծ հատուցում պիտի առնէ

6 Ա.-----ձ --Բն--ն է-յ կէ Կէրէ . Սաղ . ՂԷ .  
(8) :

- 1 Տէրն կը տիրէ , երկիր ցընծայ ,  
Շատ կողիներ ու բախանան .  
Մեր փրկութիւնն անկէ կու գայ ,  
Գահն է ամու արդարութեան :
- 2 Արդարութիւնն երկինք պատմեն ,  
Բոլոր ազգեր իր փառքն տեսնան .  
Ամէն մարդիկ ամօթ կըրեն ,  
Որ կուսքերով կը պարծենան :
- 3 Քանզի , ո՛վ Տէր , դուն շատ բարձր ես  
Բոլոր երկրիս մարդիկներէն .  
Շատ բարձրացար եւ շատ մեծ ես  
Բոլոր երկրիս աստուածներէն :
- 4 Ո՛վ Տէրն սիրող բարեպաշտներ ,  
Միշտ ատեցէք ըզյարութիւն .  
Տէրն կը պահէ ամէն սուրբեր ,  
Կու յայ անոնց իր փրկութիւն :
- 5 Արդարններուն լոյս ծագեցաւ ,  
Յայտնուեցաւ ճշմարտութիւն .  
Զբախտութիւնն պարգևեցաւ  
Սրտով ինչ ինչ եղալներուն :

## 7 Փ-----հ-----ի-----ն ----- Ա-----ր-----ն----- (10) :

- 1 Ո՛վ փառաւորեալ Արքայ երկնաւոր ,  
երկնի ու երկրի Տէր և Դատաւոր ,  
Տրկար մարդիկներ կարող չեն երդել  
Գու իշխանութիւնդ մեծ և ահաւոր :
- 2 Տէր , քու զօրութիւնդ պատմել կարող չեն ,  
Շնորհքիդ մեծութիւնն խորհիլ կարող չեն  
Ոչ առ աշխարհիս բոլոր բնակիչք ,  
Եւ ոչ երկինքի սուրբերն ալ ամէն :
- 3 Տէրո՛յր առջեն անթիւ հրեշտակներ  
Գիանալ կարող չեն անոր խորհուրդներն .  
Իրենց պաշտօնն է զայն փառարանել ,  
Ու միշտ կատարել իր սուրբ հրահաններն :
- 4 Այն սուրբ հանդէսին հետ ես ալ կ'ուզեմ  
Որ անձրս քեզի , Տէ՛ր իմ , զո՛հ ընեմ .  
Չնչին ընծաս դուն անտես մի ըներ ,  
Հանէ ընդունիլ զիս՝ երբ քեզ կ'երդեմ :

## Տ Փ---բն---ի---ն --- Ա------ : (Տ . 6 առղ) :

- 1 Աղուսիս պիտի Աստուած դովուի ,  
 Ու երբ մահուամբ իմ ձայնս կարի ,  
 Ալ աւելի պիտի երգեմ .  
 Անոր փառք տարս շունի վախճան ,  
 Զի երբ օրերս հոս լիննան ,  
 Վերն յաւիտեանս պիտի երգեմ :
  
- 2 Բիւր երանի յուսացողին  
 Մեծ Աստուծոյն իսրայէլին ,  
 Տիեզերաց Բարեղծողին .  
 Տէրօջ թ խօսքն է հաստատուն ,  
 Ինքն է Փրկիչն աղքատներուն ,  
 Միշտ խոստմունքներն կը կատարուին :
  
- 3 Աղուսիս ամիշտ պիտի դովուի ,  
 Ու երբ մահուամբ իմ ձայնս կարի ,  
 Ալ աւելի պիտի երգեմ .  
 Անոր փառք տարս շունի վախճան ,  
 Զի երբ օրերս հոս լիննան ,  
 Վերն յաւիտեանս պիտի երգեմ :

## 9 Առտն ինչպէս երկուսն (8) :

- 1 Հոգւով, սրտով պաշտենք զԱստուած,  
 Ինչպէս մեր Տէրն կը պատուիրէ .  
 Կուռք չըպաշտենք ձեռքով շինուած,  
 Ինչպէս նոյն Տէրն մեզ կ'արգիլէ :
- 2 Հոգւով պաշտենք Տէրն բոլորից,  
 Զի է հոգի, լոյս աննշման .  
 Զըծառայենք երկրաստեղծից,  
 Քանզի անոնք են եղծական :
- 3 Կիրք մարդկային, գիւտ մոլութեան,  
 Զըլլան մեզի մէջմէկ աստուած .  
 Կըռասպաշտից չըլլանք նման,  
 Որք ըստեղծուածն կ'ընեն աստուած :
- 4 Ո՞ր էն՝ Աստուած է նախանձոտ,  
 Իր փառքն չըտար զբրօշելոց .  
 Աստուած պաշտելն է փառք, օգուտ  
 Կրկին կենաց, մարմնոց, հոգւոց :
- 5 Պաշտենք զԱստուած հոգւով, սրտով,  
 Զի յոչ ընչէ մեզ ըստեղծեց .  
 Պաշտենք զԱստուած միշտ փառք տալով,  
 Զի փրկութիւն նա մեզ շնորհեց :

**10** Շնորհակալութիւնս Աստուծոյ . (8, 6) :

- 1 Աստուած իմ, երբ հոգիս նայի  
 Ամէն ողորմութեանդ,  
 Ուրախութեան մէջ կ'ընկզմի,  
 Սիրոյ և ցնծութեան :
- 2 Հաղարար շնորհքներ քեզմէ  
 Ամէն օր կ'ընդունիմ .  
 Բայց քու պարգևներուդ մեծն է  
 Այս շնորհակալ սիրոս իմ :
- 3 Բարբ կենացս օրերն երգեմ  
 Տէրոջդ սէրն գրթած .  
 Երկնից մէջ զայն պիտի կրկնեմ  
 Ի մէջ հրրեշտակաց :
- 4 Ես յաւիտեանս ուրախ երգեր  
 կ'ուզեմ քեզի երգել .  
 Չեն բաւական անթիւ գարեր  
 Քու սէրդ փառարանել :

**11** Աստուծոյ -երչ . (8) :

- 1 Հայր ամենուս է Տէր Աստուած,  
 Ողորմութեամբ, սիրով լնցուած :

Առատապէս ինքն է գըթած ,  
Թէ և երկնից մէջ է նստած :

2 Առանց իր բարձրը հրամանին  
Ճնճողուկ մ'անդամ գետին շէյնար .  
Ասանկ գըթած Հօր մը որդին  
Ինչպէս անլախ իրեն շերթար :

3 Միայն մեղքէն թող մենք վախնանք ,  
Այն ատելի է Աստուծոյ .  
Թէ իր պատուէրն պահած չըլլանք ,  
Կ'արժանանանք սաստիկ պատժոյ :

## 12 Ա.-----ձ Ե:Գ-----: Հ-Ի Գ: (8) :

1 Երկնից Աստուածն որ կը պաշտենք ,  
Մեզ բարեկամ ու Հայր ալ է .  
Մեր ուխտն իրեն հատուցանենք ,  
Որ աղօթքնիս ալ վեր ելլէ :

2 Մեր սիրտն իրեն կամաւ զոհենք ,  
Ինքն աղօթքնուս խառ կը հաճի .  
Իր սէրն անհուն՝ գիշերն յիշենք ,  
Թող ինքը միշտ փառաւորուի :



3 Երբ Աստուծոյ դէմ մեղանշենք ,  
 Իբ թողութիւնն սրտանց խնդրենք .  
 Մեզի համար մեռաւ Յիսուս ,  
 Չունինք ուրիշ փրկիչ մը մենք :

4 Գրթած հօր պէս սիրով վառուած՝  
 Մեզաց ներողն ինք կ'ողորմի .  
 Թէ հոս ծնողքէ եմք զրկուած ,  
 Մեզ Հայր անմահ ունիմք յերկնի :

**13** Ս---: Է Ա---: (7. 8 տող) :

1 Սուրբ ես , Սուրբ ես , Սուրբ ես , Տէր ,  
 Եհօվայ , զօրաց Աստուած .  
 Տիեզերք , ամէն բաներ ,  
 Քու զօրեղ խօսքովդ ծընած ,  
 Բոլորափրկդ երբ կեցաւ ,  
 Աչքըդ խիտտ ուրախացաւ .  
 Յայնժամ լսուեցան երգեր ,  
 Սուրբ ես , Սուրբ ես , Սուրբ ես , Տէր :

2 Սուրբ ես , Սուրբ ես , Սուրբ ես , Տէր ,  
 Մեծ Եհօվայ , այժմ և միշտ .  
 Թէպէտ հող , մոխիր ենք , Տէր ,  
 Կը սիրենք պաշտել քեզ միշտ .

Աշխարհէս անարդըւած ,  
 Բայց անկէ մեզ ես փրկած .  
 Միաբան կ'երգենք քեզ , Տէր ,  
 Սուրբ ես , Սուրբ ես , Սուրբ ես , Տէր :

3 Սուրբ ես , Սուրբ ես , Սուրբ ես , Տէր ,  
 Յաղթական զօրքերն կ'երգեն .  
 Եւ փրկեալ անթիւ ազգեր  
 Քեզ պիտի երկրպագեն ,  
 Եւ հրեշտակք , սուրբերն ամէն  
 Տնօթեան ձայն վերցունեն .  
 Միաբան ըսուին երգերն ,  
 Սուրբ է , Սուրբ է , Սուրբ է Տէրն :

14 Շնորհակալութիւնս մերս (10) :

1

Քու սղորմութեանդ , ո՛վ Տէր , կ'ընծայեմ ,  
 Ոչ թէ գիպուածին , ուրիշ մարդոց պէս ,  
 Որ ոչ Հեթանոս ու ոչ Հրեայ եմ ,  
 Այլ Քրիստոնէից ցեղէն ծնւոյ ես :

2

Ի՜նչպէս , Տէր , պիտի որախանային  
 Քու մարգարէներդ , սուրբերդ ալ ամէն ,  
 Թէ այն մեծ բաներն անոնք լրտէին ,  
 Որոնք մեզ բերաւ Քրիստոս երկինքէն :

## 3

Ու Հեթանոսներն պիտի խնդային ,  
 Որոնք քար ու փայտ միշտ կ'երկրապագեն ,  
 Երբ Աստուածաշունչ սուրբ գիրքն տեսնէին ,  
 Հաւատք սորվէին Աւետարանէն :

## 4

Արդ թէ ես անոր չըննազանդիմ ,  
 Ինչպէս իմ աչքերս երկինք վերցընեմ .  
 Հեթանոսներէն անդամ կը դատուիմ ,  
 Անոնք ինծի դէմ կը յարուցանեմ :

**15** Ի՞նչ , Ա՜հ , Ի՞նչ . ( 6 , 6 , 4 , 6 , 6 , 6 , 4 ) :

1 Ի՞նչ , Արքայ հրղօր ,  
 Անունըդ փառաւոր  
 Տուր որ գովենք .  
 Ամենատէր եղող ,  
 Ամէն տեղ միշտ յաղթող ;  
 Եղիբ մեր վրայ տիրող .  
 Քեզ կ'ազաչենք :

2 Ի՞նչ , Յիսուս Փրկիչ ,  
 Եղիբ մեզ պահպանիչ ,  
 Մեզ միշտ օգնէ .  
 Քու օգնութիւնըդ մենք  
 Մեզի պարխաղ ընենք :

Քու վրադ մեր յայն դնենք .  
Տէր , մեզ լըսէ :

3 Իջի՛ր , ո՛վ Սուրբ Հոգի ,  
Եւ հիմա տուր մեզի  
Վկայութիւն ,  
Թէ՛ Տէրն մեզ կը սիրէ .  
Մեր սիրան առ , գուն տիրէ ,  
Մի հեռանաք մեզմէ ,  
Հոգի սիրուն :

4 Ո՛վ դու Երբեակ եւ մի ,  
Մեծ գովութիւնք քեզի  
Անդուլ տրուին .  
Քու փառքըդ տուր որ մենք  
Երկնից մէջ վայելենք ,  
Ու քեզ փառարանենք ,  
Տէր երկնային :

## 16 Աստուծոյ խնայելիք (10) :

1 Աչքդ ամենատես , ո՛վ Տէր իմ Աստուած ,  
Գիշեր եւ ցորեկ մեզ միշտ կը տեսնայ .  
Եւ մեր ամէն գործ ծածուկ գործըւած՝  
Աչքիդ առջին միշտ յայտնի կ'երևնայ :

- 2 Ամէն տեսակ մեղք որ մարդ կը գործէ ,  
 Ամէն գէշ խօսքերն բերնէն ալ ելած՝  
 Գիրքիդ մէջը , Տէր , բոլորն գրուած է ,  
 Ու դատաստանին օրուան է պահուած :
- 3 Քու սուքըդ կ'իյնամ , ո՛վ Տէր , ամբշցած ,  
 Չեմ համարձակիր գէտ ՚ի վեր նայիլ .  
 Ներէ իմ մեղքերս գեռ ես չըմեռած ,  
 Գիրքիդ ալ մէջէն հաճէ , Տէր , արեւլ :
- 4 Աիշէ , Տէր , թէ ինչ մահուան ցաւերով  
 Յիսուս վըճարեց ամէն իմ պարտքերս .  
 Իրեն պատուական մաքուր արխնով  
 Լըւա ու մաքրէ բոլոր իմ ազտերս :

## 17 Աստուծոյ ոգւովն ինչպէս . Սաղ . Ը . (8) :

- 1 Աստուած , Տէր մեր , ի՞նչ փառաւոր  
 է քու անունդ երկրի վըրայ .  
 Անճառ լուսովդ երկինք բոլոր  
 Յաւէժարար կը ցորանայ :
- 2 Երբ կը տեսնեմ երկնից կամար ,  
 Որ է գործք քու ճարտար մատանց ,  
 Պար աստեղաց , լուսինն պայծառ ,  
 Որ քու խօսքովդ են ըստեղծուած ,

3 Ես զարմանաքով յայնժամ կ'ըսեմ,  
Մարդն ո՞վ է, Տէր, որ դուն յիշես .  
Արդեօք այնչափ է մարդ վրսեմ,  
Որ դուն անոր միշտ այց կ'ընես :

4 Քանզի դուն զայն պրտակեցիր  
Իբրու պատուով հրեշտակային .  
Վերակացու դուն զայն դբբիր  
Չեռագործիդ՝ բոլոր երկրին :

5 Արջառ, թռչուն և ձուկ անոր  
Տըւիր որ հընազանդ ըլլայ .  
Աստուած, Տէր մեր, ի՞նչ փառաւոր  
է քու անունդ երկրի վըրայ :

**18** Աստուծոյ զօրութիւնս և կոյն անայնորիցն .  
Սաղ. Թ. (8) :

1 Ո՞վ Տէր, քեզի փառք պիտի տամ  
Բոլոր սրտովս քանի որ կամ,  
Պիտի օրէնքըդ քարոզեմ,  
Ըսքանչելիքդ պիտի պատմեմ :

2 Ո՞վ Տէր, քեզի փառք պիտի տամ,  
Քեզմով միայն ուրախանամ,

Ձի ուղղութեամբ իմ գատն տեսար ,  
Աթոռն նստած , Դատող արդար :

3 Կըռապաշտները պատժեցիր ,  
Անոնց անունը չնջեցիր .  
Անոնց համբաւն ալ աւրեցաւ ,  
Եւ յիշատակն երկրէս վերցաւ :

4 Բայց յաւիտեան Տէրն կը մընայ  
Նստած իր աթոռին վըրայ .  
Չարմանալի արդարութիւն  
Միշտ կը գործէ , և փրկութիւն :

5 Թող աներկբայ քեզի յուսան  
Որոնք անունըդ կը ճանչնան .  
Դուն աղքատին ես ապաւէն ,  
Անոր պաշտպանն ես նեղ ատեն :

## 19 Ա. --- \* Եւ զԵրուսիմէլ : Սաղ . Ի . (10) :

1

Երբ քեզ հանդիպին օրեր նեղութեան ,  
Քեզ պատասխանէ հզօր Եհօվան .  
Անուն Աստուծոյ թող քեզ պաշտպանէ ,  
Եւ իր Սուրբ Հոգին քեզ միշտ ըստօրի :

2

Իրկէ օգնութիւն քեզի երկինքէն ,  
Քեզ զօրացընէ :



Սրախդ ընծաներն միշտ յիշատակէ,  
Բարի խորհուրդներդ գործքով կատարէ,

3

Տէր, քու փրկութեամբդ պիտի միշտ խնդանք,  
Ձի կեանք յախտեան անով կը ստանանք,  
Քու սուրբ խօսքերովդ մենք միշտ կը յաղթենք,  
Ի Տէր յուսալով յառաջ կը քալենք:

4

Ոմանք զէնքերու են ապաւինած,  
Ոմանք ձիերու և հարբստութեանց,  
Բայց մենք մի միայն Տէրոջը անուն  
Յիշենք պիտի միշտ, կանչենք օգնութիւն:

**20** (8) ՏԵՐԸ ԿԸ ԴՆԴԴՆԷ ԻՐ ԶՆՆԷՐԸ.  
Սաղ. ԻԷ. (8, 6).

1 Տէրն է ինծի լոյս, փրկութիւն,  
Ուսկի՞ց պիտի վախնամ.  
Տէրն է կենացս պաշտպանութիւն,  
Ուսկի՞ց պիտի դողամ:

2 Չարերն եկան որ զիս ուտեն,  
Իրենք կործանեցան.



Ես չեմ վախնար թշնամիէն,  
 Զի Տէրս է ինձ պաշտպան:

3 Ես կը խնդրեմ Տէր Աստուծմէն,  
 Իր տանն մէջ բընակիմ.  
 Վայելչութիւնն աչքերս տեսնեն,  
 Եւ գինքը միշտ խնդրեմ:

4 Տէր, քու երեսդ պիտի փնտռեմ,  
 Այնպէս պատուիրեցիր.  
 Տէր, մի ծածկեր երեսդ վըսեմ,  
 Միշտ ինձ պաշտպան եղիր:

5 Թէ որ ծընողքըս երկրածին  
 Իս երեսէ ձըղեն,  
 Յայնժամ իմ Հայրըս երկնային  
 Կ'ըլլայ ինձ ապաւէն:

6 Կը հաւատամ որ Տէրս տեսնեմ  
 Փառքովն արքայութեան.  
 Ես իմ Տէրոջս միշտ կը սպասեմ,  
 Յուսովն եմ անսասան:

**21** (67) Առաջին, երկրորդ, երրորդ, և չորսրորդ.  
 Սաղ. 119. (8 յատուկ):

1 Ո՛վ դուք արդարներ, խնդացէք,  
 Տէրոջ անունին փառք տըւէք:

Փառք տալը ձեզի կը վայրէ .  
ԸզՏէրն սաղմոսով գովեցէք :

2 Տէրոջը խօսքն է գերազանձ ,  
Ճշմարտութիւնով հաստատուած .  
Նա արդարութիւն կը սիրէ ,  
Երկիրս գըթութեամբն է լեցուած :

3 Երկիրս թող վախնայ Տէրոջմէ ,  
Աշխարհըս գողայ միշտ անկէ .  
Քանզի անոր խօսքն է զօրեզ ,  
Մարդոց փուն խորհուրդն կը ցրուէ :

4 Երնեկ ան մարդուն որ Աստուած  
Իր Տէրն և Աստուածն է եղած .  
Երնեկ ան ազգին զոր մեր Տէրն  
Ի ժառանգութիւն է ընտրած :

5 Ահա Տէրն պիտի խընամէ  
Անոնք որ վախցող են իրմէ ,  
Որ անկեղծութեամբ կը յուսան  
Անոր որ զերենք կը փրկէ :

# 22 Փ---բ---ի--- Ա---ծ---, բ---ի--- Սաղ . 17 . (8) :

- 1 Տէրն անդադար պիտի դովեմ,  
Ամէն ատեն բերնովս օրհնեմ.  
Հողիս Տերամբ թող պարծենայ,  
Թող հեզն լըսէ և միշտ ցնծայ :
- 2 Աղքատն կանչեց ու Տէրն լըսեց,  
Իր ցաւերէն ալ ազատեց .  
Ընտրեալներուն միշտ կը խրկէ  
Իրեն հրեշտակն որ պահպանէ :
- 3 Ո՛վ մարդ, վախցիր դուն Տէրոջմէ,  
Զի վախցողին բան պակաս չէ .  
Մեծ մարդիկներ աղքատացան,  
Աստուած փնտռողք հարուստ եղան :
- 4 Երբոր արդարն Տէրոջն կանչէ,  
Տէրն լըսելով ան կը փրկէ .  
Տէրն է մօտիկ կտարած սրտին,  
Ապրեցուցիչ զղջացողին :
- 5 Արդարն ատողն կը պատժուի,  
Իր շարութեամբ կը կորսուի .

Տէրն իր ծառան միշտ կը կանչէ,  
 Յուսացողներն կ'ապրեցընէ :

**22** (13) Աստուած է Կր Փրկեալ :

Սաղ. ԽԶ. (8) :

- 1 Աստուած է մեզ յոյս, զօրութիւն,  
 Մեծ ներդութեան մէջ օգնութիւն.  
 Անոր համար մենք չը վախնանք,  
 Որչափ և մեծ փորձանք տեսնանք :
- 2 Սուրբ Գիրքն իրեն վըտակներով  
 Ուրախ կ'ընէ և ապահով  
 Տէր Աստուծոյ եկեղեցին,  
 Բընակարանն Բարձրեալ Փրկչին :
- 3 Աստուած անոր մէջ կը նստի,  
 Եւ միշտ անոր օգնէ պիտի.  
 Կուսք պաշտողներն թող չըփոթին,  
 Եւ Աստուծոյ ապաւինին :
- 4 Զօրաց Տէրն է Տէր փրկութեան,  
 Մեզի հետ է և օգնական.  
 Մեզ յոյս կու տայ իր Սուրբ Հօգւով,  
 Եւ կը փրկէ իր մեծ շնորհքով :

## 24 Թ-ԻԴ-Ի-ՆԻՒ Ա-ԻԻ-ՆԻՆ, Ն-ԻԼ-ՆԻԳԵԼ-Ն : Սաղ. ԽԷ. (8, 6):

- 1 Ո՛վ դուք ամէն ժողովուրդներ,  
Տէրոջ միշտ ծափ զարկէք.  
Ու ցնծութեան ձայնով երգեր  
Անոր դուք երգեցէք:
- 2 Քանզի Տէր մեր է մեծ Աստուած,  
Արքայ է ամենուն.  
Բարձրեալ փրկիչ, քաւիչ մեզաց՝  
Զգլու՛մ ընողներուն:
- 3 Ժողովուրդներ, ազգեր մեզի  
Աստուած հնազանդեցուց.  
Փառքն Յակոբին շատ սիրելի  
Մեզի ժառանգեցուց:
- 4 Սաղմոս ըսէք դուք ձայնաւոր՝  
Մեր մեծ Թագաւորին.  
Քանզի նա ինքն է Թագաւոր  
Եւ Տէր ամէն երկրին:

## 25 Աստուծոյ ցարդն է ինչ ժամանակս յայնչա նկէն . Սաղ . ԿԸ . (6, 6, 6, 6, 8, 8) :

1 Թող եհովայ ելլէ ,  
Ցրուին թշնամիներն .  
Եւ շուտ իր երեսէն  
Փախչին զինք ատողներն .  
Անոնք մամի պէս թող հալին  
Քու երեսէդ , Տէր , կորսուին :

2 Բայց հաւատարիմներն  
Թող միշտ ուրախ ըլլան ,  
Տէրոջ յուսացողներն  
Անոր առջին ցնծան .  
Սաղմոս երգեն անոր անուանն ,  
Պատրաստ ընեն Տէրոջ համբան :

3 Տէր , երբ ընտրեալ ազգիդ  
Դուն առաջնորդեցիր ,  
Եւ քու ժողովուրդիդ  
Դուն առջեէն գացիր ,  
Սինա առջեւդ շարժեցաւ ,  
Բողբ երկիրն սասանեցաւ :

4 Ո՛վ Տէր , բարձրերն ելար ,  
 Ոստին գերի ըրիր ,  
 Եւ մեզ մարդոց համար  
 Մեժ պարգևներ առիր .  
 Ապաստմբից ալ շնորհք տրուի ,  
 Որ Տէրն անոնց մէջ բընակի :

5 Օրհնեալ ըլլայ մեր Տէրն ,  
 Որ միշտ մեզ կը յիշէ ,  
 Ու թշնամոցն ձեռքէն  
 Սիրով մեզ կը փրկէ ,  
 Կարողութիւն և ոյժ կու տայ .  
 Անոր անունն օրհնեալ ըլլայ :

**26** Ե՛կե՛ք զ՛՛նք Գ՛լ՛՛նք Ի՛նք . Մաղ . 2Թ . (8) :

1 Տէր , գըթութիւնդ պիտի գոյեմ ,  
 Ճշմարտութիւնդ պիտի պատմեմ .  
 Զի փրկութիւնդ մեզ խրկեցիր ,  
 Հաւտարմութիւնդ հաստատեցիր :

2 Մեր Տէրն է մեժ՝ զօրեղներէն ,  
 Երկնից բոլոր հրեշտակներէն .  
 Զըկայ զօրեղ անոր նման ,  
 Լոյս ճշմարիտ ինքն է միայն :

- 3 Քուկդ է երկինք, ամէն երկիր,  
 Բոլոր աշխարհս դուն հիմնեցիր.  
 Թարօր, Հերման, աղդ ամենայն  
 Քու անունովդ պիտի ցնծան :
- 4 Քուկին բազուկդ է զօրաւոր,  
 Աջ ձեռքդ բարձր՝ ահաւոր,  
 Արդարութիւնն հիմն է գահիդ,  
 Ծշմարտութիւնն՝ լոյս սուրբ գէմքիդ :
- 5 Երնեկ մարդոց որ կ'ընդունին,  
 Քու սուրբ ձայնիդ կը հնազանդին.  
 Չի անունովդ միշտ կը ցնծան,  
 Արդարութեամբդ կը բարձրանան :
- 6 Տէրն յաւիտեան օրհնեալ ըլլայ,  
 Չի նա է մեզ Տէր և Արքայ.  
 Հայր և Աստուած, փէմ՝ փրկութեան,  
 Եւ պարգևոց երջանկութեան :

**27** Առնալով զհոգիս զսուրբիցն. Սաղ. 27.  
 (7) :

- 1 Երկնաւոր Տէր թաղաւոր,  
 Մեծափառ և մեծազօր.  
 Միշտ աթոռդ է հաստատուն,  
 Թաւիտեանն Տէր \_ ես դուն :



- 2 Գետերուն ձայնն խիտ մեծցաւ ,  
 Չայներնին շատ բարձրացաւ .  
 Բայց զօրեղ է այն՝ Որ էն ,  
 Ալէժուփ չուրց ձայներէն :
- 3 Քու սուրբ խօսքըդ , ո՛վ Աստուած ,  
 Ճշմարիտ է դերասպանծ .  
 Տէր , քու տանդ , եկեղեցւոյն ,  
 Կը վայլէ միշտ սրբութիւն :

## 28 փ---բ---ն---ի--- Ա---ր---Տ--- Ծաղ . ՂԵ . (Ց) :

- 1 Եկէք խնդանք Տէրոջն առջին ,  
 Չի նա է մեզ կեանք և պաշտպան .  
 Աղաղակենք մեր մեծ փրկչին ,  
 Չի նա է մեզ վէճ փրկութեան :
- 2 Ինչու որ Տէրն է մեծ Աստուած ,  
 Աստուածներուն մեծ թագաւոր .  
 Անոր ձեռքին մէջ է աշխարհս ,  
 Լեռներ , դաշտեր , գանձեր բոլոր :
- 3 Իրենն է ծովն , զայն ինք շինեց ,  
 Եկէք ծրօնք Տէրոջ առջին .  
 Չեռքով ցամաքն ան բստեղծեց ,  
 Տանք գոհութիւն Բստեղծողին :

4 Ինչու որ ան է մեր Աստուած,  
 Մենք ոչխարներ իր արօտին.  
 Անոր խօսքերն են լուսապանծ,  
 Մըտիկ ընենք անոր ձայնին:

## 29 Առաջին գրքի Երկուրորդին Մարդ . ՃԶ . (8) :

- 1 Տէրն օրհնեցէք, զի է բարի,  
 իր գըթութիւնն է յաւիտեան.  
 Տէրոջ գործքերն են սխրալի,  
 Մարդ զայն գովել չէ բաւական:
- 2 Երնեղ անոնց որ կը պահեն  
 Տէրոջ օրէնքն և պատուիրան.  
 Երնեղ անոնց որ միշտ կ'ընեն  
 Արդարութիւն, գործ գըթութեան:
- 3 Տէր, զիս յիշէ, ինչպէս կ'ընես  
 Քու սիրելեացդ. ինձ տես եկուր.  
 Ճշմարտութիւնն դուն կը սիրես,  
 Եւ միշտ քու կամքդ ինձ հասկըցուր:
- 4 Ընտրեալներուդ միշտ հեան ըլլամ,  
 Տեսնեմ քու փառքդ ու վայելեմ:

Խաղաղ սրտով ուրախանամ,  
Կեանք անխախճան ես ժառանգեմ:

- 5 Փրկէ ըզմեզ, ո՛վ Տէր Աստուած,  
Մարդոց մէջէն ըզմեզ թողվէ:  
Մենք միշտ կ'երգենք անունդ գլխած,  
Արդարութեամբ ըզ մեզ փրկէ:

**30** Աստուծոյն սուրբ փրկութիւնն  
Սաղ. ԴԸ. (8, 6):

- 1 Տէրոջն նոր երգ երգենք այսօր,  
Քանզի հրաշքներ ըրաւ:  
Իր սուրբ բազուկն, աջ զօրաւոր  
Մեզ փրկութիւն տրաւ:
- 2 Յիշեց իր մեծ ողորմութիւնն  
Խորացելի համար:  
Մեր Աստուծոյն սուրբ փրկութիւնն  
Տեսաւ բոլոր աշխարհ:
- 3 Տէրոջն առջին ցնծում ըրէք,  
Ամէն երկրի մարդիկ:  
Ուրախութեամբ սաղմա ըսէք,  
Զի փրկութիւն առիք:





4 Ամենուս հաց տուողէն ,  
 Չի ան միշտ է ողորմած .  
 Պարզեներ մեզ բաշխողէն ,  
 Չի Աստուած է շատ գլխածած :

5 Եւ երկնից Տէր Աստուծմէն ,  
 Չի ունի մեծ գլխութիւն .  
 Աշխարհիս մեծ Տէրոջմէն ,  
 Չի կու տայ մեզ փրկութիւն :

### 33 Աստուծոյ գործերն ինչպէս հոգի փութու նախնիս . Սաղ . ՃԼԸ . (8) :

1 Բոլոր սրտով ես քեզ կ'օրհնեմ ,  
 Ո՛վ Տէր Աստուած , Տէր բոլորին .  
 Քեզ սաղմոսներ պիտի երգեմ  
 Թագաւորաց անդամ առջին :

2 Թէպէտ մեր Տէրն է բարձրացած ,  
 Բայց խոնարհներն միշտ կը տեսնէ .  
 Եւ բարձրամիտ մարդն հեռւանց  
 Ան կը ճանչնայ ու կը պատժէ :

3 Թէ որ վշտաց մէջ ալ քալեմ ,  
 Դուն զիս պիտի ապրեցունես .  
 Թշնամիին կըրիցը դէմ  
 Դուն զիս ձեռքովդ պիտի փրկես :

4 Ինծի համար Տէրն կը գործէ ,  
 Ձի գըթութիւնն է յաւիտեան ,  
 Տէր , մի ձըգեր մեզ երեսէ ,  
 Ձեռացըդ գործն է ազդ մարդկան :

34 ֆ-----բ-----բիւն --- Ա-----ծ . Սաղ . ՃԽԶ .  
 ( 6 , 6 , 6 , 6 , 8 , 8 ) :

1 Պատի երգեմք քեզի ,  
 Աստուած իմ թագաւոր .  
 Անունդ ի՞նչ սիրելի ,  
 Գործքերդ ի՞նչ փառաւոր .  
 Քեզ դուրսելու կը փափաքիմ ,  
 Մինչև մահուամբ փառաց հասնիմ :

2 Մարդոց իշխաններուն  
 Ինչո՞ւ համար յուսամ .  
 Մահկանացուներուն  
 Ինչո՞ւ ես հաւատամ ,  
 Շուտով կ'ելլէ անոնց հողին ,  
 Խորհուրդներնին կը կորսըին :

3 Աստուած է որ կոչրին  
 Աչքերը կը բանայ ,





2 Իբ իմաստութիւնն՝ անհուն ,  
 Զօրութիւնն ալ խիստ մեծ է .  
 Կը համրէ թիւն աստղերուն ,  
 Անունովն ալ կը կանչէ :

3 Տէրը խեղճը վեր կ'առնէ ,  
 Կը զարնէ վար հըպարաներ .  
 Հաւտացողը կը փրկէ ,  
 Եւ կու տայ մեծ պարգևներ :

4 Մեր Տէրոջը յուսացողն  
 Միշտ անոր է սիրելի .  
 Իր պատուէրը կատարողն  
 Օրհնութիւն միշտ կ'ընդունի :

## 36 ՅԻՄՆՈՒՆԻ ԱՊՈՍՏՈՒՆԻՆԵՐ . Սաղ . ձԻԸ . (8) :

1 Տէրն օրհնեցէք վեր երկինքէն ,  
 Տէրն գովեցէք բարձունքներէն .  
 Ան օրհնեցէք , ով հրեշտակներ ,  
 Տէր Աստուծոյ բոլոր զօրքեր :

2 Ան օրհնեցէք , արև պայծառ ,  
 Շըքեղ լուսին գիշերափառ .

Ան օրհնեցէք, փայլուն աստղեր,  
 Որ Տէրովմէ էք ըստեղծուեր :

3 Տէրն օրհնեցէք, ո՛վ երկրածինք,  
 Զըրարընակք և ծովայինք,  
 Անասուններ և դազաններ,  
 Սողացողներ և թռչուններ :

4 Թագաւորներ ամէն երկրի,  
 Եւ իշխաններ ամէն ազգի,  
 Բոլոր երկրի դատաւորներ,  
 Երխտասարդ, ազջիկ և ծեր,

5 Թող մեր Տէրովն անունն օրհնեն,  
 Ու ան միայն փառաւորեն .  
 Քանզի իր փառքն է դերասպանծ,  
 Երկնի, երկրի վըրայ տիրած :

37 Աւուրիւն ի մարտիկս գորտաւորութիւն .  
 Սաղ . ճ'ԹԹ . (8 . 6) :

1 Տէրովը նոր երդ երգեցէք  
 Սրբոց մէջ օրհնելով .  
 Իբ ժողովուրդն, ուրախացէք  
 Իրմով միշտ ցնծալով :

2 Թող իսրայէլն ուրախանայ  
 Վասն իր Արարիչին .  
 Աստուածասէրն թող միշտ խնդայ  
 Վասն իր թագաւորին :

3 Զի կը հաւնի օրհնեալ մեր Տէրն  
 Իրեն Տողովուրդին .  
 Փրկութիւնով ալ խոնարհներն  
 Պիտի փառաւորուն :

38 Թ-Դ-Դ-Ն՝ Ա-Դ-Դ-Ն՝ Ժ-Դ-Դ-Ն՝ Ե-Դ-Դ-Ն՝ . Սաղ .  
 ՃԾ . (8) :

1 Դուք օրհնեցէք մեր Տէրն Աստուած  
 Իր սրբութեանն փառացն համար .  
 Տէրն օրհնեցէք՝ Փրկիչն մարդկանց ,  
 Զի են գործքերն մեծ , անհամար :

2 Տէրն օրհնեցէք բոլոր սրտով ,  
 Զի զօրութիւնն է հաստատուն .  
 Տէրն օրհնեցէք մեծ եռանդով ,  
 Քանզի իր փառքն է մեծ , անհուն :

3 Եունչ ունեցող ամէն էակ  
 Թող Տէրն օրհնէ միշտ յաւիտեան ,  
 Փրկչին անունն և յիշատակ  
 Թող միշտ գոյնն ազգ մեր մարդկան :

### 39 Գրեգորիոսի շարժական շարժական . (8, 6) :

1 Ամենաստեղծ Տէր և Աստուած ,  
 Քեզի միշտ փառք կու տամ .  
 Քանզի քեզմէ եմ ըստեղծուած ,  
 Քեզմով կեանք կ'ունենամ :

2 Ունիմ ես բոլոր փառս և պատճառ  
 Քեզի միշտ փառք տալու .  
 Զի ինձ արեւի շքնորհք , հանճար  
 Իմ Տէրը ճանչնալու :

3 Կը փափաքիմ ես միշտ սիրով  
 Փրկիչը օրհնելու .  
 Քանզի Քրիստոս իր արիւնով  
 Մեռաւ զիս փրկելու :

4 Մեզքիս համար ինքզինք զոհեց ,  
 Ինձի նոր կեանք տուաւ .

Գերութենէ գիտ ազատեց,  
Երկնից ժառանգ ըրաւ :

- 5 Աւտի ետ ալ անհուն ըզձիւ  
Կ'երգեմ Աբէլուխան .  
Անմահ Գառին փառք ե պատիւ ,  
Գովեստ է միշտ արժան :

**40** Ա. 7. 2. 2. 2. 2. 2. 2. 2. Սաղ. ԽԲ.  
( 8 . 6 տող ) :

- 1 Արբնթաց եղջերոյն նրման՝,  
Որ ջուրերուն վրտակներուն  
Կը փափաքի ՚ի ծարութեան ,  
Ետ ալ անձամբ յոյժ կաթողին  
Քեզ կը խնդրեմ՝ Տէր փրկութեան ,  
Լըսէ սրտիս հառաչանքին :

- 2 Ետ քու տեսոյդ եմ խանդակաթ ,  
Ե՛րբ գամ պիտի ու երևնամ  
Տէրոջս առջևը գրթառատ .  
Երբոր կ'ըսեն՝ Ո՛ւր է Աստուածդ ,  
Գիշեր ցորեկ ինձ անընդհատ  
Դառն արտասուք է միայն հաց :

- 3 Ո՛հ , կը ցանկամ այն օրերուն ,  
 Որ սուրբ Տաճարըդ կ'երթայի  
 Ուրախութեամբ յոյժ պատարուն .  
 Եւ օրհնութիւն սաղմոսելով՝  
 Պահապանիդ յաւէժ անքուն  
 կը ցանկայի միշտ հոգիով :
- 4 Բայց դուն , անձն իմ , ի՞նչ կը տրամիս  
 Շատ հոգերու մէջ ընկղմած .  
 Ի՞նչ շարունակ կը մնալես զիս .  
 Յուսա 'ի Տէր և առ խրախոյս .  
 Դեռ ժամանակ քու ձեռքդ ունիս .  
 Մի խըռովիր իբրև անյոյս :
- 5 Օրհնէ զԱստուած բոլոր սրտով ,  
 Որ քեզ կարող է բրժշկել  
 Իր քաղցր աչքին հայեցուածքով .  
 Տէ՛ր , 'ի խորոց սրտիս կը զգամ  
 Սաստիկ փափաք մեծ եռանդով ,  
 Որ տեսութեամբդ ուրախանամ :

**41** Ա. --- 7. 4. 7. 4. 7. 4. Սաղ . ԿԳ . (8) .

- 1 Դուն ես իմին Աստուածս , ո՛վ Տէր ,  
 Քեզ կը փնտռեմ ցորեկ գիշեր .

Հողւով՝ մարմնով քեզ կը ծարւիմ,  
Ձի աս չոր տեղս շուր չեմ դաներ :

2 Ո՛վ Տէր, միշտ քեզ պիտի գովեմ,  
Չե՞ս քերս քեզի կը վերցընեմ,  
Քեզ կը յիշեմ մահճիս մէջն ալ,  
Գիշերն վըրադ կը մըտածեմ :

3 Քանզի եղար ինձ օգնական,  
Երբ յոյս դըրի քու սուրբ անուան,  
Քեռոցրդ տակ ուրախացայ,  
Հոն իմ ոսկերքս հանգիստ գըտան :

4 Թող իմ հողիս քեզ հետևի,  
Քու օրէնքիդ հընազանդի .  
Չօրեզ ձեռքովդ դիս միշտ պահէ,  
Ո՛ր թշնամի ինձ չըդըպչի :

42 Ա-----նոյ Կ----- Կ----- Կ----- . Սաղ . 27 .  
(10) .

## 1

Բընակարաններն մեծիդ Աստուծոյ,  
Ո՛ր ես Տէր գօրաց, ինձ շատ են հաճոյ .  
Քու սուրբ սըրահիդ հողիս կը ցանկայ,  
Ու սիրտըս քեզմով ըստէս կը ցնծայ :

2

Ո՛հ, ի՞նչ երջանիկ են տանդ բընակիւնք,  
 Որ են անդադար անուանըդ գովիւնք.  
 Երնե՛կ անոնց որ քեզմով կ'ուժովնան,  
 Որոնց սրտին մէջ օրէնքըդ կը մնան:

3

Մէկ օր սրահիդ մէջ թէ որ անցունեմ,  
 Հազար օրերէն ես լաւ կը սեպեմ.  
 Քու տանդ սեմին վրայ կ'ուզեմ միշտ կայնիլ,  
 Քան թէ շար մարդոց պաշատը նստիլ:

4

Ձի Տէրն է ինձի արև ու փահան,  
 Ան փառք և շընորհք կու տայ յաւիտեան.  
 Հաւատք ունեցողն կ'առնէ փրկութիւն,  
 Ու Տէրն փնտռողին կ'ըլլայ բարութիւն:

### 43 Աստուծոյ յաւատընէն . Սաղ . ՃԻԳ . (7) :

1 Գէպ ՚ի քեզ կը վերցունեմ  
 Իմ աչքերըս, ո՛վ Աստուած .  
 Ձի ամէն բան կը սպասեմ  
 Լոկ քեզմէ, ո՛վ Տէր բարեաց :

2 Ձի ինչպէս աչք ծառային  
 Իր տիրոջը կը նայի,  
 Եւ ինչպէս որ աղախին  
 Իր տիկնոջ ձեռքն կը հայի,



3 Ճիշդ այնպէս ալ աչքերնիս ,  
 Ո՛վ Աստուած , քեզ կը նային .  
 Մինչ մեզի դուն ողորմիս ,  
 Եւ ծառայքըդ փրկըին :

4 Ողորմէ , Տէր , ողորմէ ,  
 Զի մեզ անարգանք ծածկեց .  
 Գոռողները դուն յաղթէ ,  
 Զի մեզ նախատինք պատեց :

44 Ա-դ-...-ը -...-ի-դ և -...-ի-դ է . Սաղ .  
 ... ճլթ . (8) :

1 Ո՛վ Տէր , դուն զիս միշտ կը քննես ,  
 Իմաստութեամբդ իս կը ճանչնաս .  
 Նատերս՝ ելլերս դուն միշտ զիտես ,  
 Միտքըս հեռուանց կը հասկընաս :

2 Ես ո՞ւր երթամ քու Հոգիէդ ,  
 Որ տիեզերքն է տարածուած .  
 Ես ո՞ւր փախչիմ քու երեսէդ ,  
 Որմէ բան մ'ալ չէ ծածկըւած :

3 Թէ որ երբէք երկինք ելլեմ ,  
 Դուն հոն ներկայ կը գտնուիս .  
 Թէ որ դժոխք մահիճա ընեմ ,  
 Ահա հոն ալ կ'ելլես առջիս :

- 4 Ես փառք կու տամ, ս'վ Տէր, քեզի,  
 Որ զիս ըրիր ահեղ կերպով.  
 Գործքերդ են շատ զարմանալի,  
 Որոնք գիտցայ հաճութիւնով:
- 5 Տէր, զիս փորձէ և սիրտս քննէ,  
 Իմ խորհուրդներս բոլոր ճանչցիր.  
 Թէ որ ճամբաս թիւր ու շար է,  
 Առաջնորդէ ճամբուդ ընտիր:

45 Ա. Եւ + Եւ. (6, 4, 6, 4, 6, 6, 4):

- 1 Ա. մօտ ըլլամ, ս'վ Տէր,  
 Ա. մօտ քեզի.  
 Թէ և ճամբաս ըլլայ  
 Գառն, ցառալի,  
 Միշտ աղօթեմ պիտի,  
 Ա. մօտ ըլլամ քեզի,  
 Ա. մօտ քեզի:
- 2 Թէ և թափառական,  
 Գիշեր ստեն,  
 Մութ տեղ քարի մը վրայ  
 Իմ գլուխս դրնեմ,  
 Երազներուս մէջ, Տէր,  
 Ա. մօտ ըլլամ քեզի,  
 Ա. մօտ քեզի:

3 Սանդուղ մը հոն տեսնեմ  
 Գովէդ իջած,  
 Ամբիժ հըրեշտակներ  
 Վրան ալ կայնած,  
 Որ աչք ընեն ինձի  
 Ալ մօտ ըլլալ քեզի,  
 Ալ մօտ քեզի:

4 Գունէս ելած՝ ես քեզ  
 Պիտի դովեմ,  
 Ու խիտտ վիշտէս բեթէլ  
 Պիտի շինեմ,  
 Որ տառապանքներովս  
 Ալ մօտ ըլլամ քեզի,  
 Ալ մօտ քեզի:

5 Երբոր ուրախ թեով  
 Ես վեր թռչիմ,  
 Ասողէն ու արեւն  
 Երբոր անցնիմ,  
 Հողիս երգէ պիտի,  
 Ալ մօտ ըլլամ քեզի,  
 Ալ մօտ քեզի:



Յ Ի Ս Ո Ի Ս Ք Ր Ի Ս Տ Ո Ս

46 ՅԷ՝----- Է՝-----Է՝ (Ց, 7 յատուկ) :

"ՈՒ ԵՆՈՐ ԵՆՈՒՆ ՄԸ ՏՈՒՆԻ ՈՐ ԵՄԷՆ ԵՆՈՒՆԷՆ  
ՎԵՐ Է" :

- 1 Այնպէս անուշ անուն չըկայ ,  
 Չըկայ այնպէս սիրուն մը ,  
 Ինչպէս ծընանեղէն առաջ  
 Փրկչին տրուած անունը :  
 Փափաք ունինք մեր Տէրն տեսնել ,  
 Տեսնել մեր Հօրը տունը .  
 Այնպէս անուշ անուն չըկայ ,  
 Ինչպէս Յիսուս անունը :
  
- 2 Հրեշտակն իջաւ . « Յիսուս » , ըսաւ ,  
 « Դընեա անոր անունը ,  
 Քանզի մահէն պիտի փրկէ  
 Բոլոր իր ժողովուրդը » :  
 Փափաք ունինք , և այլն :
  
- 3 Խաչին վըրայ ալ գըրեցին  
 Այս պատուական անունը ,

Որ մարդ տեսնէ ինչո՛ւ համար  
 Միշտ զինքը սիրելու է :  
 Փափաք ունինք , և այլն :

4 Ու հիմա Հօրը քոյն նստած ,  
 Ինքն է մեր Բարեխօսը .  
 Ուտախ սիրենք ու միշտ դուրենք  
 Մեր Տէրն Յիսուս Քրիստոսը :  
 Փափաք ունինք , և այլն :

47 Գ:Է:Գ:Է: Գ:Է:Գ:Է:Գ:Է:Գ:Է: ( 8 , 6 ) :

1 Քաղցր է անունը Քրիստոսի  
 Հաւատացեալ սրտին .  
 Անով իր վախն կը խափանուի ,  
 Իր վէրքն կը սրբըլին :

2 Կը բըժշկէ խոցուած հոգին ,  
 Տրամեալն ու բախ կ'ընէ .  
 Կենաց հաց է անօթիին ,  
 Յողնածն հանդիստ կ'ընէ :

3 Անով աղօթքըս կ'ընդունուին ,  
 Թէ և մեղքով լեցուած .  
 Թէ և դեւերն հակառակին ,  
 Տէրն զիս է ընդունած :

4 Դուն, Տէր, դիտես սէրս ինչ պաղ է,  
 Գործքով ալ շատ թոյլ եմ.  
 Բայց երբ իմ աչքըս քեզ տեսնէ,  
 Քեզ լաւ կը ծառայեմ:

5 Հոս, Տէր, լեզուս պիտի պատմէ  
 Քու սէրդ ամէն մարդուն.  
 Թող քաղցր անունդ միտի՛ծարէ  
 Զիս, Տէր, մահուան ժամուն:

48 ԲԻՆԻՄԻՆԻ ԿՆԻՍԻՄԻՆԻՆԻ (Տ, Տ, 6.  
 6 տող):

1 Ո՛հ, թէ կարող ես ըլլայի  
 Փրկչին փառացն անշափելի  
 Մէկ մասն միայն պատմել,  
 Երկինք պիտի շուտ թռչէի,  
 Հետ հրեշտակաց ըսկըսէի  
 Անոր քննար դարնել:

2 Այն սուրբ արիւնն որ ինք թափեց,  
 Ու մեղապարտ հոգիս փրկեց,  
 Պիտի ես երգէի.  
 Հոգիս անոր խիտ դերապանծ  
 Արդարութիւնն վրբան հաղած՝  
 Հոն միշտ պիտի փայլի:

3 Մեր մեծ Միջնորդն՝ ասթուն նստած,  
վըսեմ պաշտօններովն հազուած,

Պիտի ես երգէի.

Իբ փառքն անհուն՝ աստուածային

Ամէն դարուն, երկրին, ազգին

Պիտի միշտ պատմէի :

4 Բայց շուտ ան օրն պիտի ծագի,

Ու Տէրը զիս պիտի տանի,

Ուր զինք պիտի տեսնեմ.

Հոն իբ առջևն պիտի կայնիմ,

Հոն յաւիտեանքս օրհնուիմ,

Եւ միշտ իբ սէրն երգեմ :

49 ՔՐԻՍՏՈՍ ԿՐԻՍՏՈՍ (10) :

1

Երգեն հրեշտակները փառք Աստուծոյ,  
Նոյնպէս ամէն սիրտ փառք տայ գահու  
թեամբ :

Մեզ արդարութեան ծագեց շող լուսոյ,

Եւ խաղաղութիւն փրկչին ծըննդեամբ :

2

Երգեն սուրբ հրեշտակք, Մարդոց հաճու  
թիւն :

Նոյնպէս ամէն մարդ գոչէ մեծաձայն.

Մէկդի թող երթան ոխն՝ ատելութիւն,

Սէրն՝ խաղաղութիւն հաստատ միշտ մընան :

4

3

Փառք մեծ Աստուծոյ և իբր Որդիին ,  
 Ծրնաւ մեզ մանուկ՝ որ մեր Փրկիչն է .  
 Ներում՝ հաշտութիւն բերէ երկնային ,  
 Սիրով ժողովուրդն կը կառավարէ :

4

Փրկչին գալատեանն , որուն կը սպասուէր ,  
 Ամէն սրտերն ալ թող տեղ պատրաստեն .  
 Երգեն դահութեամբ տղայքն ալ երգեր ,  
 Փրկիչ Աստուծոյն սէրն թող քարոզեն :

**50** Ք:Ի-Կ-Կ-Ի Գ-Ը-Կ-Կ-Ը Ե ԻՂԻ-Ն-Ն-ԻԻ-Ն-Ը . ( 8 , 6 ) :

1 Ահա մեզի մանուկ ծրնաւ ,  
 Ծրնաւ զաւակ Դաւթի .  
 Մեզի որդի մը տրուեցաւ ,  
 Ուրախութիւն երկրի :

2 Իբր Հօրը աթոռին վըրայ  
 Փառքով պիտի նստի .  
 Պիտի ելլէ ու բարձրանայ ,  
 Ըլլայ շատ անուանի :

3 Պիտի կոչուի Խորհրդակից ,  
 Հայր յաւիտենական ,  
 Հըզօր Աստուած և Տէր երկնից ,  
 Խաղաղութեան Իշխան :



4 Իր տէրութիւնն է հաստատուն ,  
 Անհուն և անփախճան .  
 Իշխանութեանը մեծնալուն  
 Պիտի շըլլայ սահման :

5 Արքայութիւնըն ֆրիատոսի ,  
 Ո՛վ Տէր , շուտով թող դայ .  
 Եւ ցնծութեամբ թող կանչընի  
 Ամէն տեղ Ովսաննա :

# 51 ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵԸ . (8) :

1 Չարթիր , հողիս , ուրախ երգով ,  
 Քու մեծ Փրկիչդ օրհնէ փառքով .  
 Չի յոյս միայն է անյոյսին ,  
 Իր սէրը , ո՛հ , ի՞նչ կաթողին :

2 Իս կործանած ինկած տեսաւ ,  
 Բայց սիրելէն շըդագրեցաւ .  
 Իս կորսըւածս ինք ազատեց ,  
 Իր սէրը , ո՛հ , ո՛րչափ է մեծ :

3 Չօրք թշնամեաց՝ երկիր՝ Դըժոխք  
 Թէպէտ ճամբուս են խափանողք ,

Բայց անվրտանգ զիս կ'անցունէ,  
Իր սէրը, ո՛հ, միշտ կը յաղթէ :

4 Երբ նեղութիւնք ամպի մը պէս  
կը որոտան յոյժ սաստկապէս,  
Ան կը կենայ միշտ մօտ ինձի,  
Իր սէրը, ո՛հ, ի՞նչ ցանկալի :

5 Շատ հեղ կը զգամ իմ շար սրտէս,  
Որ հեռանալ կ'ուզէ փրկչէս .  
Թէպէտ շատ հեղ ալ զինք մօռցայ,  
Իր սէրը, ո՛հ, միշտ կը մընայ :

6 Եւ երբոր մութ ձորէն անցնիմ,  
Բոլոր ուժէս որ լքանիմ,  
Վերջին շունչիս հաճէ, Տէր իմ,  
Որ քու սիրոյդ երգով մեռնիմ :

7 ԵԱԵԼ 'ի վեր ունիմ ես տենչ  
Ան լուսափայլ աշխարհն անվերջ .  
Բերկերի, երգել 'ի լոյս անչէջ  
Քու սէրըդ, ո՛հ, երկինքին մէջ :

## 52 Գեթեմանի . (8, 8, 6, 8, 8) :

- 1 Ահա կեդրոն ձորէն կ'անցնի  
Տրամած փրկիչը սիրելի  
Դէպ 'ի Գեթեմանի .  
Իր գէմքն է ի՞նչ Աստուածային ,  
Բայց վրան ցաւ՝ վիշտ կը տեսնուին :
- 2 Մարդուս մեղքերն կը վերցունէ ,  
Կրկին կրկին աղօթք կ'ընէ  
Ի մէջ Գեթեմանի' .  
«Ով Հայր , թէ որ է կարելի ,  
Թող առ դաւաթն ինձմէ անցնի» :
- 3 Իր հեղութիւնն ի՞նչ սիրելի ,  
Իր Հօրն կամքին կը խոնարհի  
Ի մէջ Գեթեմանի' .  
«Ով Հայր , իմ կամքըս չէ , հապա  
Միայն քու կամքըդ թող ըլլայ» :
- 4 Հայրն ալ լրտեց , ու իր Որդին  
Սուրբ հրեշտակներն զօրացուցին  
Ի մէջ Գեթեմանի' .  
Յաւոց դաւաթն առաւ , յարեաւ ,  
Կրկին ուրախութեան հասաւ :

5 Թէ որ վիշտեր մեր վրայ հասնին ,  
 Ու տառապանք վերէն տրուին ,  
 Դէպ 'ի Գեթսեմանի  
 Նայինք , մեր Տէրը հոն տեսնենք ,  
 Անոր նրման աղօթք ընենք :

53

Ք Ե Լ Վ Ս Տ Ո Ս Ք Բ Ի Ս Տ Ո Ս  
 (7. 6 տող) :

- 1 Գեթսեման պարտէզն մրտէք ,  
 Դուք՝ դեէն փորձըւածներ .  
 Չեր Տէրոջը վէճն տեսէք ,  
 Ան խիստ ահաւոր գիշեր .  
 Իր ցաւէն ետ մի քաշուիք ,  
 Որ աղօթք ընել սորվիք :
- 2 Եւ գացէք մինչ այն ատեան ,  
 Ուր փառաց Տէրն կ'անարգուի .  
 Իր վշտին ինչ կայ նրման ,  
 Ինչ ցաւով սիրան կը լեցուի .  
 Դուն ալ մի քաշուիր ցաւէն ,  
 Խաչք քաշել սորվէ իրմէն :
- 3 Գողգոթան 'ի վեր ելէք ,  
 Հոն անոր ոտքերն գրկած՝

Աս հըրաշքն անհուն տեսէք,  
 Աստուծոյ Որդին զոհուած .  
 «Կատարեալ է՞» կը գոչէ .  
 Սորվեցէք մեռնիլ՝ անկէ :

4 Գերեզմանը մօտեցէք,  
 Ուր մարմինը թաղուեցաւ .  
 Հոն դատարկ է, դուք տեսէք,  
 Ո՞վ զՏէրն անկէ առաւ .  
 Տէրն յարեաւ ու համբարձաւ,  
 Մեզ ալ նոյն խոստմունքը տուաւ :

## 54 ՓԷՓ՝ 7-ի . (7, 6, 8 տող) :

1 Ով սուրբ գըլուխ, ինչո՞ւ ես  
 Յաւի մէջ ընկզմած .  
 Ինչո՞ւ վերաւորուած ես,  
 Եւ փուշերով պսակուած :  
 Ով սուրբ գըլուխ, փառքով ըզ-  
 երկինք կը լեցունես .  
 Բայց հոս արիւնալիցրդ,  
 Դուն պատուական ինձ ես :

2 Ո՞հ, ի՞նչ ցաւով լեցուած ես,  
 Ի՞նչ անարգութիւնով .

Տրամուխիւնով պատած ես ,

Բայց վերջը ցնծումով .

Ամէն քու ցաւն ու դուխը

Չարերը կը փրկէ .

Մերն էր բոլոր յանցանքը ,

Պատիժն ան կը քաշէ :

3 Ի՞նչ խօսք , ո՛վ իմ փրկիչըս ,

Գտնեմ քեզ օրհնելու ,

Որ հաճեցար իմ անձըս

Մահուամբողջ փրկելու :

Տէր , տուր որ շրնորհքովդ

Հաւատարիմ մընամ ,

Եւ յաւիտեան քու սէրդ

Բընաւ ես շրմունամ :

4 Չըլայ որ քեզ թողում , Տէր ,

Եւ ոչ քեզմէ թողու իմ .

Հաւատքս քեզ կ'ընդունէ , Տէր ,

Եւ միշտ քուկդ է սիրտ իմ :

Երբ ըսպառի իմ կեանքս ,

Ու մահ ինձի հասնի ,

Տուր որ հասնին ցաւերքս ,

Հողիս ալ քովդ հանդչի :

## 55 ՔՐԻՍՏՈՍԻ ԿՐԻՍՏՈՍԻ ԴԵՆՆԵՆ (8) :

- 1 Յիսուս Քրիստոս տեսայ քուկին  
Մահուան ցաւերդ , սոսկաց հողիս .  
Այո , մեռար դուն կամովին  
Վասն ապստամբ մեղաւորիս :
- 2 Դուն տանջեցար , և բընութիւն  
Ողբերգական հեծեց ձայնով .  
Արևն ծածկեց իր լոյսն փայլուն ,  
Սուրբերն լացին քու մահդ ողբով :
- 3 Քու մահըդ , Տէր , զոհ սրբազան ,  
Միշտ աչքերնուս ըլլայ ներկայ .  
Քանցի արիւնքդ պատուական  
Մերին մեղքերն կը լըւանայ :
- 4 Յիսուս Քրիստոս , թող անդադար  
Սրտիս ազդէ սէրդ գերապանծ .  
Դուն մեր մեղաց համար մեռար ,  
Միայն դուն ես փրկիչ Աստուած :

## 56 Յ-յ Գր Դե Ի Ե-Վ-Ն Գր Ե-Դ-Մ (7 · 8 տող) ։

- 1 Ո՛վ խաչեալ Փրկիչ Քրիստոս ,  
 Որ սիրող ես իմ հողւոյս ,  
 Քեզ միայն կը պաղատիմ ,  
 Ողորմէ ինձ եղկելոցս .  
 Թող ան շուրքն և արխնն  
 Որ կողէդ , Տէր , կը վազէ ,  
 Հողիիս ամէն մեղքերն  
 Մաքրելով իս բժշկէ ։
- 2 Արցունքներս թէ և վազեն  
 իմ աչքէս առատապէս ,  
 Նախանձով թէ և իմ սիրտս  
 Միշտ վառի խիտ սաստկապէս ,  
 Ո՛հ , կարող չեն զիս սրբել  
 իմ մեղքէս և զիս մաքրել ։  
 Այլ , Փրկիչ իմ , դուն միայն՝  
 Դուն կրնաս մեղքերս քաւել ։
- 3 Երբ հասնի իմ շունչրս , Տէր ,  
 Երբ մահուամբ աչքերս գոցեմ ,  
 Անժանօթ երկիրն հասնիմ ,  
 Ա՛թոռիդ վրայ քեզ տեսնեմ ,



Ով խաչեալ Փրկիչ Գրիստոս,  
Երբ ես քու առջից կայնիմ,  
Տուր ինձի, Տէր, կ'աղաչեմ,  
Որ գրկից մէջ ես հանդչիմ:

## 57 Քրիստոսի Իմաստները. (Ց) :

- 1 Երբ ան խաչին ես կը նայիմ,  
Ուր որ մեռաւ փառաց Տէրն իմ,  
Իմին մեծ շահս մնաս կը սեպեմ,  
Հըպարտութիւնս ալ կ'անարգեմ:
- 2 Ձը պարծենամ ուրիշ բանով,  
Այլ թէ միայն Փրկչի մահով.  
Բոլոր ոչինչ փափաքս իմին  
Ես կը զոհեմ իր արիւնին:
- 3 Տեա իր գլխէն՝ ձեռքէն՝ ոտքէն  
Սէր՝ տրամութիւն մէկ կը վազեն.  
Ե՛րբ միացան ասոնք ասանկ,  
Ի նշպէս ըրին փուշերն պըսակ:
- 4 Փառքն արքայից ինձի տրուէր,  
Ան շատ պզտիկ պարգև մըն էր.  
Ասանկ Տէրոջ անհուն սիրոյն  
Արժան է տալ իմ կեանքս ողջոյն:

## 58 Քրիստոսի հանձնը զբնութիւնը : (Ց, 6) :

1 Մէկը տեսայ փայտէն կախուած ,  
Նեղեալ արիւնլըւայ :

Ինձ նայեցաւ աչքով տրտմած ,  
Խաչին երբ մօտեցայ :

2 Անշուշտ բընաւ ես չեմ մտնար ,  
Ի՞նչ նայուածքով կ'ըսէր ,

Իմ մահըս է քեզի համար ,  
Թէպէտ ինք չէր խօսեր :

3 Ո՞հ , ըզզացի տրտմութիւնով  
Իմ մեղքս , ու շատ լացի :

Տեսայ որ ես մեղանչելով  
Իմ Տէրըս մեռցուցի :

4 Աւա՛ղ , վայ ինձ , ալ յոյս չունիմ  
Լալով ես կանչեցի :

Ո՞ր կողմ երթամ , որո՞ւ փախչիմ ,  
Զի Տէրն ըսպաննեցի :

5 Երկրորդ անգամ գրթած աչքով  
Խաչէն ինձ նայեցաւ :

Եւ իր շընորհօքը յայտնելով՝  
Սիրով ինձի ըսաւ ,

6 “Ձրի շնորհօքով ես կը քաւեմ՝  
Մեզքերըդ , սիրելիս .  
Յօժար կամքով մահ՛ յանձն կ’առնեմ ,  
Որ յաւիտեան ապրիս” :

## 59 “Ա՛հ՝ Բ՛ն՝ Կ՛- - - Ի՛- - - Լ՛ է” . ( 8 , 7 , 4 ) .

1 Լըսեցէք սիրոյ բարբառը .  
Ազազակ Գողգոթայէ  
Կը պատուէ պինտ ապառաժը ,  
Երկրաշարժ , խաւար կ’ընէ .  
“Կատարեալ է” ,  
Հողեվար Փրկիչն դուէ :

2 “Կատարեալ է” , - ի՛նչ հաճոյք տայ ,  
Ո՛հ , այս խօսք յոյժ սրխրալի .  
Օրհնութիւն անհուն յերկնից դայ  
Շընորհօք Տէր Յիսուսի .  
“Կատարեալ է”  
Հողեվարն , ս’վ սուրբք , խօսի :

- 3 Սերովբէք, ձեր քընարները՝  
 Միացէք նորէն զարնել.  
 Քաղցր երգով երկինքն, երկիրը  
 Թող օրհնեն զԷմմանուէլ.  
 Ալէլուիա,  
 Փառք Գառին, ուղեց մեռնել.

## 60 Խ-ԷՆ Գ-Ի Զ-ԳԷԷ (8, 7).

- 1 Արչափ քաղցրը է այն ժամը,  
 Որ խաչին առջև կենամ.  
 Կատարեալ խաղաղութիւն մը  
 Քրիստոսի մահէն կ'առնեմ:
- 2 Հոն սիրով՝ ցաւով լեցուած եմ,  
 Իմ արցունքըս կը վազեն.  
 Հաւատքիս մէջ հաստատուած եմ,  
 Կեանք կ'առնեմ իր մահուանէն:
- 3 Ո՛հ, առ տեղըն ի՛նչ օրհնեալ է,  
 Երբ խաչիդ տակ կը նստիմ.  
 Գութն Աստուածային փայլած է  
 Շնորհալի աչքէդ, Տէր իմ:

4 Հոս նստած թող նայիմ մէյմը  
 իր զարմանալի սիրոյն .  
 Եւ իր պատուական արեամբը  
 Գառնայի ես Աստուծոյն :

61 Յ-Ի-Ս-ՈՒ-Ս Է Հ-Ք-Ի-Ս-Տ-ՈՍ . (7) :

1 Հրեշտակներ , քարն վեր առէք ,  
 Այդ որսէդ քաշէ , մահ , ձեռք .  
 Տես , անմահ ծաղկահասակ  
 Մեռելոց յարեաւ արագ :

2 Յաղթողին , սուրբք , նայեցէք ,  
 Համբառնայ յերկինս , տեսէք .  
 Խումբք երկնից , 'ի մէջ ճամբուն  
 Մարմնացեալ Տեառն առք ողջոյն :

3 Կը բանայ երկինք դուռն լայն ,  
 Որ փառքով անցնի հսկայն .  
 Գահգ բազմէ , Արքայդ փառաց ,  
 Քուկդ է տէրութիւնն անանց :

4 Գովեցէք , դասք երկնային ,  
 Զայն . զարկէք ձեր քնար ոսկին .  
 Երգեցէք յոյժ վսեմ երգեր  
 Բիւրք բիւրուց լեզուօք առ Տէր :

5 Փառք պատիւ Էմմանուէլին,  
Տէր, փրկանք, Միջնորդ մերին,  
Հռչակուն երկրիս ծայրեր  
Սուրբ անուանն օրհնութիւններ :

## 62 ՅԻՄՆԱՆ ԿԵՆՅՈՒՄ (7) :

1 Տէր Յիսուս, Էմմանուէլ,  
Մեզ աղբիւր կենաց բացիր,  
Հողինուս համար մեռնել  
Եւ խաչուիլ դուն յանձն առիր :

2 Սուրբ կողիդ արիւնք, Տէր,  
Աղբիւրի պէս որ վազեց,  
Չար աւազակին մեղքերն  
Կատարելապէս սրբեց :

3 Ո՛վ Գառն Աստուծոյ, մաքրէ  
Հողինիս ան աղբիւրովն,  
Կ'աղաչենք, Յիսուս, քառէ  
Մեղքերնիս ան արիւնովն :

## 63 Ա.ՔԻՒՐ (Ց, 6) :

- 1 Տէր Յիսուսի երակներէն  
Աղբիւր մը կը յորդէ  
Արեամբ լեցուած . մեր մեղքերէն  
կը լուայ ու կը մաքրէ :
- 2 Խաչին վըրայ խեղճ աւազակն  
Երբ ան աղբիւրն տեսաւ ,  
Չարչարանացը ժամանակն  
Խիտ շատ ուրախացաւ :
- 3 Ասոր նըման թէպէտ ըլլամ  
Շատ շարագործ , ես ալ  
Նոյն աղբիւրին ջրովն կրնամ  
Լուացուիլ՝ մաքուր ըլլալ :
- 4 Այն փրկարար աղբիւրն տեսայ ,  
Եւ տեսներէս ՚ի վեր  
Իմ գովութեանքս առարկայ  
Եղաւ քու սէրդ , ով Տէր :

5 Ու երբ հոս դովեւէն դադրի  
 Մահուամբ տրկար լեզուս,  
 Երկնից մէջ սէրդ ալ աւելի  
 Երգեմ, ով Տէր Յիսուս :

## 64 ԲԵՆԵՐՈՒՄ ԴԵ ԴՆԵՅՆ ԿՈՒՄԵՆՏԸ . (8) :

- 1 Որչափ արիւն որ թափուեցաւ  
 Հրրէական հին զոհերէն ,  
 Մեղքերն մաքրել կարող չեղաւ ,  
 Կամ ազատել ըզմարդ խղճէն :
- 2 Միայն փրխառոս՝ Գառն Աստուծոյ ,  
 Որ յանձն առաւ ըզմահ անպարտ ,  
 Մեզ կը սրբէ մեզաց յազոտոյ  
 Պատարագաւն անհամեմատ :
- 3 Տէր , թող նայիմ ես հաւատքով  
 Այն քաշական պատարագին ,  
 Երբ մեղքերէս հեռանալով  
 Կը զղջանամ յոյժ լալազին :
- 4 Ով իմ հողիս , դարձիր ու տես  
 Աստուածորդին խաչէն կախուած  
 Քեզի համար շարի մը պէս՝  
 Քու մեղքերով ըրդ տանջուած :



5 Եկէք, փառք տանք ուրախ ձայնով  
 Այն Գառնուկին որ մեզ սիրեց՝  
 Իր փրկարար սէրն երգելով,  
 Որ անէժքէն մեզ ազատեց :

65 Մէջ հօգեւ հիւանդ--նիւնդ--ն ԿՅ ԲԻՆԸ  
 Ք:Է--դ-- է . (Ց , 6) :

1 Ով Տէր, Փրկիչ ողորմութեան,  
 Գրթա ողորմելոյս .  
 Քու սուրբ վիրօքդ Աստուածական  
 Բուժեա ըզխոց Հոգւոյս :

2 Երբ յարձակին Հոգւոյս վըրայ  
 Պիղծ մարմնական կիրքեր,  
 Ինձ Սուրբ Հոգիդ պաշտպան ըլլայ .  
 Անցոյս զիս մի ձըգեր :

3 Երբոր ընդդէմ սուրբ հաւատոյս  
 Չիս խորհուրդներ տանջեն,  
 Դուն Սուրբ Հոգւովըդ տուր ինձ լոյս,  
 Որ զիս չըխափանեն :

4 Երբոր փորձանք՝ աղքատութիւն  
 Ինձի կը պատահին,  
 Դուն միտքքս բեր զաղքատ քու տուն,  
 Մըսուր Բեթլէհէմին :

5 Երբոր ինձմէ յոյս փրկութեան  
 Կարի մեղքիս համար,  
 Ինձի ցուցուր խաչդ, զոհդ արեան,  
 Քաւիչ աղատարար :

## 66 ԹԻՆՆԱՆ ԿՐԻՍՏՈՍ ԷՅՆՈՒՅ Է . ( 7 , 5 , 7 , 6 ) .

1 Ի՞նչ ընես որ փրկուիս .  
 Մեղաւոր, յիշէ,  
 Իր մահովը Տէր Յիսուս  
 Ըրաւ ան շատնցմէ :  
 Պարտքքս Տէր Յիսուս  
 Բողոքն է վճարած .  
 Եւ ընելիք մեծ կամ պզտիկ  
 Ինձ բան մը չըմբնաց :

2 Երբ իր բարձրը աթոռէն  
 Իջնելով մեռաւ,  
 Իր հոգին տըւած ատեն  
 «Կատարուեցաւ» ըսաւ :  
 Պարտքքս Տէր Յիսուս, և այլն :

3 Ով հոգի բեռնաւորուած ,  
 Ալ դուն ի՞նչ յոգնիս ,  
 Տէրդ բոլորն է կատարած ,  
 Գործիդ ինչո՞ւ նայիս :  
 Պարտքըս Տէր Յիսուս , և այլն :

4 Մինչ հաւատարով փրկչիդ  
 Դուն ըլլաս վատահ ,  
 Գործդ բոլորն է մահառիթ ,  
 Անոր վախճանն է մահ :  
 Պարտքըս Տէր Յիսուս , և այլն :

5 Լոկ Տէրօջրդ նայելով  
 Գործդ ձրգէ բոլոր .  
 Կատարեալ կ'ըլլաս անով ,  
 Անով ալ փառաւոր :  
 Պարտքըս Տէր Յիսուս , և այլն :

67 Յիսուս Կէ թիւն . ( 7 , 6 ) :

1 Ի՞նչ գէշ էր խճ վիճակըս ,  
 Մինչ Տէրը գիտեաաւ .  
 Եւ հոգիիս դարմանը  
 Լոկ ինքն ինձի տըւաւ :

Մահուան շատ մօտ գլուխը զիս ,  
 Գերեզմանէն հանեց ,  
 Որ խեղճ մարդոց պատմեմ ես  
 Ինտոր զիս բըժըշկեց :

2 Ուրիշ ամէն ախտերը  
 Թեթև են մեղքին քով .  
 Կ'աւրէ բոլոր մարմինը ,  
 Բայց բուն հոգին՝ ուժով :  
 Ախտեր բազում ու խիտ կան ,  
 Բայց մեղքն է ծանրագոյն .  
 Եւ յոյս միայն փրկչին վրան  
 Կ'ըլլայ դեղ աս զաւոյն :

3 Շատ բըժիշկներ տեսած եմ ,  
 Ինձի շատ դեղ տըւին ,  
 Բայց աւելի վատած եմ ,  
 Բընաւ օգուտ չըբին :  
 Ոմանք՝ « Չունիս մէկ ախտ մը » ,  
 Ըսին , « Շուտ կ'ազատիս » .  
 Իսկ այլք , « Չըկայ մէկ յոյս մը  
 Անշուշտ պիտի մեռնիս » :

4 Սակայն ան մեծ բըժիշկըս  
 Անհամեմատ սիրով

Շուտ ընդունեց խնդիրքը՝  
 Ինձի ողորմելով :  
 Նաև բացաւ աչքերըս ,  
 Վէրքերս ինձի ցուցուց ,  
 Յայսնեց բոլոր մեղքերըս ,  
 Շնորհքով զիս ընդնացուց :

5 Խաչուած փրկիչն Յիսուսը  
 Երբ հաւատքով տեսնանք ,  
 Մեզքի ու մահուան լուծը  
 Շուտով ի յնալ կը զգանք :  
 Մեզ կը կանչէ Բրժիշկը ,  
 Գժուար պայման չըկայ ,  
 Չըբխապէս ձեր վիշտը  
 Անով պիտի վերնայ :

## 68 Յիսուս Բրժիշկու Գեղատեսչ . (7) :

- 1 Անարատ Գառն Աստուծոյ ,  
 վերցունող մեղքն աշխարհիս .  
 Քեզ միայն կը պաղատիմ ,  
 Գռն փրկէ զիս խղճալիս :
- 2 Գարշելի եմ մեղքերովս ,  
 Քու կամքիդ դէմ միշտ կեցայ .

Բայց սրտանց, Տէր, կը զղջամ  
Մեծապէս անոնց վըրայ :

3 Հաւատքով խիտ հաստատուն  
Բարեխօս քեզ կը նանչնամ  
Կորսըւած մեղաւորիս  
Դէպ 'ի Հայրըդ՝ յարածամ :

4 Տէր, դուն ես ինձ օգնական  
Ոչ ուրիշը բընախն  
Դուն միայն յոյս և քաւիչ  
Մոլորեալ մեղաւորին :

5 Ով Փրկիչ իմ մարգասէր,  
Զօրութիւն տուր տըկարիս,  
Որ յաղթեմ մարմնոյ, դիւին,  
Խարերայ՝ սուտ աշխարհիս :

6 Եւ աս ցաւալի կեանքէն  
Հրածարիմ ես ինդագին,  
Ընդունէ դիս եղկելիս  
Շընորհքովըդ երկնային :

## 69 ՓԵԼԵՒԻՆԻՆ ( 8 , 8 , 8 , 5 ) :

- 1 Միշտ երգենք Փրկչին մեծ սէրը ,  
Որ ներած է մեր մեղքերը ,  
Եւ ցրուած է մեր վախերը .  
Փա՛նք անոր անուանն :
- 2 Մեզ արեամբ ծախու առած է ,  
Մտրորողը ինք փնտռած է ,  
Ծուռ ճամբաներէն բերած է .  
Փա՛նք անոր միայն :
- 3 Անապատ երկրէս տանողը ,  
Մանանան մեզ կերցընողը  
Եւ յաջողութիւն տըողը  
Ինքն է . փա՛նք Փրկչին :
- 4 Վերն պիտի տեսնենք մեր Տէրը ,  
Յաւիտեանս անոր մեծ սէրը  
Յիշելով՝ մեր քաղցր երգերը  
Պիտի մատուցուին :
- 5 Միշտ երգենք Փրկչին մեծ սէրը ,  
Որ ներած է մեր մեղքերը ,  
Եւ ցրուած է մեր վախերը .  
Փա՛նք անոր անուանն :

# 70 ՇՆՈՐՀԻ ԺԵՆՆԻՆՆԻ (6, 6, 8, 6) :

- 1 Շընորհք, ձայն սիրելի,  
Ի՞նչ քաղցր ես դուն ինձի.  
Երկինքն այն ձայնը թող կրկնէ,  
Երկիրն ալ թող լըսէ :
  
- 2 Շընորհքն յայտնեց ճամբան՝  
Փրկել շար ազգ մարդկան.  
Եւ աս ճամբուս շաւիղքն ամէն  
Շընորհք կը ցուցնեն :
  
- 3 Շընորհքն է լոյս ոտքիս՝  
Տանիլ զիս դէպ յերկինս.  
Քանի ալ որ յառաջ կ'երթամ,  
Շնորհքով կը զօրանամ :
  
- 4 Շընորհքն պիտի փրկէ  
Ամէն տանջանքներէ.  
Ուրեմին միշտ շընորհք խնդրենք,  
Ու Տէրը միշտ գովենք :



# 71 Ն--ւ ԺԻ--ւիւն ԳԶ. (8, 6) :

- 1 Խաղաղ էր ծովն Գալիլեայի ,  
 Երբ նաւ մ'անոր վըրան  
 Ճամբաց ելաւ . շատ հանելի  
 Կու գար այն տեսարան .  
 Սահայն յանկարծ մեծ փոթորիկ  
 Ծովուն վըրան կ'ելլէր .  
 Խաւարն կոխեց , ու հովն սաստիկ  
 Ալիք կը վերցընէր :
- 2 Միայն մէկ անձ շըսարսափած  
 Նոյն նաւակին մէջ կար .  
 Ան ալ գըլուխը վար գըրած՝  
 Հանդարտ կը քընանար .  
 «Ո՛հ , վարդապետ , քու հողըդ չէ՞» ,  
 Կ'ըսեն , ամենք կ'ընկղմինք .  
 Եւտով ելիր ու մեզ փրկէ .  
 Ահա կը կորսըւինք" :
- 3 Ան աղաղակն երբոր լսեց ,  
 Անմիջապէս ելաւ ,  
 Հովերն ու ծովն յանդիմանեց ,  
 Խաղաղութիւն եղաւ :

Կ'ապշին ան ձայնը լըսողներն ,  
 Եւ իրարու կ'ըսեն ,  
 «Այս ո՞վ է որ ծովս ու հովերն  
 Անոր մըտիկ կ'ընեն» :

4 Երբ քու նաւակըդ , ով հողիս ,  
 Ընկըզմելու մտա է ,  
 Յայնժամ վախով չըզարհուրիս ,  
 Փրկչիդ աղաղակէ :  
 Ան որ երկինքը կը նստի  
 Կարող է քեզ փրկել ,  
 Սաստել ամէն փոթորիկի ,  
 Եւ «Լուս կեցիւր» ըսել :

5 Յիսուս , սաստէ զօրեղ խօսքովդ  
 Մեր թշնամիներուն .  
 Ալ մեզ չըսեն թէ «Աստուծմով  
 Չրկաց ձեզ փրկութիւն» :  
 Հողիններնուս՝ «Քաջ լեր» ըսէ .  
 Քու փրկութիւնդ ճանչցանք ,  
 Եւ ազատուած ամէն շարէ՝  
 Քեզմով ուրախանանք :

## 72 ԿՅԻ ԲԵՐԻՒՄ (8, 7) :

- 1 «Ողորմէ ինձ, ողորմէ ինձ,  
Ով Որդի Դաւթի Քրիստոս» .  
Այնպէս կ'աղաչէր համբուն վրայ  
Կոյր՝ աղքատ Բարսիմէոս :
- 2 «Ղուռ կեցիր» ըսին շատերը,  
Սակայն ան աղաղակեց  
Անհամբեր, մինչև որ Տէրը  
Չինք դուժով իրեն կանչեց :
- 3 Չէր արժաթ անոր խնդրածը,  
Թէպէս էր սովոր մուրալ .  
Դաւթի Որդւոյն տըւածը  
Չէր կարող ուրիշ մը տալ :
- 4 «Տէր, վերցուր աս կուրուժիւնը,  
Թող աչքերս բացուին» ըսաւ .  
Շուտ տեսաւ, խեղոյն ալ ինքը  
Յիսուսի ետեւն ինկաւ :
- 5 Ո՞րչափ սիրտն հիմա լեցուն է .  
Ամենուն ալ կը խօսի .  
«Աս ողորմութիւնն անհուն է,  
Ի՞նչ Փրկիչ զարմանալի :

6 Երանի՛թ թէ ասոր քովը  
 Կոյրերուն ամէնը դար .  
 Ինք անշուշտ անչափ շնորհքովը  
 Շուտ անոնց տեսնել կու տար” :

### 73 ՓՐԿԻՆ ԵՂՐԻՆԻՆԷ . (Ց . 6 տող) :

1 Փրկիչն ցուցուց ողորմութիւն  
 Ինձ մեղաւոր արարածիս .  
 Ինձի յայտնեց իր սէրն անհուն ,  
 Որ գրծոխքէն փրկէ հոգիս .  
 Աս տեսնելով կ’ուրախանամ ,  
 Ողորմութեանն ալ փառք կու տամ :

2 Ես բարկութեան արժան որդի .  
 Տէր Յիսուսէն շնորհք գըտայ .  
 Ինք բաժանող պատը քակեց ,  
 Եւ ես Տէրոջս հետ միացայ .  
 Ո՛վ կատարեց աս գրթութիւնն .  
 Ողորմութիւն , ողորմութիւն :

3 Ո՛վ իմ Աստուածս , պիտի պատմեմ  
 Ողորմութիւնդ ամէն մարդու .  
 Յայնժամ ըզքեզ պիտի գովեն  
 Հաւատացեալք ամէն դարու .

Տրամեալք ուրախ պիտի ըլլան ,  
 Ողորմութիւնդ երբ հասկընան :

- 4 Պանդխառութեանս կարճ ժամանակն՝  
 Ներկայութիւնդ թող հետս ըլլայ .  
 Ողորմութեանդ պիտի յուսամ՝  
 Երբ մահն ինձի կը մօտենայ .  
 Յայնժամ երկնից մէջ յախտեան  
 Փառք պիտի տամ ողորմութեան :

## 74 ՔՐԻՍՏՈՍ ԵՍՏՆԻՔԻ . (8, 6) :

- 1 Հողւոցն որ են ՚ի սառուեր մահուան  
 Դու ես լոյս դուարթարար .  
 Զինքրդ յայտնէ , ծագէ մեր վրան ,  
 Վանէ ամպերն խաւար :
- 2 Լուսոյ ես արարիչ կենաց ,  
 Կը փարատես սոսկ դուն  
 Բնութեան խաւարն յոյժ թանձրամած .  
 Լոյս տուր մեր աչքերուն :
- 3 Մենք կը սպասենք քոյդ երևման ,  
 Շողդ է բերկրանք , կեանք մեզ .  
 Վախէ ազատ , հաղորդ ցնծման  
 Կ'ընէ խոնարհն և հեզ :

4 Գը թովդ փրկէ , սիրոյ անհուն ,  
 Խաղաղութեան իշխան ,  
 Մեզ փրկութեան տուր գիտութիւն ,  
 Փնտռենք վերին խորան :

5 Կը փրկըւի շնորհքովդ միայն  
 Որ ծանր բեռան տակ է .  
 Թափառելոցս շխտակ ճամբան ,  
 Խաղաղութիւն շնորհէ :

75 “Ք:է:ո:ո: է -:է:է -:է: ք:ն:է: Ե:է” . ( 8 , 6 ) .

1 Եստ խղճալի էակ եմ ես ,  
 Չրկեալ ամէն բանէ .  
 Տալ ո՞վ կրնայ շընորհք պէտպէս ,  
 Որ զիս հարուստ ընէ :

2 Հայր յախտենականութեան  
 Քրիստոս է , և գիտող  
 Ամէն տեսակ կարօտութեան ,  
 Լըցունելու կարող :

3 Հիմն է շէնքին հաստատութեան ,  
 Արմատ կենդանութեան .  
 Չովացուցիչ ազրիւր միայն ,  
 Կենաց հաց յախտեան :

- 4 Է հովանի տապալ պահան ,  
 Ատող է առաւօտեան ,  
 Նա արեգակն արդարութեան ,  
 Ամէն բան ինձ է Ան :
- 5 Բըժիշկ ճարտար , և փաստարան  
 Չամէնն ընել արդար ,  
 Եղբայր սիրող , լաւ բարեկամ ,  
 Իշխան և կառավար :
- 6 Ո՛հ , Տէր Յիսուս , իմ փրկութիւնս ,  
 Ուրախութիւնս , իմ փառքս ,  
 Իմ յոյսս , իմ կեանքս , խաղաղութիւնս ,  
 Լոկ դու ես իմ փափաքս :
- 7 Երբ քեզ ունիմ , ոչ արարած ,  
 Ամէն բան ես ունիմ ,  
 Չիս չես թողուր , բարի Աստուած ,  
 Չեմ ըլլար լալազին :

## 76 ՄԷՆՆ ԵՆՆՆ . ( 8 ) :

- 1 Փորձութիւններ կերպ կերպ են շատ ,  
 Չորս կողմն պատտած մրնան հաստատ .  
 Բընաւ մէկէ շրկայ ինձ յոյս ,  
 Իմ ազատիչս միայն Յիսուս :

- 2 Ի՞նչ մեծ հոգեր վրաս կը կոխեն,  
 Ձիս արամութիւնք կը պաշարեն.  
 Հանգիստ տեղաց մը կայ՝ հոգւոյս.  
 Ինձ մը խիթար միայն Յիսուս:
- 3 Կարօտութիւնք, վախեր են յոյժ,  
 Ձիս շրարեալ կ'ընեն ապուշ.  
 Վատահուստութիւն ուսկի՞ց հոգւոյս.  
 Իմ ապաւէնս միայն Յիսուս:
- 4 Մեղքի նեւերն կը խոցոտեն  
 Իմ խիղճս, հոգիս ամէն գիէն.  
 Ո՛հ, օգնութիւն ուսկի՞ց հոգւոյս.  
 Բըժիշկըս է միայն Յիսուս:
- 5 Մահուան դալէն ալ չեմ սոսկար,  
 Անդեղջք դատուին թող անաշատ.  
 Փրկիչ հոգւոյս և Բարեխօս  
 Ինձ բուսկան միայն Յիսուս:
- 6 Փառք անխախճան պահուած են ինձ,  
 Եւ սէր անկեղծ, ցնծմունք երկնից.  
 Լուսոյ հանդերձ կայ մերկ հոգւոյս  
 Արդարութեամբդ, ո՛վ Տէր Յիսուս:



## 77 “Յէշ Ն” . (8, 6, 8, 6, 8) :

- 1 Յիսուս, Փրկիչ մեղաւորաց,  
Միայն քեզ կը նայիմ.  
Քու մեծ սիրոյդ առատութեամբ  
Յիշէ զիս, ով Տէր իմ.  
Յիշէ զիս, Տէր, յիշէ զիս, Տէր :
- 2 Ըսքանչելի Միջնորդ առ Հայր,  
Եմ անձնատուր քեզի .  
Երկնից անհուն փառքն վայլելու,  
Յիշէ զիս սիրելի .  
Յիշէ զիս, Տէր, յիշէ զիս, Տէր :
- 3 Ես յանցաւոր եմ ու անարդ,  
Բայց փրկութիւնդ է ձրի .  
Քու կին ամենառատ շնորհքովդ  
Յիշէ զիս սիրելի .  
Յիշէ զիս, Տէր, յիշէ զիս, Տէր :
- 4 Երբ իմ աչքերս մահուամբ գոցեմ,  
Երբ անդարման թողուիմ  
Յայնժամ, ով դուն Փրկիչ Յիսուս,  
Յիշէ զիս՝ կ'աղաչեմ,  
Յիշէ զիս, Տէր, յիշէ զիս, Տէր :

## 78 Փրկիչ Կը Է Տէր . (յառառկ) :

- 1 Թող տրանջելըս ալ դադարի ,  
 Քանզի Յիսուս միշտ մտտ է ինձի .  
 Տէրս ու Փրկիչըս իմ քովս կը մընայ .  
 Երբ կը խօսի ինք , իմ սիրտս կը ցնծայ :  
 Երկնաւոր սուրբ հրեշտակներ  
 իմ ճամբուս կ'ըլլան ընկեր ,  
 Եւ Փրկիչըս մարդասէր ,  
 Փրկիչըս՝ Փրկիչըս՝ Փրկիչըս միշտ է մտտ :
- 2 Ալ չվախնամ , չըլլամ ես թուլցած ,  
 Չի թէ արթուն եմ , թէ քնացած ,  
 Հանգստեան մէջ ըլլամ , թէ թափառիմ ,  
 Քաղցրը Փրկիչըս միշտ քովըս ունիմ :  
 Երկնաւոր սուրբ հրեշտակներ , Էյն :
- 3 Հոս իմ վայրածս է վայրկենական ,  
 Բայց երկնաւոր վայելքն կը մընան .  
 Հոս հաւատքով թող Փրկչիս հետ քալեմ ,  
 Հոն յաւիտեան անոր սէրն վայելեմ :  
 Երկնաւոր սուրբ հրեշտակներ , Էյն :

## 79 Ք Ե Լ Ի Կ Ե Լ Ե Լ Ե Լ Ե Լ (8) :

1 Փառաւորեալ Աստուածորդի,  
Սիրոյ աղբիւր, կեանք աշխարհի,  
Դէմքիդ լուսոյն սիրտս կը զմայլի,  
Ով սիրելիդ իմ Տէր Յիսուս :

2 Ո՛հ, այն ինչ մեծ սէր ցուցուցիր,  
Երբ դառն դաւաթը խըմեցիր,  
Որով աշխարհըս փրկեցիր,  
Ով պաշտելի Տէր իմ Յիսուս :

3 Դուն իմ հոգիս քեզի դարձուր,  
Տրկար հաւատքըս զօրացուր,  
Ու փրկութիւնդ ինձի ցուցուր,  
Ով կենսատու Տէր իմ Յիսուս :

4 Ո՛հ, շեմ ուզեր որ սէրդ մտնամ,  
Դէմքիդ լուսէն ալ հեռանամ,  
Դուն գիտ բռնէ, Տէր բարեխնամ  
Եւ մարդասէր Փրկիչ Յիսուս :

## 80 Ե Կ Ե Լ Ե Լ Ե Լ Ե Լ Ե Լ Ե Լ (8) :

1 Յիսուս, դուն ես մեզ առաջնորդ,  
Միակ դըլուխ եկեղեցւոյն :

Եւ թողուցիր քեզ փոխանորդ  
Քու Սուրբ Հոգիդ՝ լոյս դերագոյն :

2 Յիսուս, դուն ես լէ՛մ յաղթական ,  
Որով կանգնի եկեղեցին .  
Կանոն տրւիք Աւետարան ,  
Ամէն մարդիկ քեզմով փրկուին :

3 Յիսուս, դուն ես Հովիւ բարի ,  
Իր ոչխարներն նայող՝ փնտռող .  
Ով որ քեզի կը յանձնուի՝  
Չըկայ ձեռքէդ յափը շտակող :

4 Յիսուս, դուն ես մեծ թագաւոր ,  
Նոյն և քաւիչ մեծ ֆառնան .  
Անգին արեանդ զո՛հ փառաւոր  
Է առաջնորդ մեր փրկութեան :

5 Տէր, մեծութիւնդ մեզի դիտցուր ,  
Որ քեզ միայն մեր Գլուխն ճանչնանք .  
Մեզ յոյս՝ հաւատ՝ սէր յաւելցուր ,  
Որ քեզ արժան պատիւ՝ փառք տանք :

81 ՄԷՆՆԵՆ Է ԲՆԵՆԻՆ ԳՆՆ՝ ՔՐԻՍՏՈՍ Է. (8):

- 1 Յիսուս փրկիչ և թագաւոր  
 է մեզ եղբայր և բարերար .  
 Նստած աջ կողմ՝ Հօրն երկնաւոր՝  
 Բարեխօսէ մեզի համար :
- 2 Միջնորդն Յիսուս է շատ դըժբաժ ,  
 Աշակերտներն բոլոր գիտէ .  
 Եւ բանալով իր դանձ շնորհաց  
 Անոնք բոլոր պիտի փրկէ :
- 3 Ան մեզք չունէր՝ բացց վիշտ կը բեց ,  
 Եւ մեզքերնիս իր վրան առաւ .  
 Ով որ սրտով անոր դիմեց՝  
 Զայն ընդունեց , ներում արւաւ :
- 4 Անկէ ուրիշ միջնորդ չըկայ  
 'ի մէջ մարդկան և Աստուծոյ .  
 Աստուած և մարդ մէկ մ'ալ չըկայ ,  
 Որ կարենայ օգնել մարդոյ :
- 5 Միջնորդութեամբ՝ անուամբ փրկչին  
 Տէրոջ դահին արդ մտունանք .  
 Եւ մեզքերնիս յայտնենք նրմին ,  
 Որ թողութիւն ու կեանք գտնանք :

## 82 Փրկեւ ի՛րի . ( 8 ) :

- 1 Գիտե՛մ որ իմ Փրկիչս կ'ապրի .  
Աս ի՞նչ խրատոյս կու տայ ինձի .  
Կ'ապրի , կ'ապրի Այն որ մեռաւ ,  
Կ'ապրի որ տայ ինձ կեանք ամբաւ :
- 2 Կ'ապրի Գըլութըս յախտեան ,  
Մահուամբ մահուան վրայ յաղթական .  
Կ'ապրի , կ'ապրի զիս փրկելու ,  
Եւ իր սիրովը օրհնելու :
- 3 Կ'ապրի երկնից մէջ փառաւոր ,  
Տէր ամենուն և թագաւոր .  
Կ'ապրի բարձրերը համբարձած ,  
Իր և մեր Հօրն աջ կողմն նստած :
- 4 Կ'ապրի որ միշտ ինձի օգնէ ,  
Հողւոյս համար բարեխօսէ .  
Կ'ապրի ինձ առաջնորդելու ,  
Ամէն վտանգէ աղաատելու :
- 5 Կ'ապրի որ փարատէ վախերս ,  
Եւ միշտ սրբէ իմ արցունքներս .  
Կ'ապրի , կու տայ ինձ կեանք և լոյս ,  
Եւ ըստփանք ու խըրատոյս :

6 Կ'ապրի ե միշտ զիս կը սիրէ ,  
 Եւ միշտ հոգիս կը պաշտպանէ .  
 Կ'ապրի ե ինձ կ'ըլլայ Արքայ ,  
 Եւ Մարգարէ ու Քահանայ :

7 Կ'ապրի ու ես պիտի ապրիմ ,  
 Ու միշտ իր քովը բընակիմ .  
 Աս ի՞նչ ցնձում կու տայ ինձի ,  
 «Գիտեմ որ իմ Փրկիչս կ'ապրի» :

### ՏՅ ՅԷ՝՝՝՝Է Բ՝ԷԷԷԷ՝՝՝՝՝՝՝՝՝՝՝ (Տ . 6 տող) :

1 Լաւ բարեկամ մը կայ վերերն ,  
 Յիսուս Գրիստոս է իր անունն .  
 Աս աշխարհիս բարեկամներն  
 Շուտով կ'անցնին , շէն հաստատուն .  
 Ուստի թող ես անհոգ չըլլամ  
 Յիսուսն ընել ինձ բարեկամ :

2 Աշխարհս բոլոր փառքովն կ'անցնի ,  
 Յիսուս կը մնայ հաստատ իրր վէմ .  
 Մարգիկ երբ շէն օգներ ինձի ,  
 Յիսուս պատրաստ միշտ քովս գանեմ :  
 Ուստի , Եսչն :

3 Յիսուս վասն իմ իր անձ զոհեց ,  
 Որ ես երկնից հաղորդ ըլլամ .  
 իմ տեղս իրեն արիւնն թափեց ,  
 Որ ես իրմով արդարանամ :  
 Ուստի , Էջն :

4 Բարեկամիս մեծ գրթութիւնն  
 Օրէ օր դիս սիրով կ'ուզդէ .  
 Յիսուս միշտ իմն է , ես իրենն  
 Մինչ մահն իմ շունչս ինձմէ առնե .  
 Եւքն ալ երկնից մէջ յաւիտեան  
 Բարեկամիս հետ միանամ :

## ՏԷՐՆԷ ԳՆՆԻԿՆԷ . Սաղ . ԾԺ . ( 8 , 7 ) .

1 Տէրն ըսաւ Տէրոջ ըս այսպէս ,  
 իմ աջ կողմնս դուն նստէ .  
 Թշնամիքըդ յաղթողի պէս  
 Քու ոտքովըդ կոխկռտէ :

2 Զօրութեանդ սուրբ դաւազանը  
 Սիօնէն Տէրն կը խրկէ .  
 Դուն յաղթէ միշտ շար գեերը ,  
 Թշնամեացըդ մէջ տիրէ :



- 3 Ինքը Տէրն ըրաւ երդումը ,  
 Չըպիտի բընաւ զղջայ .  
 Մեկքիսեղեկի կարգովը  
 Յաւատեան ես քահանայ :
- 4 Տէրն աջ կողմից միշտ կայնած է ,  
 Միշտ քեզի պիտի ոյժ տայ .  
 Բարկութեան օրն միշտ ճզմած է  
 Թշնամին իւր անխընայ :

85 ԳԵՆԵՍԻ ԲԻՒՆ ԴԵՆԵՆԸ . ( 8 , 6 ) :

- 1 Ողջոյն մեծ Էմմանուէլին ,  
 Թող պետութիւնք երկնից  
 Երկրպագեն ու զայն կարգեն  
 Արքայ՝ Տէր ամենից :
- 2 Թո՛ղ մեր երկրին լեզուք ամէն  
 Ըլլան հոս ձայնակից .  
 Անոր փառք տան , զայն ընդունին  
 Արքայ՝ Տէր ամենից :
- 3 Ո՛հ , ե՛րբ պիտի մենք զայն պաշտենք  
 Ի մէջ գնդաց երկնից .  
 Անոր երգենք ու զայն կոչենք  
 Արքայ՝ Տէր ամենից :

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

86 Աւեր -- Սուրբ Հոգի . (8) :

- 1 Ով Սուրբ Հոգի՛ լոյս երկնային ,  
Իմին հոգիս շուսաւորէ .  
Յրուէ խաւարն գիշերային ,  
Եւ ցորեկուան պարզ լոյս ծագէ :
- 2 Ով Սուրբ Հոգի՛ հրդօր Աստուած ,  
Քու զօրութեամբդ իմ սիրտս մաքրէ .  
Ձի ներսի դիս ժողով մեզաց  
Իշխանութեամբ միշտ կը տիրէ :
- 3 Ով Սուրբ Հոգի՛ Մըխիթարիչ ,  
Տրամու՛մ հոգիս մըխիթարէ .  
Սրախ բոլոր վիշտ խոցոտիչ  
Ուրախութեամբ շուտ փարատէ :
- 4 Ով Սուրբ Հոգի՛ ամենազօր ,  
Իմ սիրտս մըտիր և բընակէ .  
Վերցուր անկէ կուռքերս բոլոր ,  
Եւ յախտեան հոն դուն իշխէ :

## 87 Մ--լ--ն-- + -- Մ--լ--ք Հ--լ--ք (7) :

- 1 Տիեզերքը նորոգող,  
Կեանք տրւողը համայնից,  
Կը հաւտանք քեզ, Սուրբ Հոգի,  
Հօր, Որդւոյ ալ փառակից :
- 2 Առաջնորդ ես անտրխալ  
Մտորեալ մեղաւորին .  
Մեր խաւարը հալածող  
Անըսուեր լոյս երկնային :
- 3 Զօրավիզ դուն 'ի բարձանց  
Ծշմարխար փնտռողին .  
Դուն միայն կրնաս փոխել  
Մեղապարտ սիրան ու հողին :
- 4 Կ'աղաչենք քեզ միարան,  
Ով դըթած օրհնեալ Հոգի,  
Շընորհացրդ երկնառաք  
Դուն ըրէ մեզ արժանի :
- 5 Մեզքերնիս հանչեալ տուր մեզ,  
Բարեխնամ Մըխիթարիչ,  
Եւ սրտանց զղձում ընել,  
Ու նայիլ դէպ 'ի Փրկիչ :

6 Քու ձըրի պարզեներովդ  
 Սրտերնիս դուն զարդարէ ,  
 Որ դառնանք մենք ֆրիստով ,  
 Հեռանանք միշտ մեղքերէ :

## 88 ՍՈՒՐԷ ՀԻՄՆԻ ԴԻՄԻՆՆԻ ԷՄՆԻ ՄԱՐԿՆԻ (8) :

1 Տէր , վար նայէ աչքով դրժած ,  
 Աղամորդին տես կործանած .  
 Մեղքն յաղթանակ կը տարածէ ,  
 Ամէն տեղեր մարդ կը սպաննէ :

2 Պաշտօնեաներդ պարապ կ'ելլեն ,  
 Մեռած մարդոց կը քարոզեն .  
 Հողիդ շիջած ասոնց վըրան ,  
 Անոնք զուր տեղը կը պուան :

3 Բայց Սուրբ Հողիդ մահն կը յաղթէ ,  
 Մեռելներուն կեանք կը բերէ .  
 Չոր սկորներ ձայնովդ կ'ելլան ,  
 Նոր յարութեամբ կ'ուրախանան :

## 89 Սուրբ Հոգի ընդհանուր համար զգեստ (8, 6) :

- 1 Ով Տէր Յիսուս, դուն խոստացար  
Որ Սուրբ Հոգիդ խրկես .  
Ճշմարտութեան լոյսն փրկարար  
Մեզի միշտ հաղորդես :
- 2 Արդ կ'աղաչեմ բոլոր սրտով ,  
Ինձ Սուրբ Հոգիդ խրկէ .  
Ամէն բան թող ուղիղ կերպով  
Ինձի ստիպեցընէ :
- 3 Ինչպէս որ դուն 'ի վերնատան  
Առաքելոց տրիր  
Քու Սուրբ Հոգիդ՝ լոյս դերբնական ,  
Քեզմէ պարդե ընտիր ,
- 4 Ինձի ալ տուր որ զիս սրբէ ,  
Որ քու օրէնքդ սիրեմ .  
Իմ միտքս բանսց , սրտիս ազդէ ,  
Որ միշտ քեզ ծառայեմ :
- 5 Ով Սուրբ Հոգի , չեմ արժանի  
Տաճար քեզ ըլլալու .  
Եկ , զիս ըրէ գործիք քեզի ,  
Քու լոյսդ տարածելու :

# 90 Հ-ի-ո-յ՝ Ս-ի-ո-յ - - - - - Ը-ր-դ-ը-ն-ը հ-ո-մ-ո-ր - - - - - ։

Սաղ . ԺԷ . ( 8 ) ։

- 1 Իմ աղաղակս , ով Տէր , լըսէ ,  
Եւ Սուրբ Հոգիդ ինձ պարգևէ :  
Աննենդ լեզուով քեզ կ'աղաչեմ ,  
Անկեղծ սրտով աղօթք կ'ընեմ :
  
- 2 Իմ քայլերուս եղիր պաշտպան ,  
Ճամբուդ մէջ թող հաստատ մընան .  
Ոտքերս բընաւ չըխտորին ,  
Սուրբ օրէնքիդ միշտ հետևին :
  
- 3 Ողորմութիւնդ ըսքանչելի  
Սիրոյդ համար ցուցուր ինձի .  
Աջովդ փրկէ զիս սոսիւէն ,  
Իմ յոյսս դուն ես ամէն ատեն :
  
- 4 Աչքի բիրի պէս զիս պահէ ,  
Քու թևերուդ տակ զիս ծածկէ ,  
Ձիա ազատէ վրտանդներէն ,  
Որ իմ հոգիս կը պաշարեն :

91 Սուրբ Հովորդանոս Կոստանոյանի Կոմարացի  
(8, 7, 4) :

- 1 Այգիիդ , Տէր , այցելու լեր ,  
 Բու անձրեղ միշտ խրկէ մեզ ,  
 Շուտ կը նըւաղին հողիք մեր ,  
 Թէ լոյսդ մեր վրայ չըծագես :  
 Զօրացուր մեզ .  
 Օգնութիւնն է լոկ քեզմէ :
  
- 2 Մի կենար մեզմէ հեռու , Տէր ,  
 Այլ վերէն շնորհքդ մեզ խրկէ .  
 Կը յաղթեն մեզ փորձութիւնք մեր ,  
 Թէ որ գըթութիւնդ չօգնէ :  
 Զօրացուր մեզ .  
 Օգնութիւնն է լոկ քեզմէ :
  
- 3 Թող սաստիկ սէր լեցունէ մեզ ,  
 Աղօթքի մէջ զօրանանք .  
 Թող ան որ կը գաւանի քեզ՝  
 Միշտ յաղթէ չարին փորձանք :  
 Զօրացուր մեզ .  
 Օգնութիւնն է լոկ քեզմէ :

- 4 Տէր , յաղթէ ուժով փորձողը ,  
 Քարեղէն սիրտն կակրղցուր .  
 Ըսկրսէ հիմա մեծ դորժը ,  
 Մեղաւորն քեզի դարձուր :  
 Զօրացուր մեզ .  
 Օգնութիւնն է ըսկ քեզմէ :

## 92 եւ՛ -- Ս--ւ՛ Է--ւ՛ . (8) .

- 1 Բացուին այսօր երկնից կամարք .  
 Եջիր մեզի , ով Սուրբ Հոգի .  
 Մեր խղճալի սրտից կապանք  
 Քու զօրութեամբըդ արձըկուի :
- 2 Մեղաց խաւարն է մեզ պատեր ,  
 Թող փարատի ու չըքանայ .  
 Սաստիկ զղջում ու սէր առ Տէր  
 Մեր սիրտերուն մէջ արթննայ :
- 3 Թող մեր մտքերն լուսաւորուին  
 Տէրոյը կամքը ճանչնալու .  
 Ու մեր սիրտերը համոզուին  
 Ամէն մեզքէ հրաժարելու :



- 4 Առատարուղիս պարզեաներով  
Կարեկցութեամբ մեզի եկուր .  
Փառաց երկրին փափաքներով  
Դուն սիրտերնիս այսօր լեցուր :
- 5 Հաճէ մեզի առաջնորդել  
Ճշմարտութեան մէջ անդադար .  
Եւ մեր ընթացքը կատարել  
Անկեղծութեամբ մինչե 'ի սպառ :

## 93 Խ...-...-... Ս...-...-... Հ...-...-... ( 8 , 6 ) :

- 1 Ով Սուրբ Հոգիդ ճշմարտութեան ,  
Մաքուր ես Աղաւնի ,  
Ակն մշտահոս ճոխ բարութեան ,  
Սրբող մարդն ազտեղի :
- 2 Ապականեալ մեր բրնութիւն  
Կարօտ քեզ կը մընայ ,  
Որ ըստանայ նորոգութիւն ,  
Զերծ մեղքերէն ըլլայ :
- 3 Քեզ կ'աղաչենք , ո'վ Սուրբ Հոգի ,  
Շընորհքդ կը խնդրենք .  
Շատ մեղքերով թէև ենք լի ,  
Ա'լ յոյս կայ , ի՞նչ ընենք :

- 4 Դու մեզ կրնաս զօրացունել՝  
 Յաղթել միշտ մեզքերուն .  
 Մեզ Քրիստոսի հանէ տանել ,  
 Գլանենք հոն քաւութիւն :
- 5 Մեզ մի թողուր անօգնական ,  
 Անզօր ենք խղճալի .  
 Կը կորսըինք մենք յաւիտեան ,  
 Ո՛ւր է խօսքն Յիսուսի :

## 94 ՍՈՒՐԲ ՀՈԳԻՊ ԺՆՆՆՆՆՆ ( 8 ) :

- 1 Ով Սուրբ Հոգի՝ Աստուած բարի ,  
 Որ գութ ունիս մարդկան ազգի .  
 Քեզ կը կանչեմ բոլոր սրտով ,  
 Այցելութիւն ըրէ ինձի :
- 2 Սուգի մէջ եմ , որ քու շնորհքէդ  
 է գրկըւած անձն իմ անպէտ ,  
 Դուերն ալ այս առիթ գրտած՝  
 Չանան փորձել , խաղալ իմ հետ :
- 3 Տէր , կ'աղաչեմ ինձ յիշեցուր  
 Քու պատգամներդ իբրև ըզսուր ,  
 Որով յաղթեմ մեծ փորձիչին ,  
 Չըլլամ չարին ես անձնատուր :

- 4 Ով Սուրբ Հոգի, եկու շուտով,  
 Ձի ճնշուած եմ մեղքերով.  
 Ձիս վըհատածս ամէն կողմէ  
 Գաջալերէ քու կին շնորհքով:
- 5 Ձիս մի թողուր անմըխիթար,  
 Սատանային շըլլամ աւար.  
 Քու զօրութեամբրդ հաստատուիմ  
 Ըլլամ պատրաստ երկնից համար:



# Ս Ո Ւ Ր Բ Գ Ի Ր Ք

## 95 Ս...Է՞ Գ... Գ...-...-...-...-...-...-... (Ց . 6 տող ) :

- 1 Քու Սուրբ Գիրքդ է ինձ հաճելի ,  
 Լոյս կ'ընծայէ խիստ ցնծալի  
 Խեղճին որ խաւարի մէջ է .  
 Քու խօսքդ մոլար ճամբաս կ'ուզէ ,  
 Եւ վախդ սանձ է իմ շար սրտիս ,  
 Խոստումնքդ կու տան հանդիստ խղճիս :
  
- 2 Քու սուրբ օրէնքդ ինձ կը յայտնեն  
 Ան կանոններն որ ինձ պէտք են .  
 Ազնիւ ուսում անոնք են ինձ ,  
 Եւ քան ըզմեզր անուշ են ինձ .  
 Բովքէն զրտուած մաքուր ոսկի  
 Սըրտիս այնքան չէ ցանկալի :
  
- 3 Ըսպատնալիքդ կ'արթնցունեն ,  
 Ու իմ վրտանդս ինձ կը յայտնեն .  
 Բայց Տեառն օրհնեալ Աւետարան  
 Ձիս կը փրկէ մինչ յաւիտեան .  
 Մեղքս կը յաղթէ , հողիս կ'ուզէ ,  
 Չըրի բայց մեծ վարձք կը շնորհէ :

4 Իր սխալները ո՞վ գիտէ .  
 Ո՞վ Տէր , դուն իմ մեղքերս քաւէ ,  
 Ամէն մեղքէն գիտ ետ պահէ ,  
 Երգս օրհնութեան միշտ ընդունէ .  
 Զբլլայ անշահ և անպիտան  
 Այն կեանք արւող Գիրքդ յայտնութեան :

## 96 ՍՐԷ ԳՐԵՅ ԴՐՄԱՆԻՆԻՆԷ . (7) :

1 Ո՞վ դուն Սուրբ Գիրք երկնային ,  
 Պատուական դանձա ես իմին ,  
 Որ ըսկիցբս ինձ կը պատմես ,  
 Ինչ ըլլալս ինձ կը յայտնես :

2 Մղորեալքս կը խրատես ,  
 Եւ փրկչին սէրն կը յայտնես .  
 Դուն ինձի ես կառավար ,  
 Գատաւոր ես բարերար :

3 Նորոգուիլ մեզ Սուրբ Հոգւով ,  
 Ըստանալ կեանքն հաւատքով ,  
 Դուն կ'ըսես թէ կայ հրնար ,  
 Ու մեզ ես միշտ մըխիթար :

4 Երկնային փառքն կը պատմես ,  
 Եւ կորուստն ալ կը յայտնես .  
 Ո՛վ դուն Սուրբ Գիրք երկնային ,  
 Պատուական դանձս ես իմին :

97 ԿԵՆՆԻՆ ԲՆՆ ԳԻՆՆՆԻՆ . (8) :

1 Թող քու Սուրբ Խօսքդ , Տէր իմ Փրկիչ ,  
 իմ վշտակիր սրտիս ազդէ .  
 Նա առաջնորդ և ըստփիսչ  
 Ըլլայ ինձ միշտ , ու ինձ օգնէ :

2 Խարոզ հաճոյք իմին հոգիս  
 երկար ատեն մոլորցուցին .  
 Սուտ բարիքներ առ աշխարհիս  
 իմ սէրս առ քեզ խափանեցին :

3 Բայց ձայնըդ , Տէր , հաւատարիմ  
 Խորունկ քունէ զիս արթնցուց .  
 Առ քեզ դարձուց անսանձ սիրտ իմ ,  
 Եւ իմ աչքէս արցունք վազցուց :

4 Աշխարհասէրք միշտ կը դրուցեն ,  
 Մեզ ո՛վ պիտի տայ բարութիւն .  
 Տէր , գէժքրդ ցոյց աստուածեղէն ,  
 Տուր ինձ Որդւոյդ խաղաղութիւն :

98 Սուրբ Գրեց երեսուցիցն զԵրեմիայի քառասուն երկու շաբաթ ճժիթ . ( 8 , 6 ) :

- 1 Երխտասարգն ինչո՞վ մաքրէ  
Իրեն մոլոր համբան .  
Ըզգուշութեամբ թէ որ պահէ  
Քու խօսքըդ սրբազան :
- 2 Բոլոր սրտով քեզ խնդրեցի ,  
Թող մի տար մոլորիմ .  
Պատուիրանքներդ մրտածեցի ,  
Խօսքիդ պիտի նայիմ :
- 3 Քու օրէնքովդ կ'ուրախանամ  
Անգին գանձի մը պէս .  
Եւ թող մի տար որ խօսքդ մոռնամ ,  
Որպէս զի զիս փրկես :

99 Սուրբ Գրոց զԵրեմիայի քառասուն երկու շաբաթ ճժիթ . ( 8 ) :

- 1 Տէր , ծառայիդ բարի ըրէ ,  
Որ ես ապրիմ ու խօսքդ պահեմ .  
Բաց իմ աչքերս , լուսաւորէ ,  
Որ օրէնքէդ հրաշքներ տեսնեմ :





# 101 ՍԻՆՏԻՆԻ ԷՆՅ ԷՆՅ՝ ՍԱՂ ԸՃԹ՝

(8) :

- 1 Տէր , օրէնքներդ ինձի յայտնէ ,  
Որ մինչև վերջ զանոնք պահեմ .  
Զիս իմաստուն , ըզդաստ ըրէ ,  
Որ քեզ միայն մրտիկ ընեմ :
- 2 Իմին աչքերս դուն ետ դարձուր ,  
Որ սընտրի բան շտեման .  
Ճշմարտութեան մէջ գիտ կեցուր ,  
Քանզի ան է կենաց ճամբան :

# 102 ԱՆՆՆՆՆՆ ԻՆՆՆՆՆՆ ԻՆՆՆՆՆՆ ԻՆՆՆՆՆՆ

ՍԱՂ ԸՃԹ՝ (8 , 6) :

- 1 Դուն ետ բաժինս , ո՛վ Տէր Աստուած ,  
Բոի թէ խօսքդ պահեմ .  
Քանզի անով իմին ճամբաս ,  
Ընթացքըս կը շտկեմ :
- 2 Ամբարիշտներն ու անկրօններն  
Խումբով իս պատեցին ,  
Բայց իմ հոգւոյս փառիաքն և սէրն  
Օրէնքըդ յիշեցին :

3 Ընկեր եմ ես ան ամենուն  
 Որ վախարդ կը պահենն,  
 Եւ սուրբ բերնիդ պատուէրներուն  
 Միայն մըտիկ կ'ընենն :

**103** Ա. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Ս աղ .  
 Ճ Ժ Թ . ( 8 ) :

1 Ո՛վ Տէր , քու խօսքդ է հաստատուն  
 երկիրն քներուն մէջ յաւիտեան .  
 Ճշմարտութիւնդ է մընայուն ,  
 Քեզմով երկիր կայ անասանն :

2 Քու սուրբ խօսքովդ անոնք բոլոր  
 Հաստատ կայնած միշտ կը տենեն .  
 Քու գորութեամբդ մինչև այսօր  
 Քու հրամանիդ կը ծառայենն :

3 Թէ որ քու կիրն օրէնքդ անխախտ  
 Ինձ ցնծութիւն արդէն չըտար ,  
 Ես կ'ըլլայի անցոյս , դժբախտ ,  
 Յաւով լեցուն ու շատ անկար :

4 Ես քու կդ եմ , միշտ դուն զիս փրկէ ,  
 Ձի պատուէրներիդ միշտ փնտռեցի .  
 Ձիս չար ժողովն ընկճել կ'ուզէ ,  
 Բայց սուրբ խօսքէդ ես ոյժ առի :

5 Ամէն գործքեր թէ և ազուօր ,  
 Անշուշտ ունին որոշ վախճան .  
 Բայց խօսքըդ սուրբ՝ ամենազօր  
 Պատի մընայ միշտ յաւիտեան :

## 104 ՍՈՒՐԳ ԳԻՐԳ . ( 6 , 6 , 8 , 6 ) :

1 Պարգև է երկնային  
 Սուրբ Գիրքըն աշխարհին ,  
 Աստուածային պատգամ՝ տրուած՝  
 Լոյս տալ մարդոց մտքին :

2 Նա ինքն ուսուցանէ ,  
 Աստուած հոգի , մի է .  
 Միջնորդ , Փրկիչ միայն Յիսուս  
 Հաւտալ , պաշտել պէտք է :

3 Օրէնքն՝ սուրբ , երջանիկ  
 Կ'ընէ , կ'ըտէ , զմարդիկ .  
 Արդար , բարի է , սիրելի ,  
 Թէ ողջ մըտօք խորհիք :

4 Ունայն աշխարհք ամէն  
 Ու վայելչութիւններն ,  
 Կը ցուցընէ ան թէ կեանք կարճ ,  
 Եւ փառքն խաբող իսկ են :

5 Երկնից և գլժոխքի՝  
 Վըրայ ճիշդ կը խօսի .  
 Փառք , շարչարանք կը հաստատէ ,  
 Որ սիրտըն համոզուի :

6 Առէք համն , այն կ'ըսէ ,  
 Պաշտել Տէրն զի քաղցր է .  
 Լուծն հանելի , բերուն թեթև ,  
 Եւ անվախճան՝ վարձքն է :

7 Պարզևս այս ես սիրեմ  
 Քան մեծ դանձերն ամէն .  
 Խմաստութիւն , ճշմարտութիւն  
 Անկէ պիտի դանեմ :

8 Օրհնեալ Յիսուս , սիրով ,  
 Ճշմարտութեամբրդ քով  
 Որ սրբբութեաւ փրկուիմ ,  
 Ըրիբ հայց ազօթքով :

9 Այո , կը սրբբութիմ ,  
 Սրտանց թէ ընդունիմ ,  
 Վարուցս ու հաւատքիս կանոն  
 Ըլլալ այն վաճաքիմ :

10 Ճշմարտութեան Հողիդ ,  
Տէր , կ'աղաչեմ առջիդ ,  
Արիկէ ինձ որ կոյր մտքս բանայ ,  
Հնազանդ ընէ զիմ սիրտ :

**105** Աստուծոյ Իօտի վրայ Ընդէն հետեւ -  
Էմ . Սաղ . ՃԺԹ . (8) :

1 Տէր գըթութեան , ինձ ողորմէ ,  
Քուկին օրէնքդ ինձ սորվեցուր .  
Ճշմարտութեանդ լոյսն ինձ յայտնէ ,  
Քու փրկութեանդ իս շուտ հասցուր :

2 Ես քու ծառայ եմ կամաւոր ,  
Ձիս իմաստուն , ըզգաստ ըրէ .  
Վըկայութիւնդ՝ խօսքդ զօրաւոր  
Հողւոյս ադդէ , սրտիս տիրէ :

3 Ատենն եկաւ որ Տէր Աստուած  
Իր զօրութիւնն ՚ի գործ դընէ .  
Ձի անհաւատն և անաստուած  
Տէրօջն օրէնք կը խափանէ :

4 Անոր համար ես սիրեցի  
Պատուիրանքներդ բոլոր սրտով .  
Ազնիւ ոսկին ես սեպեցի  
Ոչինչ բան քու պատգամիդ քով :

5 Անոր համար ամէն քուկին  
 Պատուէրդ ուղիղ կը համարիմ .  
 Եւ սրտութեան համբան մը թիմ  
 Միշտ ատելով ետ կը քաշուիմ :

**106** Աստուծոյ իօնին հետք ներսնս զիս .  
 Սաղ . ՃԺԹ . (8, 6) :

- 1 Վըկայութիւնդ զարմանալի  
 է միշտ ինձ հաճելի ,  
 Անոր համար իմին հոգիս  
 Չայն միշտ պահէ պիտի :
- 2 Քու սուրբ խօսքիդ պատուիրանքներն  
 Միշտ լոյս կու տան մարդուն .  
 Մխամիտներն ու տրդէտներն  
 Կ'ընեն շուտ խմատուն :
- 3 Բերանս բացի , հառաչեցի ,  
 խօսքիդ ես ցանկացի .  
 Ճամբուդ մէջ դուն զիս հաստատէ ,  
 Չարն ալ շիշխէ ինձի :
- 4 Մեր վրայ քու լոյսըդ փայլեցուր ,  
 Մառադ լուսաւորէ .  
 Քու սուրբ օրէնքդ ինձ սորվեցուր ,  
 Ճամբադ ինձ ցուցրնէ :

5 Կ'իջնան խմին աշուրներէս  
Արցունք գետի նրման ,  
Ձի շատ մարդիկ չըպահեցին  
Օրէնքը սրբազան :

**107** Աստուծոյ խոսքն ինչ քրտնոյ յայտ զեղէ  
հասարակ զայ . Սաղ . ՃԺԹ . ( 8 ) :

1 Տես խեղճութիւնս և զիս փրկէ ,  
Ձի քու օրէնքդ ես չըմտացայ .  
Տես դատաստանս , իս ազատէ ,  
Փրկչին խօսքին ես յուսացայ :

2 Քու փրկութիւնդ է հեռացած  
Չար նենգաւոր մարդիկներէն ,  
Որ քու օրէնքդ են աքսորած ,  
Եւ սուրբ խօսքերդ միշտ կ'անարդեն :

3 Ով Տէր Աստուած , վերէն նայէ ,  
Ձի պատուիրանքդ ես սիրեցի .  
Քու գրթութեամբդ ինձ ողորմէ ,  
Ձիս ապրեցուր , քեզ հաւտացի :

4 Ըսկիզբն ու հիմ քու սուրբ խօսքիդ  
Է աներկբայ ճշմարտութիւն .  
Դատաստաններն անսուտ բերնիդ  
Են յաւիտեան արդարութիւն :

# 108 Առաջին գրքի խորհուրդի Ժամկետի (8) :

- 1 Աղօթքքս , Տէր ողորմութեան ,  
Քուկին առջից միշտ մտնենայ .  
Եւ սուրբ խօսքիդ ճշմարտութեան  
Սիրտս հեռեոյ , լըսող ըլլայ :
- 2 Լեզուս քու խօսքդ պիտի պատմէ ,  
Ձի անիկա է միշտ շխտակ .  
Պատուիրանքներդ պիտի գովէ ,  
Ձի են արդար և լուսարձակ :
- 3 Ես ոչխարի պէս կորսուած  
Թափառելով մոլորեցայ .  
Տէր , քու ծառայ միշտ ես փնտռած ,  
Ձի պատուէրներդ ես շքանայ :
- 4 Տէր , քու աջովդ ձեռքէս բռնէ ,  
Ձի պատուէրներդ ես ընտրեցի .  
Թող անձս ապրի ու քեզ օրհնէ ,  
Եւ քու շքանքդ օղնէ ինծի :



# 109 Մենք չենք ձրդեր Սուրբ Գիրքը, (7, 6, 8, 6):

1 Մենք չենք ձրդեր Սուրբ Գիրքը,  
 Աստուածաշունչ մատեանն.  
 Քանզի մանկանց է առաջնորդ,  
 Երոց ալ դաւազան:  
 Ճըրագ է նա, լոյս փառաւոր  
 Կու տայ մեր մութ ճամբուն.  
 Կը ցուցընէ փառք երկնաւոր,  
 Բընակարան սիրուն:  
 Մենք չենք ձրդեր Սուրբ Գիրքը,  
 Աստուածաշունչ մատեանն.  
 Քանզի մանկանց է առաջնորդ,  
 Երոց ալ դաւազան:

2 Մենք չենք ձրդեր Սուրբ Գիրքը,  
 Քանզի միայն անկէ  
 Երկնից ճամբան կրնանք գանել,  
 Փախչիլ ալ դըժոխքէ:  
 Անոր մէջ կը կարդանք թէ ո՛վ  
 Իջաւ հոս երկինքէն,  
 Որ իր արիւնը թափելով  
 Մեզ ազատէ մեղքէն:  
 Մենք չենք ձրդեր Սուրբ Գիրքը, Լոյն:

3 Մենք չենք ձըգեր Սուրբ Գիրքը,  
 Այլ քարոզենք պիտի,  
 Որ արձագանգը ազդերէն  
 Ծովուն անդին լուի,  
 Եւ փրկութեանը ձայն լրսեն  
 Մարդիկ ամէն երկիր.  
 Մենք ալ Տէրոջը սուրբ խօսքէն  
 Բընաւ չենք հրաժարիր:  
 Մենք չենք ձըգեր Սուրբ Գիրքը, Եւրէ:

## Հ Ր Ա Ի Է Ր Ն Ե Ր

Ե Ի

## Զ Գ Ո Ի Շ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

### 110 ՅԷ-----Է Ե՛ ԿԵ՛ՐԵ՛ :

- 1 Յխուսի էկ պյօր :
- 2 Կը փրկէ քեզ պյօր :
- 3 Հաւատա գուն պյօր :
- 4 Ինք կարող է պյօր :
- 5 Ինք պատրաստ է պյօր :
- 6 Կ'ընդունի քեզ պյօր :
- 7 Փնտրուէ զինք պյօր :
- 8 Ո՛հ , կանչէ զինք պյօր ,
- 9 « Ողորմէ ինձ » պյօր :
- 10 Կը լըսէ քեզ պյօր :
- 11 Կը ներէ քեզ պյօր :
- 12 Կը մաքրէ քեզ պյօր :
- 13 Կը սիրէ քեզ պյօր :
- 14 Մի մերժեր զինք պյօր :
- 15 Ո՛հ , գրկէ զինք պյօր :



# 112 Տէր-Է Ե-ՆԷ ( 8 , 6 ) :

1 Տէրօջը ձայնը լըսեցի .  
 Ըսաւ , « Ինձի եկուր .  
 Գըլուխըդ , ով յողնած հողի ,  
 Կուրծքիս վրայ պառկեցուր » :  
 Ինչպէս էի անոր եկայ ,  
 Կոյր՝ մերկ՝ յողնած՝ արտում :  
 Հոս ապաստանարան գըտայ ,  
 Ան ինձ արւաւ խնդում :

2 Տէրօջը ձայնը լըսեցի .  
 « Զըբիարար խըմէ  
 Կենաց ջուրէն » , ըսաւ ինձի ,  
 « Եւ խըմելով ապրէ » :  
 Եկայ , դաւաթըս լեցուցի  
 Այն կենսատու ջըրով .  
 Անով ծարաւըս անցուցի ,  
 Հիմա կ'ապրիմ անով :

3 Տէրօջը ձայնը լըսեցի .  
 « Ես աշխարհիս լոյսն եմ .  
 Եկուր , գիշերդ պիտի անցնի ,  
 Յորեկդ փայլեցընեմ » :









5 Գուցէ ձայնիս մրտիկ ընէ,  
 Գուցէ շնորհաց հասնիմ.  
 Իր գաւազանն երկընցունէ,  
 Որ գպչելով ապրիմ:

6 Գուցէ աղերսըս ընդունի.  
 Բայց թէ և մերժըւիմ,  
 Ուրիշ տեղ յոյս չըկայ ինձի,  
 Պիտի հոն կորսըւիմ”:

7 Ա՛յ ոչ, ով մեղաւոր խոնարհ,  
 Հոն չես կրնար մեռնիլ.  
 Ոչ սատանայ և ոչ աշխարհ  
 Կրնայ քեզի հասնիլ:

8 Հոն, հոն միայն ես ապահով,  
 Անոր խոսամունքն ունիս.  
 Քեզ կ'ընդունի անհուն սիրով,  
 Ու յաւիտեան կ'ապրիս:

**116** ՄԵՆՆԵՐԱՆ ԻՐԿ Ե ԵՐԿՐԻԿ • (8, 6) •

1 Ով մեղաւոր մարդ, խեղճ թշուառ,  
 Նայէ որ քեզ ճանչնաս.  
 Մուտ աշխարհիս փառացն համար  
 Գրախոէն դուրս չըմբնաս:

- 2 Փռւճ բաներու դուն խելք մի տար ,  
 Զանա զանոնք մտունաս .  
 Զի այս աշխարհս յանկարծարար  
 Պիտի թողուս երթաս :
- 3 Յիսուս նստած յաթոռ փառաց  
 Մեղքերդ պիտի քննէ .  
 Դուն մի յուսար որ ոսկւոյ դանձ  
 Նոյն օրն քեզի օգնէ :
- 4 Քեզ պատրաստուած է փառք գրախտին ,  
 Դեռ չես անկէ զրկուած .  
 Քեզ կը կոչէ ձայն Յիսուսին .  
 Լքսէ որ ետք չի լաս :
- 5 Այն սուրբ ձայնին շուտ հնազանդէ ,  
 Վաղուան ան մի ձրգեր .  
 Այս մեծ շքնորհքն ու ժամն յարդէ ,  
 Զի մէջմ' ալ չես դաներ :

## 117 Մ - - - - - Գ - - - - - Բ Ի - - - - - ( 8 ) :

- 1 Գանի որ մահը կ'ուշանայ ,  
 Ողորմութիւն և յոյս ալ կայ .  
 Բայց , ս՛հ , շուտով խորունկ գիշեր  
 Պիտի կտրէ ամէն յոյսեր :

2 Այսօր Աստուած կը հրաւիրէ ,  
 կենաց խօսքերն ի՞նչ քաղցըր է .  
 Ով մեղաւոր , վազէ , եկու ,  
 Պատրաստ է Տէրն քեզ ներելու :

3 Արագ թւերն ժամանակին  
 Քեզ գերեզմանը կը տանին .  
 Եւ այն ատեանն ուր յոյս չըկայ՝  
 Հոգիդ պիտի ներկայանայ :

4 Այն աւերակ , անյոյս երկիր  
 Ուրախութեան լոյս չըծագիր .  
 Աստուած չըկայ աղօթք լըսող ,  
 Յիսուս չըկայ հոգիդ փրկող :

## 118 ՄԵՆՆԵՆ ԵՐԵՐՆԷ՛՛ ( 7 . 6 տող ) :

1 Քարեղէն սիրտ , արդ զզջա ,  
 Կակուղցիր խաչէն յաղթուած .  
 Տես արիւնն հոգին վըրայ ,  
 Եւ մարմինը շախջախած .  
 Մեղաւոր , առ ի՞նչ ըրիր .  
 Տէրը դուն ըսպաննեցիր :

2 Մեղքըդ Տէրն ըսպաննեցին ,  
 Գամ զարկին իր մարմինին ,  
 Փուշերով պըսակեցին ,  
 Խօթեցին նիզակ կողին ,  
 Իր հոգին ան զոհ ըրաւ ,  
 Քու մեղացդ համար մեռաւ :

3 Արդ փրկչին այս մահն պիտի  
 Քու հոգւոյդ ունայն ընես .  
 Իր արիւնն նորէն պիտի  
 Քու ստիցդ կոխան ընես :  
 “Ոչ . ով Տէր , մեղքէս զատուիմ ,  
 Ընդունէ կոտորած սիրտ իմ” :

## 119 ՄԵՆՆԵՆ ԻՆՆԵՆ ( 10 ) :

1 Ով զարմանալի սէր Աստուածային ,  
 Որ ինք մեր աշխարհն խրկեց իր Որդին .  
 Եկաւ մեզ փրկեց մահէն , դըժոխքէն ,  
 Ու մեզ մօտեցուց մեր Ըստեղծողին :

2 Բոլոր մեղքերնիս վըրան ինք առաւ ,  
 Խաչին վըրայ Տէրն մեր տեղը մեռաւ .  
 Իր ամենասուրբ արիւնը և կեանք ,  
 Մեզի փրկելու անհուն զին տըւաւ :

- 3 Տեսէք մեր ֆրկիչն՝ որ մահը յազթած,  
 Անճառ մեծ փառքով երկինքն է ելած .  
 Մեզի համար հոն կը բարեխօսէ,  
 Իր Հօրն Աստուծոյ աջ կողմը նստած ։
- 4 Անկէ գատաստան պիտի Տէրն իջնէ,  
 Ահեղ փողերով պիտի մեզ կանչէ .  
 Զսկոյն ալ բացուի ամէն գերեզման,  
 Ու ննջեցեալներն իր գատը բերէ ։
- 5 Արգար Դատաւոր, ինձի շքնորհք տուր,  
 Անկէ ապահով իմ անձըս անցուր .  
 Եւ քու արիւնովդ մեզքէն մաքրուած,  
 Ի գունդս հրեշտակաց հոգիս բազմեցուր ։

**120** Ուշ հարցիչ . (10) :

1

Ինչո՞ւ դուք ըսէք թէ Դեռ կանուխ է  
 երկնից ու մահուան վրայօքը խորհիլ .  
 Երանիկ մը շուտով թումիլ հընար է,  
 Ինձի ալ այսօր հընար է մեռնիլ ։

2

Թէ որ ապրատամբ հոգիս անարգէ  
 Տէրոջը անհուն շքնորհքն և բարի,  
 Վերջն ալ սուրբն Աստուած պիտի զիս մերժէ,  
 Երկնից փառաց մէջ պիտի շքնդունի ։



3 Ո՛հ, յարածամ պատրաստ կեցիր,  
 Եւ քու պարտքերըդ լաւ ճանչցիր,  
 Բարիք գործէ, միջոց ունիս,  
 Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս:

4 Ո՛վ Սուրբ Հոգի, դուն ինձ օգնէ,  
 Մահուան համար դիս պատրաստէ,  
 Սրբացուցիչ որ քեզ ունիս,  
 Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս:

5 Ո՛վ Հայր, Որդի և Սուրբ Հոգի,  
 Երբորդու թիւն ըսքանչեւի,  
 Ես որ կնիքդ ճակատս ունիս,  
 Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս:

## 122 Թ-ԲԵԿԻՆԻ ԿՐԹ. (6, 6, 6, 6, 8, 8) :

1 Հնչեցուցէք փողերն,  
 Ամէն ազգ աշխարհիս  
 Մինչև երկրին ծայրերն  
 Լըսեն այս աւետիս.  
 «Հասաւ մեծ Յորելեան տարին,  
 Ո՛վ մեղաւորք, դարձէք Փրկչին»:





2 Տես Աստուծոյ տապանն ,  
 Նայէ այն բաց դռանն .  
 Շուտով մտիր հոն բնակէ ,  
 Ոչինչ յոյսերդ ձրդէ :

3 Հանդիստ պիտի ըլլաս ,  
 Եւ շատ ուրախանաս .  
 Ամէն երջանկութեամբ լեցուիս ,  
 Տէրոջմով փրկուիս :

4 Ով անհանդիստ հոգիս ,  
 Դագրէ , առ աշխարհիս  
 Մէկ բեւեռէն մինչև միւսին  
 Հանդիստ չըկայ քեզի :

124 Ա. - Էրեւոյ - Բ. - 11, 10. յատուկ ) .

1

Եկ տրտմալից դու , երբ ցաւ քեզ պատած է ,  
 Եկ շընորհաց աթուին ջերմ , խոնարհ .  
 Հոս բեր քու սիրտըդ երբ վիշտով խոց  
 ուած է .

Հոս կը դըռանեն դեղ ամէն ցաւ ք դժուար :

2

Հոս մոլորեալն կը գտնէ կենաց լոյսը ,  
 Հոս ալ տրտմեալըն ցնծում անբախտ .  
 Մըխիթարիչն հոս կու տայ խըրախոյսը .

Հոս կը գտնենն դեղ ամէն ցաւ ք դժուար :

- 3 Հոս կենսատու երկնից շուրջ բղխեալ է,  
 Սէր կը վաղէ ակթուէն անդադար.  
 Գեղ է կոչումը, պայմանն հաւատալ է.  
 Հոս կը գտնեն գեղ ամէն ցաւք դժուար:

## 125

ԵՐԻ-ՅԻ ԷՐ-ԻՐ Է--ԻՆ:

- 1 Երջանիկ փարախ, երջանիկ արօտ.  
 Բարի Հովիւին փարախն.  
 Յաւիտեան ալ կայ մէկ Հովիւ, մէկ հօտ.  
 Ալ վտանգ հոն չը կայ, ոչ վախ:  
 Կը ծաղկի հոն վարդ, կը ծաղկի շուշան.  
 Գարուն անդադար երկինքն.  
 Ոչ ցուրտ, ոչ ալ տաքութիւն կը զգան  
 Երջանիկ փարախին գառինքն:
- 2 Կան փոքրիկ թումբեր, ուր որ այս երկրիս  
 Յոյսերը պառկած կը ննջեն.  
 Գետնի տակ թաղուած են և աչքերնիս  
 Այն գետինն արցունքով կը թրջեն:  
 Բայց ճրագը որ կը պակսի երկրէ  
 Վառած կը փայլի երկինքն:

Եւ բարի Հովիւք սիրով կը պահէ  
Երջանիկ փարախին գառինքն :

3 Սրտերնուս վշտովն՝ ալ մինակ կ'երթանք  
Կենաց արամալից ճամբան .

Վասն զի ցուրտ հողը լեցուած տեսանք  
Սպիտակ ճակատին վրան :

Սակայն հաւատքով ու զըւարթ աչքով  
Արդ վեր կը նայինք երկինքն .

Ժողովուած են հոն , և ալ ապահով  
Երջանիկ փարախին գառինքն :

4 Հոն իր ձեռքն ունի զօրաւոր հրեշտակ  
Մէկ գիւրք , որ է գիւրքն կենաց .

Այն գիւրքին մէջ ալ կան , գրուած յատակ ,  
Անթիւ անուններ մանկանց :

Այս կենաց կարճ ճրգնութեանն ազատ  
Մտած են արդէն երկինքն .

Կը վայելեն ալ հոն բերկրութիւնք առատ  
Երջանիկ փարախին գառինքն :

## 126

§--ն --նին+ 1 Բ--ը--նն :

- 1 Ով տուն, որ ես դու ի բարձունս  
 Հուսեղէն գետոյն քով կառուցուած,  
 Ուր չքնաղ, անմահ են ու հազուած  
 Ամէն սուրբք ըսպիտակ վերարկուս  
 Ի բարձունս,  
 Մտածմունքս ես, տունդ ի բարձունս :
- 2 Ով բարեկամք մեր, ի բարձունս,  
 Որ նախորդք մեր էք ի մէջ ճամբուս,  
 Ինչ երգեր կը հնչէք օղէն վեր  
 Աստուծոյ պալատին մէջ, տան ձեր,  
 Ի բարձունս,  
 Մտածմունքս ես, տունդ ի բարձունս :
- 3 Փրկիչս է այժմ ի բարձունս .  
 Ազգականքս, բարեկամքս հոն հանդչած .  
 Ես ալ ցաւ ու հոգերս թողուցած  
 Սըլանամ այն երկիրն օրհնութեանց :  
 Ի բարձունս,  
 Փրկիչս է այժմ ի բարձունս :
- 4 Շուտ պիտ'երթամ տունն ի բարձունս,  
 Բանդի ես կը տեսնեմ ծայրն ճամբուս .

Իմ սրտիս սիրելիքն ի բարձունս  
 Հանապաղ ակն ունին երթալուս  
 Ի բարձունս,  
 Շուտ պիտ'երթամ տունն ի բարձունս :

127 (95) Գ-ւ կ'ուղե՞ս . ( յատուկ ) :

1 Կը ճամբորդենք տունն երկնային .  
 Գալ կ'ուղե՞ս , գալ կ'ուղե՞ս ,  
 Որ հոն երգենք սէրն մեր փրկչին .  
 Գալ կ'ուղե՞ս , գալ կ'ուղե՞ս :  
 Բիւրաւորներ այն տունն հասան ,  
 Իւ հոն անդուլ կ'ուրախանան ,  
 Ու հիմա բիւր ճամբորդք ալ կան .  
 Գալ կ'ուղե՞ս , գալ կ'ուղե՞ս :

2 Կ'երթանք Գառնուկը տեսներու ,  
 Գալ կ'ուղե՞ս , գալ կ'ուղե՞ս .  
 Իր սուրբ անունը գովելու ,  
 Գալ կ'ուղե՞ս , գալ կ'ուղե՞ս :  
 Կենաց պրսակ պիտի գրնենք ,  
 Ու ոսկիէ քրնար զարնենք ,  
 Յնձում ալ լիովին վայլենք .  
 Գալ կ'ուղե՞ս , գալ կ'ուղե՞ս :

- 3 Ով դուն յոգնած բեռնաւորուած ,  
 Գալ կ'ուզե՞ս , գալ կ'ուզե՞ս .  
 Քեզի հանդիստ կայ պատրաստուած ,  
 Գալ կ'ուզե՞ս , գալ կ'ուզե՞ս :  
 Քեզ ընդունիլ Տէրն կը բաղձայ .  
 Ով որ անոր կը հաւատայ՝  
 Տէրովը փառքն պիտի տեսնայ .  
 Գալ կ'ուզե՞ս , գալ կ'ուզե՞ս :
- 4 Ասկէ ուրիշ ճամբայ չըկայ .  
 Գալ կ'ուզե՞ս , գալ կ'ուզե՞ս .  
 Ապաշխարէ ու հաւատա .  
 Գալ կ'ուզե՞ս , գալ կ'ուզե՞ս :  
 Փրկչիդ այս ձայնն մըտիկ ընեա .  
 «Խաչդ առ , եկուր խճ ետեւէս ,  
 Ու փրկութիւնս պիտի տեսնես» .  
 Գալ կ'ուզե՞ս , գալ կ'ուզե՞ս :
- 5 Ո՛ր էր որ այս ձայնն լրտէի .  
 Գալ կ'ուզեմ , գալ կ'ուզեմ .  
 Շուտով ճամբայ ելլեմ պիտի .  
 Գալ կ'ուզեմ , գալ կ'ուզեմ :  
 Չար ընկերներս պիտի մերժեմ ,  
 Ու լայն ճամբան պիտի ձրգեմ ,  
 Տէրովըս հետ ապրիլ կ'ուզեմ .  
 Գալ կ'ուզեմ , գալ կ'ուզեմ :

128 Մէկ ժամ էլ ինչ , Գի Թո էլ ինչ . (Ց , 6) :

1 Մէկ ժամ մը կայ , մէկ կէտ մը կայ ,  
Թէպէտ մեզ անձանօթ .

Ամէն մարդու վրճիւն կու տայ ,  
Կամ փառք և կամ ամօթ :

2 Գրծով մը անտեսանելի ,

Անյայտ մեր աչքերէն ,  
Տէրօջը գութը կը գատուի  
Անոր բարկութենէն :

3 Բայց մարդը այն գրծէն անցած՝

Գուցէ անհոգ մընայ ,  
Մինչև անցոյս և կորսուած՝  
Դժոխքի մէջ արթննայ :

4 Տէրն ո՞րչափ պիտի համբերէ

Անոնց որ մեզք գործեն .  
Ե՞րբ բարկութեամբ պիտի ըսէ ,  
« Հանգիստըս չըմտնեն » :

5 Ո՞ւր է այն ահաւոր սահման .

Յոյան ե՞րբ կը վախճանի .  
Ո՞վ մեղաւորք , այս պատասխան  
Վերէն կու գայ ձեզի .

6 «Այսօր ձեր Աստուծոյն ձայնին  
 Թէ որ պիտի լրտէք,  
 Չեր սիրտը ապատամբութեան  
 Աւ մի խտացունէք» :

## 129 Չ-բ-բ-ն է-բ-ր . Սաղ . Ծ . (8) :

- 1 Աստուածներուն Աստուածն և Տէր  
 Ինք խօսեցաւ բոլոր երկրին,  
 Եւ Սիօնէն Տէր մարդասէր  
 Կանչեց ամէն ազգ մարդկային :
- 2 Ով ժողովուրդս, մրտիկ ըրէ,  
 Քանզի քեզի պիտի խօսիմ.  
 Ով իսրայէլ, քու միտքդ պահէ,  
 Որ ես քուկին Փրկիչդ կ'ըսուիմ :
- 3 Ես քու տունէդ չեմ ընդունիր  
 Ոչ զբարակ, ոչ նոխազներ .  
 Իմն է աշխարհ, բոլոր երկիր,  
 Անօթենամ՝ քեզ չեմ ըսեր :
- 4 Չբարակաց միս չեմ ուտեր,  
 Ինձ նոխազաց արիւն պէտք չէ .  
 Չոհն օրհնութեան կ'ուզէ միշտ Տէր,  
 Դուն Բարձրելոյն ուխտդ կատարէ :



**130** Աստուծոյ եւ ժողովուրդի ստորոտէն .  
Սաղ . 2Ա . (10) :

1

Արտանց ցնծացէք Տէրոջը առջին ,  
Զի ան է մեզի ոյժ եւ զօրութիւն .  
Ազազակեցէք մեր մեծ Արքային ,  
Անով մենք գլխանք կեանք եւ փրկութիւն :

2

Ով իմ ժողովուրդս , լըսէ ասիկա ,  
Ֆեզի վրկայեմ թէ որ միտք առնես .  
Օտար աստուածներ քու մէջըդ չըլլայ ,  
Երկրպագութիւն անոնց դուն չընես :

3

Ես եմ Տէր Աստուածդ որ եզխատուն  
Ըզքեզ հանեցի , քանզի Փրկիչդ եմ .  
Լայն բաց քու բերանդ , ու ես երկինքէն  
Շուտով անիկա պիտի լեցունեմ :

4

Ո՛ւր էր ժողովուրդս մտիկ ինձ ընէր ,  
Եւ իմ ճամբայիս մէջն ալ միշտ մընար .  
Իրեն թշնամին շուտով կը փլչէր ,  
Ու զինք փրկելու իմ ձեռքս կ'երկննար :

# 131 Թ-Ի-Դ-Ե Գ-Ի-Ն-Ի-Գ-Ի-Գ-Ի-Ն-Ն (8, 7, 4, 7):

1 Օ՞ն, եղբարք, Տէրոջն գիմենք շուտ  
Սըդալի խոնարհ սրտով .

Մեղքերնիս խոստովանինք մենք՝  
Շընորհաց Տեառն յուսալով .

Յոյս կայ այս տեղ ,

Շնորհք բաշխող Գահին մօտ ենք :

2 Մեղք ըրինք անհող , անսանձ խիտ ,  
Ապերախտ եղանք 'ւ անգութ .

Աստուծոյ անուան ամօթ ենք ,

Թող յիշենք հիմա մեր ուխտ .

Յոյս կայ այս տեղ ,

Շնորհք բաշխող Գահին մօտ ենք :

3 Մենք՝ ալ չենք Եկեղեցւոյն փառք ,  
Ո՞հ , հաւատարիմ չեզանք .

Սէր միմեանց հաղորդելու տեղ ,

Թշնամի անհաշտ եզանք .

Յոյս կայ այս տեղ ,

Շնորհք բաշխող Գահին մօտ ենք :

4 Հիմա մեզ այցելութեան շնորհք \*  
Շուտ խնդրենք Սուրբ Հոգիէ՛սդ

Որ մեզի է զօրութիւն մեծ  
 Չար դիւին նեախց ընդդէմ.  
 Յոյս կայ այս տեղ,  
 Շնորհք բաշխող Գահին մօտ ենք :

5 Ուխտ ընենք արդ միարան նոր,  
 Սուրբ սիրով ապրիլ, գործել  
 Միշտ արթուն՝ Տէրոջն այգւոյն մէջ,  
 Զինքն այնպէս վառաւորել.  
 Յոյս կայ այս տեղ,  
 Շնորհք բաշխող Գահին մօտ ենք :

## 132 «Ա՝ Դ Է Ե Դ՝» . (8, 7) :

1 Ի՞նչ հոգեր չորս դիզ պատած է,  
 Ով հոգիս . քաղցած դուն ես,  
 «Հաց կենաց» քեզ պատրաստուած է,  
 Թէ սիրով վառուած յաղթես :

2 Մի վախնար թէ մահը մօտ է,  
 Նա զրկել կարող չէ քեզ  
 Այն կեանքէն, որ Տէրդ շնորհած է,  
 Թէ սատանային յաղթես :

- 3 Օծութիւն ունիս Սուրբէն դուն,  
 «Երկնային մաննայ» միշտ քեզ  
 կը թափուի առատ յերկնից բուն,  
 կիրքերուդ թէ որ յաղթես :
- 4 Խիստ շատցա՞ն թշնամիներդ,  
 վախերով պատա՞ծ ալ ես :  
 «Ատող առաւօտեան» փրկիչդ  
 քեզ կու տայ թէ որ յաղթես :
- 5 Զգուշացիր ճամբաներուդ դու,  
 Հոս հանդերձդ չաղտոտես :  
 «Մէջ կենաց Գրքին» անուն քո  
 Մնայ անշինջ թէ որ յաղթես :
- 6 Խարերայք պատա՞ծ են չորս դիդ,  
 Մոլորցնել շանան թող քեզ :  
 Քու փառաց «պրսակդ» բռնէ պինդ,  
 Միշտ քուկդ է այն թէ յաղթես :
- 7 Խեղճութիւնք ու տառապանք շատ  
 Ի խրատ գիպա՞ծ են քեզ :  
 Գահն երկնից կը ժառանգես արդ,  
 Հաւատքով թէ որ յաղթես :

133 Գ-Ն-Ն-ՅԷ Գ-Ը ԿԲ-ԿԸ . (8) .

- 1 Մինչև երբ ես խոր հառաչանք  
Մեզքէն խոցուած ընեմ պիտի .  
Ո՛հ , մատուցի շատ աղաչանք ,  
Բայց չըլլեսց փրկիչս ինձի :
- 2 Կ'աղաղակեմ կրկին կրկին  
Թ'ախանձանօք խիստ ողորմուկ .  
Չեղայ արժան պատասխանին ,  
Դեռ կը մընամ թշուառ խեղճուկ :
- 3 Արդեօք հիմա յուսահատեալ  
Ալ ետ երթամ կորսուելու ,  
Քանանացի կինն անարդեալ  
Ինձ օրինակ չէ՞ յուսալու :
- 4 Հողիս , չըկայ ուրիշ մէկ յոյս ,  
Դիւայ կըրից բռնութենէն  
Որ ազատիս , միայն Յիսուս .  
Անով կ'առնուս չընորհք ամէն :
- 5 Դու հաւատքով ել Գողգոթայ ,  
Խաչին ոտքը լայ , խոնարհէ .  
Սրտանց ըսէ , « ֆեզի եկայ ,  
Որդի Դաւթի , ինձ ողորմէ » :

6 Իբրև որդի թէ չեմ արժան ,  
 Ով Տէր , առատ շքնորհքներուդ ,  
 Թող սեղանէդ ինկած փշրանք  
 Ինձ շքնորհուի , կ'ուտեմ ես կուշտ :

**134** “ Բեռն է՞նչ եղաւ , ով իրանի՞ Բարոյ ,  
 Ե՛լի : ” Թովն . Ա . 6 . ( 8 ) :

1 Քեզ ի՞նչ եղաւ . մի քրնանար ,  
 Մի , Թովնանին պէս մի խորդար .  
 Ել , արթընցիր , ով իմ հողիս ,  
 Վըտանդի մէջ կը տեսնեմ գիւ :

2 Ահե՞ղ վըտանդ - մահը կու գայ ,  
 Արագութեամբ կը մօտենայ ,  
 Որ խեղճ մարմինըդ հոս ձրգէ ,  
 Քեզ ատեանին առջին հանէ :

3 Ահե՞ղ ատեան սուրբ ու արդար ,  
 Ողորմութիւն չիք - չես գանար .  
 Ամենազէտ , ատող շարաց ,  
 Բազմի դատել , Որ է՛ն Աստուած :

4 Ահեղ Աստուած , « մաշող կըրակ » ,  
 Քննող օրտից , որոց միակ  
 Ինքն է տեղեակ , վրկայ չուզեր ,  
 վրճիւ կու տայ , ալ ետ չառներ :

5 Ահեղ վրճիւ անդառնալի ,  
 Ծոյլ քրնացողն թող կորսուի ,  
 Անյուսու թեամբ դրժոխք ձրգուի ,  
 Մինչ յաւիտեան հոն տանջուի :

6 Ուրեմն ելիր , մի յապաղիր ,  
 Փութով այն նեղ դռնէն մտիր .  
 Բնաւ մի շեղիր , յառաջ վազէ ,  
 Եւ անդադար չընորճ ք խնդրէ :



## 135 Մեղի Ի---Է---Ի--- ( 8 ) .

- 1 Ինչո՞ւ ասանկ մեղքերս սիրեմ,  
 Ունայն հաճոյք ինչո՞ւ փնտաւեմ.  
 Երկնից, դժոխքի վրայ չը խորհիմ,  
 Մտնամ հոգիս, աղօթք ձըգեմ:
- 2 Ինչո՞ւ քու սուրբ խօսքերդ կարգամ,  
 Եւ միշտ սորվիմ քու օրէնքներդ .  
 Ինձ ի՞նչ օգուտ զանձնք նանչնամ,  
 Չեմ կատարեր սուրբ պատուէրներդ :
- 3 Ի՞նչ խիտ եմ ես քարի նրման .  
 Ի՞նչպէս անշահ են խորհուրդներս .  
 Տէր, ողորմէ տրկարութեանս,  
 Ներէ բոլոր գործած մեղքերս :
- 4 Բաց ականջներս լրսել քու ձայնդ,  
 Շընորհք տուր ինձ՝ աղօթք սիրել .  
 Քանզի, ով Տէր, դուն կը հաճիս  
 Մեղաւորաց աղօթքն լրսել :



# 136 ՁԱՆԻՆԻ ԳԼՈՒԹՅՈՒՆ ( 8 , 6 ) .

1 Ո՛վ Տէր գրթած , որ կը լըսես  
Աղօթքը խեղճերուն ,  
Ամէն արցունք ալ կը սրբես  
Աչքէն տրամածներուն :

2 Տես աթոռիդ առջին ինկած  
Ծառաց , խեղճ մեղաւոր .  
Քեզ փնտրուել չե՞ս հրամայած ,  
Ինձի չըսիր « Եկուր » :

3 Միթէ մեղքիս վախը կրնա՞յ  
Ձիւ քու քովէդ վարել .  
Ինձի միայն յոյս կը մընայ  
Շընորհք առջիդ գանձել :

4 Թող քու անհուն ողորմութիւն  
Իմ յոյսս հաստատէ .  
Թող բրձ շիտ ձայնդ ցնծութիւն  
Սրտիս մէջ տարածէ :

# 137 ՄԷԼ՝՝՝՝՝՝՝ ԳԷԷ՝՝՝՝՝՝՝ ԵԷԷԷԷ . ( 8 ) :

- 1 Եղբուկ եմ ես , ով Տէր , աղքատ ,  
Մերկ եմ ու կոյր և յուսահատ .  
Քեզմէ 'ի զատ որո՞ւ երթամ ,  
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :
- 2 Իմ մէջս չըկաց արդարութիւն ,  
Յոյս , փրկութիւն կամ քաւութիւն .  
Ինչպէս որ եմ , քու սաքդ կ'իյնամ ,  
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :
- 3 Դուն քու արիւնըդ թափեցիր ,  
Եւ խեղճ մեղաւորիս ըսիր ,  
“ Գու փրկութիւնըդ ես կ'ըլլամ ” .  
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :
- 4 Հոգին և հարսն՝ “ Եկուք ” , կ'ըսեն ,  
“ Ձբբի խումէ կենաց չուրէն ” .  
Ես կը լըսեմ ու կ'արարեմ ,  
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :
- 5 Դուն ալ սիրով զիս ընդունէ ,  
Բոլոր մեղքերըս , Տէր , ներէ .  
Լըւա զիս որ մաքուր ըլլամ .  
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :



Քանզի, ով Տէր, դուն զոհեր չես կամիր,  
 Եւ ողջակէզներ բընաւ չես հաւնիր.  
 Տէրող հաւնած զոհն կտարած հողին է,  
 Խոնարհ սրտին սէրն անոր հանդ է:

## 139 ՆՊԷ. Սաղ ՄԱ. (8),

- 1 Ով Տէր, ներէ, ցոյց դըթութիւնդ,  
 Թող ապտտամբն գղջայ, ապրի.  
 Չէ՞ անսահման ողորմութիւնդ.  
 Չարն չը՞կրնար յուսալ քեզի:
- 2 Յանցանքս մեծ են, բայց քոյդ շնորհաց  
 Չօրութենէն չեն գերադոյն.  
 Ինչպէս բնութիւնդ չունի սահման,  
 Թող սէրդ ըլլայ անոր հանդոյն:
- 3 Ամէն մեղքէս լըւա հողիս,  
 Ո՞հ, յանցաւոր խիղճքս մաքրէ.  
 Ահա մեծ վիշտ այս է սրտիս,  
 Գործած մեղքերս իմ ողբըս է:
- 4 Մեղքս ամօթով կ'ստատովանիմ  
 Քու օրինացդ, շնորհացդ ալ գէմ.  
 Տէր, թէեւ ես մահուան դատուիմ,  
 Արդար ըլլալդ կը հանաչեմ:

5 Վրէժխնդրու թեամբ թէ շունչս կտրես,  
 Ի մահ արդար քեզ դաւանիմ՝  
 Թէ որ հոգիս դրժոխք դրկես,  
 Արդար օրէնքդ զայն կը հաւնին ։

6 Ա.Ղ թող խոստմանցդ ապաւինիմ,  
 Քու խօսքդ բառոյդ է յախտեան ։  
 Սաստիկ վախէս թող ազատուիմ,  
 Փրկէ՛, Տէր, անձս թշուառական ։

Ա Ղ Օ Թ Ք

140 Աւեր-իւն շր-ի-նը և հ-րի-ն-ի-նը .  
(7) :

- 1 Աղօթքն է խօսք շատ դօրաւոր ,  
Խորին բաղձանք կտորած սրտի .  
Ան է մեղի խիստ շահաւոր ,  
Զի Տէրն անով մեղ կ'ընդունի :
- 2 Մարդիկ անով կեանք կը գտնան ,  
Ազատութիւն մեղքի ուժէն .  
Եւ յաղթելով դժբանց մահուան ,  
Ուրախութեամբ երկինք կ'ելլեն :
- 3 Անով երկիր , երկինք վերին ,  
Մէկզմէկու կը միանան .  
Զի Հայր Աստուած , Աստուածորդին  
Անով կ'իջնան 'ի մէջ մարդկան :
- 4 Եւ Սուրբ Հոգին մեզ օգնելով՝  
Աղօթքներնիս Տէրն կը լրտէ .  
Յիսուս իր ուխտը յիշելով՝  
Ամէն բան մեզ կը պարգևէ :

5 Յիսուս , ինձի ականջըդ դիր .  
 Ես սիրաս տըւի քեզի բոլոր .  
 Դուն որ անդու աղօթք ըրիր ,  
 Աղօթք ընել ինձ սորվեցուր :

**141 Աւերակի -- Սպանելն Կէմ -- 257 . ( 8 , 6 ) :**

1 Տէր , դուն տըւիր մեզի խըրատ ,  
 Որ միշտ աղօթք ընենք .  
 Զի աղօթքով կ'ըլլանք ըզդաստ ,  
 Անով մենք կը յաղթենք :

2 Արդ ընդունէ զայս մեր մաղթանք ,  
 Օգնէ քոյդ որդեգրաց .  
 Քու փորձընդ տուր օրինակ  
 Յաղթել ամէն չարեաց :

3 Դուն յանապատն Սուրբ Գրոց խօսքով  
 Փորձելը յաղթեցիր ,  
 Աշխարհս ու դեր յաղթելով  
 Աստուած միայն պաշտեցիր :

4 Նոյն պատասխան մեզ սորվեցուր ,  
 Որ աշխարհիս յաղթենք .  
 Նոյն զօրութիւն և շնորհք մեզ տուր ,  
 Դիւին ալ դէմ գրնենք :

- 5 Աշխարհս է մեզ պանդխտութիւն  
 Յաւոց ու փորձութեանց .  
 Թէ որ յազթենք հոս բանասարկուն ,  
 Դրախտ է մեզ պատրաստուած :

## 142 Ժ - Ի - Ը - Ի - Գ - Դ - Ե - Զ - Է - Ը - Թ - Ք . ( 8 . 8 տող ) :

- 1 Ժամն աղօթքի , ժամն աղօթքի ,  
 Որ աշխարհէս դիտ կը դատէ ,  
 Որ հօրքս աթոռին գիմեմ ,  
 Ու իմ կարօտութիւնս յայտնեմ :  
 Երբ ցաւ ու վիշտ վրաս կը տիրէ ,  
 Հոգիս հանդիատ միշտ կը դանէ ,  
 Փորձութենէ ալ կ'ազատի  
 Քու հասնելովդ , ժամ աղօթքի :
- 2 Ժամ աղօթքի , ժամ աղօթքի ,  
 Աղերսըս թեւերովդ տարուի  
 Շնորհաց աթոռը նստողին ,  
 Զղջացողին ձայնն լըսողին :  
 Իրեն գիմել կը պատուիրէ ,  
 Շընորհք խնդրել կը հրաւիրէ ,  
 Հոգերս անոր ձրղեմ պիտի ,  
 Քեզ ըսպասեմ , ժամ աղօթքի :



- 3 Ժամ աղօթքի, ժամ աղօթքի,  
 Մըխիթարիչ ըլլաս ինձի,  
 Մինչև փառքս լեռնէն նայիմ,  
 Տեսնեմ իմ տունըս երկնային :  
 Տըկար մարմինս պիտի ձըգեմ,  
 Տէրօջըս քովն պիտի ելլեմ,  
 Ու երթալով երգեմ պիտի,  
 «Ժամն աղօթքի, ժամն աղօթքի» :

## 143 Ա. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. (7) :

- 1 Շնորհաց ակօռն փնտռող  
 Զայն ամէն տեղ կը դըռնայ .  
 Մենք երբոր ենք աղօթող,  
 Տէրն է միշտ մեզի ներկայ :
- 2 Թէ հարուստ ենք թէ աղքատ,  
 Թէ առողջ կամ թէ տրկար,  
 Երբ մեր ձայնն է անընդհատ,  
 Տէրն է միշտ մեզի ներկայ :
- Երբ ճարեբըս կը հասնին,  
 Ու ինձի հանգիստ չըկայ,  
 Եւ ուժերս կը լըքանին,  
 Տէրն է միշտ մեզի ներկայ :

4 Ով հողիս, Փրկչիդ եկուր,  
 Ինչ տաղնայ որ վրադ կու գայ.  
 Ան պարսապ քեզ չը թողուր,  
 Տէրն է միշտ մեզի ներկայ :

## 144 Ե- ԷԷԷ՝ ---ՆՆ--Լ. (8, 6) :

1 Ես կը սիրեմ առանձնանալ  
 Հողերըս ձըղելով,  
 Որ իրիկուան ժամերս անցնեմ  
 Յնծմամբ աղօթելով :

2 Ես կը սիրեմ ալ առանձին  
 Զղջման արցունք թափել.  
 Իր խոստմունքներն յիշել, երբ Տէրն  
 Միայն կրնայ լըսել :

3 Ես կը սիրեմ իմ միտքս բերել  
 Ան որ գիտ կը հողայ.  
 Հողերս, վիշտերս բոլորն ձըղել,  
 Գըլթած Տէրովըս վրայ :

4 Ես կը սիրեմ երկինք նայել  
 Քաջ հաւատոյ աչքովն.  
 Նեղուած հողիս կը զօրանայ  
 Այն ցնծալի տեսքովն :

- 5 Եւ վշտալից կեանքիս վերջին  
 Օրն երբ իմ վրաս հասնի ,  
 Նբման ըլլայ այս մեղմ ժամուն ,  
 Ու զիս երկինք տանի :

## 145 ՏԵՐԱՆԻՆ ԳԵՂՈՒՄ ( 8 ) :

- 1 Ով Եհովայ , Հայր երկնաւոր ,  
 Թող քու անունըդ սուրբ ըլլայ .  
 Դուն յաւիտեան ես թագաւոր ,  
 Քու թագաւորութիւնըդ դայ :
- 2 Քու անարատ կամքդ ալ բարի  
 Ամէն մարդիկ թող կատարեն ,  
 Ինչպէս որ ան կը կատարուի  
 Երկնից մէջ սուրբ հրեշտակներէն :
- 3 Մեր հայր սուր մեզ , կ'աղաչենք ,  
 Շնորհէ մեզի դուն թողութիւն ,  
 Ով Հայր , ինչպէս որ կը ներենք  
 Մենք ալ մեր պարտականներուն :
- 4 Մեզ մի տանիր 'ի փորձութիւն ,  
 Այլ ազատէ մեզ , Տէր , չարէն .  
 Զի քուկց է թագաւորութիւն ,  
 Եւ զօրութիւն ու փառք . Ամէն :

# 146 Տէր--ն--ի--ն --ընդ+ (7) :

- 1 Ով մեր Հայրը երկնաւոր ,  
 Բու անունըդ սուրբ ըլլայ .  
 Տէրութիւնըդ փառաւոր  
 Թող շուտով ամէն տեղ գայ :
- 2 Բու օրհնեալ կամքդ ալ ինտոր  
 Վեր երկինք կը կատարուի ,  
 Այդպէս , ով Տէր Թագաւոր ,  
 Հոս ալ միշտ 'ի գործ դըրուի :
- 3 Ով Տէր , տուր այսօր մեզի  
 Մեր ամէն օրուան հացն ալ .  
 Որ առողջութեամբ քեզի  
 Ծառայենք , ով Տէր օրհնեալ :
- 4 Սիրելի Որդւոյդ համար ,  
 Մի յիշեր մեր յանցանքներն .  
 Մենք ալ միշտ կ'ուզենք մոռնալ  
 Մեր եղբօրն ամէն պարտքերն :
- 5 Փորձութեան մեզ մի տանիր ,  
 Ազատէ մեզ միշտ շարէն .  
 Ձի քուկդ է փառք և պատիւ ,  
 Ով Տէր , յախտեանս . Ամէն :

# 147 Տեր-ն-ի-ն -ը-ի- (6) :

1 Ով Հայր մեր երկնաւոր,  
 Անունըդ սուրբ ըլլայ .  
 Դուն ես մեծ թագաւոր,  
 Արքայութիւնըդ դայ :  
 Քու կամքըդ ալ բարի  
 Մարդիկ թող կատարեն,  
 Ինչպէս կը կատարուի  
 երկնից հրեշտակներէն :

2 Չեռքէդ հաց կը խնդրենք,  
 Շնորհէ մեզ թողութիւն .  
 Մենք ալ պիտի ներենք  
 Մեր պարտականներուն :  
 Մեզ մի տար փորձութիւն,  
 Այլ ազատէ շարէն .  
 Քուկդ է արքայութիւնն  
 Եւ ոյժն ու փառքն . Ամէն :

# 148 Ա. Գ. Գ. Գ. Գ. (8, 7, 4) =

1 Մի թողուր զիս, ով Աստուածըս,  
 Թող քեզմէ չըմոլորիս.  
 Ու ժողցուր, Տէր, իմ քալուածքըս,  
 Եթէ ոչ ես կ'ընկզմիս.  
 Պահպանէ զիս,  
 Պաշտպանէ զիս,  
 Որ երբէք չըկորսուիս:

2 Աշխարհիս անթիւ հողերը  
 կը վաքնատեն զիս, Տէր, քեզմէ.  
 Մատանան իր հրապոյրները  
 իմ առջևըս կը դնէ.  
 Վարմերովը,  
 Նենդերովը  
 Թող զիս չըմոլորցունէ:

3 Ով Յիսուս, ցրուէ վախերըս,  
 Քու խոստմունքդ է հաստատուն.  
 Դուն կրնաս ներել մեզ քերքս,  
 Ինձ լրսել տուր ձայնդ սիրուն.  
 Դուն ես լոյսըս,  
 Դուն ես յոյսըս,  
 Մի միայն փրկելըս դուն:

4 Ո՛հ, թէ ես սիրոյդ ուժովը,  
 Տէր Յիսուս, քեզի ձըգուիմ.  
 Ինձ օգնէ Հոգւոյդ շնորհքովը,  
 Աշխարհէս հըրածարիմ.  
 Տէր, կանչէ զիս,  
 Ու քաշէ զիս,  
 Ես ալ պիտի հեռուիմ:

5 Իմ ըչտեմարանիս ներսը  
 Դուռը ետեւէս գոցեմ.  
 Ու սրտիս անկեզժ աղերսը  
 Աստուծոյս մատուցանեմ.  
 Արարիչը  
 Եւ Փրկիչը  
 Գաղանի տեղը թող գտնեմ:

## 149 Պ-Ն-Ի-Ի-Ն Ա-Ն-Ի-Ի-Ն (Տ, 7, 4) •

1 Եհովա, առաջնորդէ զիս,  
 Զի պանդուխտ եմ ու կարօտ.  
 Շատ տըկար եմ, զօրացուր զիս  
 Ամենակարող ձեռքովդ.  
 Դուն, երկնի Հաց,  
 Կերակրէ զիս որ ապրիմ:

2 Բաց, ով Տէր, մաքրող աղբիւրը,  
 Այն Հուրով բըժշկըւիմ.

Թող ամազին, կրակին սիւնովը  
 Մինչ վախճան առաջնորդուիմ.  
 Դուն, փրկիչ մեծ,  
 Ինձ եղիբ ոյժ և վահան:

- 3 Երբ որ Յորդանան հասնիմ ես,  
 Յուրս մահուան երկիրդն վերցուր.  
 Դուն որ մահը մեռուցեր ես,  
 Զիս երկինքը, Տէր, հասցուր.  
 Փառք, պատիւ քեզ  
 Միշտ պիտի մատուցանեմ:

## 150 Բ-Է: Հ-Պ-Է. (8, 7):

- 1 Քաղցրութեամբ առաջնորդէ մեզ,  
 Մինչ ելլենք ցաւոց ձորէն.  
 Թող շընորհքդ զօրացունէ մեզ,  
 Խափանէ ալ վախն ամէն.  
 Զօրացուր մեզ  
 Քու անհուն շնորհքովըդ, Տէր:
- 2 Թէպէտ և ցաւ ու շատ դառն վիշտ  
 Մեզ ամէն կողմէն պատէ.  
 Բայց Յիսուս մեզ կը փրկէ միշտ,  
 Մեզքն ու դժոխքը կը յաղթէ.  
 Խօսքն հաստատ է,  
 Տէրն պիտի զայն կատարէ:



- 3 Երանի՛ թէ պաշտէի ես  
 Քեզ , Փրկիչ իմ բարերար .  
 Ըլլամ երկնային զօրաց պէս ,  
 Որ դովեն քեզ անդադար ,  
 Երջանիկ են .  
 Երբ պիտի ես հոն հասնիմ :

## 151 ՎԷՐԻՔԻ ԶԱՆԴ . ( 8 ) :

- 1 Ով Տէր , ինձի նոր սիրտ շնորհէ ,  
 Բողոքովին քեզի դառնամ .  
 Վերատին ծընունդ ինձ պարգևէ ,  
 Հոգւով , սրտով փոխուած ըլլամ :
- 2 Ինձ կը սեպեմ մեծ օրհնութիւն ,  
 Երբ Սուրբ Հոգւովդ զիս նորոգեա .  
 Ով Տէր , ի՞նչ մեծ երջանկութիւն ,  
 Զայս նորոգում երբ ինձ շնորհեա :
- 3 Թայնժամ հոգիս ազատ կ'ըլլայ  
 Ամէն տեսակ վրտանգներէն .  
 Մարմին , աշխարհ և Սատանայ  
 Ինձ ոչ երբէք յաղթել կարեն :

- 4 Մեզքն Ազանայ նախաստեղծին  
 Մեզ բարկութեան զաւակ ըրաւ .  
 Հոգենորոգ շընորհք Փրկչին  
 Իբ արիւնոյն մեզ Դրախտ բացաւ :
- 5 Ով Տէր Յիսուս, դուն պարգևէ  
 Ինձի շընորհք նոր ծըննդեան .  
 Հոգւով Սրբով մեզքերս սրբէ ,  
 Որ սիրտս , հոգիս քուկինդ ըլլան :

## 152 Ո՛վ Սուրբ Հոգի . ( 8 , 7 ) .

- 1 Ով Սուրբ Հոգի , ինձ ցուցուցեր ես ,  
 Յոյսըս է միայն քեզմէ .  
 Օրէ օր դիս անցուցեր ես  
 Բազմաթիւ վրտանդներէ :  
 Դուն , Տէր , մոլորած ատենըս  
 Առաջնորդեցիր ինձի .  
 Միշտ եղիր , Տէր , ապաւէնըս ,  
 Թող ապրիմ միայն քեզի :
- 2 Խորամանկ թըշնամիներըս  
 Միշտ կը յարձակին վըրաս .  
 Ես գիտեմ բոլոր օրերըս  
 Կուիւ պիտի ըլլայ պակաս :

Երկնաւոր շնորհաց աթոռք,  
 Հոն միայն պիտի դիմեմ,  
 Որ իմ նեղութեանքս օրը  
 Զօրութիւն քեզմէ գանեմ:

- 3 Հայրքս, քու պաշտպանութեանըդ  
 Դուն Սուրբ Հոգւովդ ինձի շնորհք տուր ,  
 Որ քեզ միայն փակչիմ :
- 5 Ե՞ս կը բաղձամ սուրբ ըլլալու ,  
 Որպէս զի քեզ տեսնեմ .  
 Ե՞ս կը ցանկամ սուրբ ըլլալու ,  
 Որպէս զի դրախտդ մտնեմ :

224 ԱՅՆ--ԱՆ--ԲԻ--Ն . (7) :

ՄԱՍՆ Ա

- 1 Գիտելու մէկ կէտ մը կայ ,  
 Որ մտքիս տանջանք կու տայ .  
 Արդեօք Տէրը կը սիրե՞մ ,  
 Ես իրե՞նն եմ , կամ թէ չեմ :
- 2 Թէ սիրեմ , այսպէս կ'ըլլամ՞  
 Յրտացած և անկենդան .  
 Իւր անուան ծանօթ չեղողք  
 Վատ ինձմէ կ'ըլլա՞ն արդեօք :
- 3 Սիրտս այսպէս խիտ կը մընա՞ր ,  
 Ինձ աղօթքը բեռ կ'ըլլա՞ր ,  
 Տաւ կու տա՞ր ինձ բան չնչին ,  
 Գիտնայի նէ սէրն փրկչին .
- 4 Ներսըս երբ աչք դարձունեմ ,  
 Ձիք հաւատք , մեզք կը տեսնեմ .  
 Մութ բոլորն , ունայն , անսանձ .  
 Ձիս սեպե՞մ որդի մ'եղած :
- 5 Ընթերցմունք , քարոզ , աղօթք ,  
 Ինչ ընեմ ալ է մեղօք .  
 Դուք , սրտանց Տէրն սիրողներ ,  
 Ա՞ն է , Ե՞ն , վիճակըն ձեր :

## ՄԱՍՆ Բ

- 6 Խրատացած սիրտս դեռ կ'ողբամ,  
Մեղքը վիշտ, կապանք կը գգամ,  
Ըզգացումքս վիշտ կու տա՞ր,  
Ատէի նէ մեղքն խաղառ :
- 7 Կ'ընտրէի՞ չուզած ճամբաս,  
Կ'ըլլայի՞ սրբոց յարած,  
Ինձ խոստմունքն երբէք քաղցր էր,  
Եթէ Տէրն չէի սիրեր :
- 8 Տէր, լուծէ իմ տարակոյս,  
Դու, սրբոցդ արեւն ու լոյս,  
Լոյս ծագէ գործոցդ շնորհաց,  
Եթէ այն է ըսկրտուած :
- 9 Քեզ որչափ սիրած ալ եմ,  
Տուր որ աւելի սիրեմ.  
Ո՛հ, սիրած չեմ նախ թէ որ,  
Ինձ օգնէ, սկըսիմ այսօր :

## 225 ՍԵՐԷ ԱՊՈՍՏՈՍ ԲՆԱԼ (6, 6, 8, 6) :

- 1 Ամենատես սուրբ աչք  
Մինչև խորերն զննէ,  
Տէրն ըստեղծեց ըզսիրտ մարդոց,  
Ծածուկ չէ այն իրմէ :

2 Բազմիցքս այն կեղծեօք  
 Խարէ՛ թէ ես սուրբ եմ .

Ո՛հ , կը հաւտամ խարոզ սրտիս ,  
 Աւա՛ղ , մեզք կը սիրեմ :

3 Չար մեղաւոր դորժքերն  
 Են առեկի ինձի .

Գազտուկ իմ մէջս մեզք կը պահուի ,  
 Կ'ըսէ Չեմ զեն քեզի :

4 Ձիս դու փորձէ , ով Տէր ,  
 Տես ինչ ճամբու մէջ եմ .

Քննէ իմ սիրտս , յայտնէ մեզքերս ,  
 Ճանչնամ թէ ես չար եմ :

5 Մաքրէ սիրտս մեզքերէս ,  
 Ինձ առաջնորդ եղիր .

Քու սուրբ ճամբուդ մէջ դէպ յերկինս  
 Վազեմ , ըլլամ թող թիր :

**226** Հ---+Է՛ն յ--Է--ԷԷ՛նը . ( 8 . 5 տող ) :

1 Ունայն աշխարհս ալ կը ձրդեմ ,  
 Հիմա երկինք երթալ կ'ուզեմ .

Հոն է ամէն բան լուսաւոր ,  
 Սուրբ , պատուական և փառաւոր ,

Ով Տէր Յիսուս , շուս եկ . Ամէն :

- 2 Իմ սիրելի եղբարք, մի լաք .  
 Ուրախ եղէք, իմ բարեկամք .  
 Մեղքէն ազատ եմ, ոչ թշուառ .  
 Եմ երջանիկ միշտ կատարեալ .  
 Ով Տէր Յիսուս, շուտ եկ . Ամէն .
- 3 Խաւարն դնաց, է արշալոյս,  
 Ո՛հ, սուրբ քաղաք սրբուեց ըզլոյս .  
 Արդարութեան ծագէ արե,  
 Հոգիս տեսաւ դրախտն արդարե .  
 Ով Տէր Յիսուս, շուտ եկ . Ամէն .
- 4 Ո՛հ, այս ժողով է սրբազան,  
 Գառն է անոր գլխուխ, իշխան .  
 Որոնց փափաքն սուրբ շերմեռանդ .  
 Երգէ Տէրոջ նոր երգ զլուարթ .  
 Ով Տէր Յիսուս, շուտ եկ . Ամէն .
- 5 Կարգամ և ես երգ յաղթութեան,  
 Ըլլամ այն սուրբ հօտին անդամ,  
 Լուսոյ ըզգեատ հազնիմ փայլուն,  
 Ընկերանամ երգիչ պարուն .  
 Ով Տէր Յիսուս, շուտ եկ . Ամէն .



227 Տէր-՛ն է Խ-+Բ Կ-ն է Ի-ն-Ե-ԷԼ (8, 6) :

1 Հըզօր արքայ երկնի , երկրի ,  
 Որ կը տիրես դու միայն ,  
 Արդարութեան , իրաւունքի  
 Աթոռդ է յաւիտեան :

2 Օրհնեալ ըլլայ քու սուրբ անուն ,  
 Ողորմութիւն ունիս .  
 Հաւատարիմ է քու խոստումն  
 Հընար չէ որ ծրուիս :

3 Ես մեղաւոր ե չար , տրդէտ ,  
 Իրաւ եմ պատժապարտ .  
 Զուղեմ փախչիլ արդար ձեռքէդ ,  
 Խոնարհ մնամ 'ի խըրատ :

4 Շընորհք են ինձ այն պատիժներն  
 Որոնք դան 'ի գըլթոյ .  
 Թող հոս սաստիկ զիս շարշարեն ,  
 Փրկուիմ դալիք պատժոյ :

5 Ուրախ եմ արդ՝ որչափ տանջուիմ ,  
 Զի Տէրըս է գըլթած .  
 Զիս սէրն առատ աստուածային  
 Սրբել է կամք ըրած :

6 Տըկար հաւատաք ունիմ գիտես,  
Տէր, վշտակրիս օգնէ.

Կը հաւատամ փրկչիդ միշտ ես,  
Ձիս գըծոխքէն փրկէ:

## 228 Աստուծոյ Իմացն հոգսակէլ. (6, 6, 8, 6).

1 Ինչ խոր քու խորհուրդներն,  
Իմ խելքս չըհասնիր.

Բայց դուն ինչ որ կ'ընես, ով Տէր,  
Բարի է սիրալիր:

2 Կը փափաքիմ ըլլալ  
Ազատ ամէն չարէ,

Փորձանք գըլխէս պակաս չըլլար,  
Ձի քեզ հաճոյ այն է:

3 Ինձ արգելքներ կան շատ  
Գործքիդ մէջ աշխատիլ.

Որչափ կրնամ, ընեմ գըւարթ,  
Պարտիմ քեզ հնազանդիլ:

4 Ինչո՞ւ իմ աղօթքներս

Անպատասխան ըլլան.

Որ հաճելին առջիդ պայպէս,  
Չէտք է ես գորհ ըլլամ:

- 5 Յոյժ կ'ազաչեմ, Տէր, քեզ,  
 Լից զիս քոյդ շքնորհքով.  
 «Բու կամքդ ըլլայ ինչ որ ընես»,  
 Ըսեմ ես դո՛հ սրբաով:

## 229 Մ:Բ-Յ ԵԲ-ԿԷ (8, 7) :

- 1 Տուր ինձ հաւատոյ թեւերը,  
 Որ թռչիմ ու վեր ելլեմ.  
 Երջանիկ անթիւ սուրբերը,  
 Երկնաւոր փառքն ալ տեսնեմ:
- 2 Հոս երբեմն իրենց մահիճը  
 Արցունքով կը թրջէին,  
 Եւ մեղացն ու փորձութեանցը  
 Դէմ կը պատերազմէին:
- 3 «Ո՛ւսկից էր ձեր յաղթութիւնը»,  
 Հարցընեմ, ալ միարան  
 Յաղթանակն ու փրկութիւնը  
 Յիսուսի խաչին կու տան:
- 4 Դիտեցին անոր քայլերը,  
 Եւ անոնց հետեւեցան.  
 Մինչև որ երկնաւորները՝  
 Իր սուրբ հանդստեան հասան:

5 Գողթու թիւն քեզի, մեր Տէրը,  
 Գու քայլերդ մեզ կ'ուզեն,  
 Եւ վրկաներուդ խումբերը  
 Նոյն համբան կը ցուցնեն:

220 Երգիչ Գ. Բ. Գ. Բ. Գ. Բ.

1 Երգիչ Գ. Բ. Գ. Բ. Գ. Բ.



2 Երգիչ Գ. Բ. Գ. Բ. Գ. Բ.

Երգիչ Գ. Բ. Գ. Բ. Գ. Բ.

3 Երգիչ Գ. Բ. Գ. Բ. Գ. Բ.

Երգիչ Գ. Բ. Գ. Բ. Գ. Բ.

4 Երգիչ Գ. Բ. Գ. Բ. Գ. Բ.

Երգիչ Գ. Բ. Գ. Բ. Գ. Բ.

Երգիչ Գ. Բ. Գ. Բ. Գ. Բ.

ԱՐԴԱՐՆԵՐՈՒՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆ

ՈՒ

ՉԱՐԵՐՈՒՆ ԹՇՈՒՍՌՈՒԹԻՒՆԸ

230

Բ-տէ Է ՎԵ ԲԵՐԵՅ ԴԵՔԵՐ-ՄԷՆԸ

Սաղ. Ա. (8) 1

1 Համարտապէս երանելի  
Միայն ան մարդը թող ըսուի ,  
Որ շարերուն նամբան չերթար ,  
Ծաղրարանից հետ չըկենար :

2 Այլ սուրբ օրէնքը կը սիրէ ,  
Անոր վրայ միշտ կը մրտածէ՝  
Տէրոջը կամքը սորվելու ,  
Եւ զանիկայ կատարելու :

3 Իրաւ ան պիտի նրմանի  
Զուրի քով տնկըւած ծառի ,  
Որ անպակաս պրտուղ կու տայ ,  
Տերնն ալ պիտի չըչոմնայ :

4 Ամբարիչաները այնպէս չեն .  
Եհովային բարկութենէն  
Անոնք յանկարծ պիտի ցրուին՝  
Նրման հովէ ցրուած չիւզին :

5 Թող ամբարիշտը չը յուսայ  
 Դատաստանին մէջ որ կենայ,  
 Զի Տէրն արդարը կը սիրէ,  
 Բայց չարը բընաջինջ կ'ընէ:

**231** Առաջին շաբաթի արարածը  
 Սաղ. ճԻԱ. (7):

1 Ես աչքերս ուղղեմ պիտի  
 Դէպ ան լեռներուն՝ ուրկէ  
 1 Օգնութիւն ինձ կը հասնի,  
 Զի միայն Տէրն ինձ կ'օգնէ:

2 Ան քու ուրբող չքատներ,  
 Պահապանդ է միշտ հսկող,  
 Զի բընաւ չընդարար  
 Իր ծառայքը պահապանող:

3 Ան քեզի է միշտ պահակ,  
 Քու աջ կողմից է հովանի,  
 Այ լուսին, ոչ արեգակ  
 Տալ կընան վընաս քեզի:

4 Տէրն չարէն քեզ կը փրկէ,  
 Քու անձիդ է պահապան,  
 Մուտ և ելքըդ կը պահէ  
 Այժմ և մինչև յախտեան:



- 2 Չար մարդ իկներ դէմ դընելով,  
Տէրոջ խորհուրդն անարդեցին .  
Անոր համար ցածցան շուտով,  
Եւ օգնական մը չունէին :
- 3 Ի մէջ վշտաց Տէրն կանչեցին,  
Տառապանքէն զանոնք փրկեց .  
Տէրն կտորտեց կապանքներնին,  
Մահուան շուքէն զանոնք հանեց :
- 4 Թող Տէրոջմէն միշտ գոհանան  
Ամէն մարդոց աչաց առջին .  
Տէրոջ հրաշքներն ողորմութեան  
Թող յախտեան փառաւորուին :
- 5 Ով որ նաւով համբայ կ'ընէ  
Եւ առուտուր ծովու վըրայ,  
Տէրոջ գործքերն նա կը տեսնէ,  
Եւ իր հրաշքներն հոն կ'իմանայ :
- 6 Արդար մարդ իկ պիտի խնդան,  
Չար մարդ բերանն պիտի գոցէ .  
Մարդ իմաստուն մինչ յախտեան  
Պիտի վախնայ ու Տէրն գոյէ :



234 Ա. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Սաղ. ԻԴ. (8):

1 Տէրոջ լեռն ո՞վ պիտի ելլայ ,  
Սուրբ տեղը ո՞վ պիտի կենայ .  
Զեռ. քով , սրտով մաքուր եզողն ,  
Սուտ շընանչցող , երգում շընողն :

2 Ան կ'ստանայ իր Տէրոջմէն  
Սուրբ օրհնութիւն ամէն ատեն .  
Եւ Աստուծմէն իր փրկութեան  
Զըրի շընորհք արդարութեան :

3 Վեր համբարձէք , ով սուրբ դուներ ,  
Որ ներս մտնէ փառաց մեծ Տէր .  
Ո՞վ է փառաց աս թագաւոր .  
Զօրաց Տէրն է , Աստուած հըզօր :

235 Ա. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Սաղ. ՃԻԵ. (10):

1

Այն օր , Տէր , սրտովն քեզի կը յուսայ ,  
Նըման Սիօնի հաստատ կը մընայ .  
Լեռան մը պէս իր յուսոյն առարկան  
Կարող չեն շարժել դարեմն ապագայ :

2

Ինչպէս որ լեռներն են շրջապատած  
 Երուսաղեմայ քաղաք գերապանծ ,  
 Այնպէս ալ Աստուած մինչև յախտեան  
 Իր ժողովուրդին շորս կողմն է պատած :

3

Ով Տէր , գուն բարիք ըրէ բարիին ,  
 Ու նաև սրտով ուղիղ եղողին .  
 Սակայն այն ամէնք որ Տէրը կ'ատեն ,  
 Անոր երեսէն պիտի մերժուին :

4

Դուն , Տէր , կը ջնջես ազգերն անօրէն ,  
 Որոնք չարութիւն առջիկ կը գործեն .  
 Բայց կեանք մը անգորր ըրեր ես պատրաստ  
 Քու խօսքըդ սիրող սրբոցդ համօրէն :

**236** Տէրը երէն յ-----ընէրէ կ'----- . Սաղ .  
 ՃԻԶ . ( 8 ) :

1 Երբոր դարձուց մեր Տէր Աստուած  
 Վաս զերութիւնն իր Սիօնի ,  
 Յայնժամ եզանք մըխիթարուած ,  
 Նըմանեցանք երազողի :

2 Մենք ան ատեն ուրախ լեզուով  
 Երգ երգեցինք մեծ ցնծութեան .  
 Ազգերն ըսին մէկ բերանով ,  
 Թէ Տէրն ասոնց ըրաւ մեծ բան :

3 Իրաւ Աստուած մեզի համար  
 Մեծ, սիրալի բաներ բրաւ :  
 Ուրախ եղանք որ Տէրն արդար  
 Ազատութիւն մեզի տրուաւ :

4 Արցունքներով սերմ ցանոցներ  
 Յնժութիւնով պիտի հնձեն :  
 Ողբով, լալով սերմ տանոցներ  
 Խնդութիւնով պիտի ժողովեն :

**237** Ա-դ-ն-է-է ի-ն-ը-ն և ն-դ շ-ո-յե-լ-ն  
 ե-ն-ն-ի-ն-ը . Սաղ . ՃԻԸ . (8, 6) :

1 Բիւր երանի Տէրոջ երկիւզն  
 Կրբող ամէն մարդուն .  
 Որ կը քննեն անոր շախիզն,  
 Ըզդոյշ են վարքերնուն :

2 Զի ան ատեն պիտի ուտեա  
 Վաստակրդ քու ձեռաց .  
 Եւ ապրելով երջանկապէս՝  
 Կ'ըլլաս միշտ յաջողուած :

3 Ահա այսպէս մարդ կ'օրհնելի,  
 երբ Տէրոջմէ վախնայ .  
 Զաւկիդ զաւակն տեսնես պիտի,  
 Եւ կեանքդ խաղաղ կ'ըլլայ :

## 238 ՏԵՆԸ ԷԵԹԻՆԵՐԷ Է ԷՐ ԺՆԷՆԵՐԵՐԻՆ • Սաղ • ՃԻԹ • (7) •

- 1 Իսրայէլն արդ թող ըսէ ,  
 Իմ մանկութենէս հետէ  
 Շատ անգամ զիս նեղեցին ,  
 Բայց ինձի չը յաղթեցին :
- 2 Հերկողներ զիս հերկեցին ,  
 Ակօսնին երկընցուցին •  
 Տէրն արդար է • ան դիտեց ,  
 Չըւաննին ան կոտորեց :
- 3 Ատողներն սուրբ Սիօնի  
 Ամօթով լեցունին պիտի •  
 Տանիրին խոտին նըման  
 Չորնալով կը փնանան •

## 239 ՉՐԵՐԵՆԷ ԻՆՆԵՆ ԷՆՆԵՆ • Սաղ • ԼԶ • (8) •

- 1 Իմին սրտիս ըսել կու տայ  
 Չար նենգութիւն մեղաւորին ,  
 Թէ Աստուծոյ երկիւղն չըկայ  
 Անոր հողւոյն աչաց առջին :

- 2 Իր մահիւնն մէջ կը փնտռէ  
 Մուռ անիրաւ նոր ճամբաներ .  
 Մոլի գործքեր կը հընարէ ,  
 Եւ զինք շարէն ետ չըքաշեր .
- 3 Ո՛վ Տէր Աստուած ճշմարտութեան ,  
 Ողորմութիւնդ է գերազանց ,  
 Արդարութիւնդ լեռան նըման ,  
 Զի դուն եղար Փրկիչ մարդկանց .
- 4 Տէր , գրթութիւնդ է անսահման ,  
 Քու քովըդ կայ աղբիւր կեանքի .  
 Քու թևերուդ պաշտպանութեան  
 Հաւատացեալն կ'ապաւինի .

240 Զ-ը-ի-ն-ն -հ-ու-դ Է-ն-ի-ը . Սաղ . ԽԹ . (8) :

- 1 Մըտիկ ըրէք , ամէն ազգեր ,  
 Եւ աշխարհիս բընակիչներ ,  
 Բոլոր հարուստ , աղքատ մարդիկ ,  
 Ազնուական նաև ուամիկ ,
- 2 Իրենց ուժին յուսացողներ ,  
 Հարբատութեամբ պարծենցողներ ,  
 Մարդ չէ կարող եղբայրն փրկել ,  
 Եւ կամ փրկանք հատուցանել .

3 Անոնք այսպէս խորհուրդ ունին ,  
 Թէ յախտեան պիտի ապրին .  
 Իրենց տուներն պիտի մընան ,  
 Անուններնին քաղքի կու տան :

4 Բայց մարդ պատուոյ մէջ չըմընար ,  
 Խեղճ անասնոց կ'ըլլայ հաւտար .  
 Երբոր չընարեր Տէրոջ համբան ,  
 Անոր Սուրբ Խօսքն և պատուիրան :

5 Թէ և շար մարդն հարբատանայ ,  
 Եւ իր տունին փառքն ալ շատնայ ,  
 Դուն մի փախնար՝ զի երբ մեռնի ,  
 Իր հետ ոչինչ պիտի տանի :

6 Սակայն Աստուած պիտի փրկէ  
 Իմին հոգիս շար մահուանէ .  
 Քանզի Տէր իմ գիտ ընդունեց ,  
 Գրան փրկութեան ինձի շնորհեց :

## 241 Արդեւ շնորհեալ է Սաղ. ԴԲ. (7) :

1 Սուրբ անուանըդ , ով Աստուած ,  
 Միշտ երգելն է շատ բարի .  
 Գրթութիւնդ , Տէր ողորմած ,  
 Թող զիչեր ցորեկ դովաի :

- 2 Տէր , գործքերըդ են շատ մեծ ,  
 Խորհուրդներըդ շատ խորին .  
 Շնորհք փրկչին հոգիս փրկեց ,  
 Բայց շարերը կը վըշին :
- 3 Այլ , ով Տէր , գուն շատ բարձր ես ,  
 Թշնամիքըդ կը ցրուին .  
 Տէր , իմ ոյժս շատցունես ,  
 Ձի ես հաւտացի փրկչին :
- 4 Տանըդ մէջը տնկուած ,  
 Արդարները կը ծաղկին .  
 Հետևողք սուրբ օրինաց  
 կը մեծնան միշտ և կ'աճին :
- 5 Երբութեան մէջ պտղաբեր ,  
 Գէր , կանաչ ալ կը մընան ,  
 Որ պատմեն թէ Սուրբ է Տէր ,  
 Անձանօթ է շարութեան :







5 Երանելի և ապահով  
 Մխայն անունք են, որ սրտով  
 Փրկիչն ընտրած են ապաստան,  
 Անոր շնորհացը կը յուսան :

243 Երեւոյն Կրօն (7, 6) :

1 Թող Սիօնի որդիքը  
 Ուրախութեամբ ջնձան .  
 Պատի անցնին չարիքը ,  
 Բարի օրեր կու գան .  
 Ահա ետքի օրերը  
 Լերանց գլխուն վըրայ  
 Սիօն Տէրօջը լեռը  
 Պատի խիտ բարձրանայ :

2 Ազգաց շատ բազմութիւնը  
 Անոր պատի գիւլեն .  
 « Երթանք Տէրօջը տունը »  
 Պատ՝ իրարու ըսեն ,  
 « Ելլենք Տէրօջը լեռը ,  
 Ինք գինք մեզի յայանէ .  
 Աստուած իր ճամբաները  
 Մեզի սրվեցընէ » :

3 Մարդիկ իրենց սուրերը  
 Խոփեր պիտի շինեն,  
 Նիզակներուն տէգերը  
 Յօտոցներու փոխեն.  
 Ախով եզրաբք եզրաբց վրայ  
 Պիտի չը յարձակին.  
 Պատերազմին արհեստը  
 Բընաւ ալ չըստրվին:

4 Ո՛հ թէ մեր աչքն այս յոյսը  
 Ի գործ դրուած տեսնէ,  
 Եւ Սիօնին սուրբ լոյսը  
 Աշխարհք լուսաւորէ.  
 Յայնժամ Տէրոջ տանարը  
 Տնձմամբ երկըրպաղենք.  
 Ալ ցրուեցաւ խաւարը,  
 Անոր լուսոյն քալենք:

244 ՍԷԷ՝ ՂԵՄԷ՝ (11, 10):

1

Ով Սիօնի բերկրայից արչալոյսը,  
 Թանձրը խաւարը և սուգը կ'անցնի.  
 Հիմա մարդոց ցնձութիւնը և յոյսը,  
 Կեանքն անվախճան մեռելոց կը արուի:

2

Ո՛վ Սիօնի բերկրալից արշալոյսը,  
 Հին դարերու մէջ՝ որ դուշակուեցաւ,  
 Մարդարէից խօսքին պէս, ահա կոյսը  
 Բէթլէհեմի մէջ Փրկիչը ծընաւ :

3

Գերութենէն կը դառնան գերիները,  
 Ծառայութեանը տունէն կ'ազատին .  
 Պատը քակուած է, և հեթանոսները  
 Հիմա Հրէից հետ մէկտեղ կը բերկրին :

4

Անապատին մէջ՝ շուշանը և վարդը,  
 Չոր երկրին մէջ կ'երևին վրտակներ .  
 Պատերազմներն դադարած են, և մարդը  
 Իր ընկերին դէմ՝ չկուի շըհաներ :

5

Ի՞նչ կը լըսենք . հեռաւոր կղզիները  
 Փառք Աստուծոյ 'ի բարձունքս՝ կ'ըսեն .  
 Մենք անոնց հետ լըսել տանք մեր ձայները,  
 Փառք Աստուծոյ յաւիտեանքս . Ամէն :

245 “Ե- Ի-դ-ի- շ-Ն-Ի-” : Յայտ . Ի . 2 .  
 (8 . 6 տող) :

1 Տերոջ խոստմունքն է թէ կու գան  
 Անանկ օրեր, որ Սատանան  
 Պիտի կապուի անքակտելի  
 Շղթաներով, դըժոխք ձրգուի :

Ուրախացիր, ով իմ հոգիս,  
Որ բեկրալի յոյսեր ունիս :

2 Յայնժամ մարդիկ երկրիս բոլոր  
Իբրև որդիք մէկ հօր ու մօր  
Սիրով մէկտեղ բընակելով  
ՉԱստուած պիտի օրհնեն սրտով :  
Ուրախացիր, և ոչն :

3 Մեզքն աշխարհէս պիտի վերնաց,  
Սուրբ սէրն անոր տեղ պիտի գայ,  
Որով յաւերժ պիտի սիրուին  
Հայրն ու Որդին և Սուրբ Հոգին :  
Ուրախացիր, և ոչն :

4 Քու խոստմունքիդ ապաւինած  
Այս յոյն ունիմ, ով Տէր Աստուած .  
Հաւատարիմ ըլլալդ գիտեմ,  
Միայն շուտ գալըդ կը խնդրեմ :  
Ուրախացիր, և ոչն :

**246** Քրիստոսի յանձնման լուսնային շաղ. ԽԵ. (10) :

1 Բարի խօսքերով իմ սիրտըս կ'եփի,  
Պիտի արդ գովէ զանուն Արքայի .  
Լեզուս շուտ գըրող գըրչի է նրման,  
Եւ միշտ քարոզող սուրբ ճշմարտութեան :

- 2 Քեզի պէս ազուոր չըկայ մարդ բընաւ ,  
 Շրթունքիդ վըրայ շընորհք թափեցաւ .  
 Անոր համար քեզ Տէրոջը բերան  
 Օրհնեց բարձրացուց մինչև յախտեան :
- 3 Ով դուն Տէր հըզօր , սուրդ մէջքըդ կապէ ,  
 Ու քու մեծ փառքովդ մեր մէջը փայլէ .  
 Քու կինն զօրաւոր խօսքովդ սրբազան  
 Ամէն ժողովուրդ քու տակըդ կ'իյնան :
- 4 Աստուած , քու ամթող է մինչ յախտեան ,  
 Քու կինն տէրութիւնդ է միշտ անասհման .  
 Քու սուրբ դաւազանդ մարդոց է ուղղիչ ,  
 Արդար դաւազան մարդկան ազատիչ :
- 5 Դուն զարդարու թիւն խիստ շատ կը սիրես  
 Ամէն շար դորժքերն կ'ատես , կը հերքես .  
 Անոր համար քեզ , ով Տէր Աստուած մեր ,  
 Աստուածըդ օծեց ամէն մարդ է վեր :
- 6 Քու կինն սուրբ անունդ ամէն ազգաց մէջ  
 Պիտի հռչակուի միշտ և մինչև վերջ .  
 Եւ աս պատճառաւ ազգերըն ամէն  
 Մինչև յախտեան պիտի քեզ դովեն :

**247** Սէն՝ 1-2. Սաղ. ԽԸ. (10):

1

Տէրն է խիստ շատ մեծ, ինքն է միշտ օրհնած,  
 Եւ մեր Աստուծոյ քաղքին մէջ նստած.  
 Տնտում աշխարհիս է լեռն Սիօնին,  
 Անկէ կու տայ Տէր շրնորհք՝ խնդրողին:

2

Ինտոր լըսեցինք՝ անանկ ալ տեսանք,  
 Բոլոր աշխարհի Սիօնն է պարծանք.  
 Քանցի հոն նստած է մեր մեծ Աբքան,  
 Հիմնեց զանիկայ Աստուած յախտեան:

3

Քու ողորմութիւնդ մեզի շնորհեցիր,  
 Քու սուրբ տաճարէդ դուն մեզ փրկեցիր.  
 Ամէն տեղ անուանդ տրուի գովութիւն,  
 Արդարութիւնով աջ ձեռքդ է լեցուն:

4

Մեր սուրբ լեռն Սիօն ուրախ թող ըլլայ,  
 Որ մարդ փրկութիւն շրնորհք կրատանայ.  
 Չի Տէրն շրնորհեց մեզ արդարութիւն,  
 Ու մեղաւորին մեղաց քաւութիւն:

5

Ան է մեր Աստուածն միշտ և յախտեան,  
 Հովիւ առաջնորդ մինչև ՚ի վախճան.  
 Անով կրատանանք մենք մեր փրկութիւն,  
 Որ ինք խոտացաւ իր ծառաներուն:

248 ԵՒՆՅՆՆԻ ԿՈՒՆՆԻՍՏԱՆԻ ՄԱՂ 2 (Ց) :

- 1 Ո՛վ քաջ Հովիւ իսրայէլի ,  
Եւ Յովսեփին առաջնորդող ,  
Լրսէ ու քեզ ցուցուր մեզի ,  
Քերովրէից վըրան նստող :
- 2 Ո՛վ Տէր Աստուած , դուն մեզ դարձուր ,  
Երեսդ յայտնէ որ մենք ապրինք .  
Ո՛վ Տէր զօրաց , մեզի շնորհք տուր .  
Մի բարկանար՝ երբ պաշտօնիք :
- 3 Եղիպտոսէն այդի բերիբ ,  
Չայն տնկեցիր , աշխարհ լեցուց .  
Անոր ըստուերն ծածկեց զերկիր ,  
Մինչև 'ի ծով նիւղ երկնցուց :
- 4 Ինչո՞ւ ցանկերն դուն փլցուցիր ,  
Որ անցնողներ զայն փրցունեն ,  
Խողն անտառի և գաղաններ  
Ապականեն զայն և ուտեն :
- 5 Քեզ կ'աղաչեմ , Տէր բոլորին ,  
Մեզ երկինքէն նայէ գրթովդ .  
Եւ այցելու եղիր որթին ,  
Որ տնկըած է քու ձեռքովդ :

# 249

Քրիստոսի խնայողական և մարդկային  
 (Ց. 8 տող) =

- 1 Չարթիւր, զարթիւր, աջ տիրակաւն,  
 Շարժէ ուժով ըզ զազգ մարդկաւն .  
 Որ զօրութիւնդ աշխարհ տեսնէ,  
 Եւ յաղթութիւնդ դավարանէ :  
 Ես եհովայ եմ Տէր Աստուած,  
 Գոչէ թող ձայնդ հեթանոսաց .  
 Չայնէդ մեհեանք թող կործանին,  
 Եւ պիղծ սեղանք թող տապալին :
  
- 2 Մարդու արիւն ալ չթափուի,  
 Ունայն զոհեր չըլլան մեղքի .  
 Որդիք մարդկաւն ապաւինին  
 Մեղաւորաց միակ փրկչին .  
 Յոց զօրութիւնդ, աջ տիրակաւն,  
 Որ չարութիւնք բնաջինջ ըլլան .  
 Ճշմարտութեանդ լոյսն ալ թող դայ,  
 Որ սրտութիւն անհետ ըլլայ :
  
- 3 Բեր Որօնին յաջող ատենն,  
 Ժողովէ հօտիդ ցրուածն ամէն .  
 Թող աչքերնիս տեսնենն ապշած՝  
 Բոլոր աշխարհ մէկ հօտ եղած .



Ամենակալ բարի Աստուած ,  
 Խրկէ շքնորհք բոլոր մարդկանց .  
 Որ այն յազթէ գիմամարտից ,  
 Տիրէ Քրիստոս , Տէրն ամենից :

**250** Քրիստոսի Բարեբերութեան Կարճագիրը :  
 Սաղ . ՀԲ . ( 8 ) :

1 Ով Տէր Աստուած արդարութեան ,  
 Արդարութիւնդ տուր Աքքային .  
 Պիտի ընէ նա դատաստան ,  
 Եւ իրաւունք ժողովուրդին :

2 Մարդիկ պիտի վախնան անկէ ,  
 Արեւ , լուսին քանի որ կան .  
 Ազգէ ազգ ալ պիտի տեէ  
 Իր զօրութեանն գաւազան :

3 Պիտի իջնէ անձրևի պէս՝  
 Հնձած՝ կտրած խոտին վըրայ .  
 Երկիր թրջող շաղերուն պէս  
 Պիտի ցօղէ գետնի վըրայ :

4 Այն օրն արդարն պիտի ծաղկի  
 Խաղաղութիւնն ալ միշտ տեէ .  
 Տերամբ ամէն ազգ օրհնելի ,  
 Ինք յաւիտեան պիտի տիրէ :

5 Անուն փրկչին փառաւորուի,  
 Եւ յախտեան մարդիկ օրհնեն.  
 Անոր փառքովն երկիր լեցուի,  
 Բոլոր ազգերն ըսեն, Ամէն:

## 251 (54) Ն.Ն.Ն. Սաղ. ՀԲ. (6, 6, 6, 6, 8, 8):

1 Տէր, հիմա մեր փրկչին  
 Արքայութիւնը տուր,  
 Շուտով Տէր Յիսուսին  
 Աթոռը բարձրացուր.  
 Որ ինք միայն է արժանի,  
 Տիեզերաց աթոռն նստի:

2 Անհուն արդարութեամբ  
 Պիտի կառավարէ,  
 Եւ մեծ խաղաղութեամբ  
 Մեր վրայ պիտի տիրէ.  
 Տընանկներուն պիտի խղճայ,  
 Եւ աղքատաց պիտի գլթայ:

3 Աղօթք իրեն համար  
 Պիտի միշտ մատուցուի,  
 Անունն ալ անդադար  
 Պիտի փառաւորուի.  
 Արքայութիւնն պիտի մընայ,  
 Մինչև որ ալ լուսին չըլլայ:

4 Շաղի կամ անձրևի  
 նրման պիտի տեղայ,  
 իր շնորհքն պիտի թափի  
 Հնձուած խոտին վրայ:  
 Երկրիս պըտուղն պիտի ելլէ,  
 Ու մեր Աստուածը մեզ օրհնէ:

5 Դարձեալ թող հրեշտակներն  
 երկրիս վրայ երևնան,  
 Եւ մահկանացուներն  
 թող բարձրաձայն ցնձան,  
 «Փառք ի բարձունքս» թող երգեն  
 Բողոք երկիրն ըսէ, Ամէն:

## 252 Տէր՝ Դ---նիւ. (8):

1 Յիսուս փրկիչ, մահկանացուք  
 Գեղ գաւանիլ ամօթ սեպեն.  
 Գեղ զոր երկնից հրեշտակք անթիւ  
 Միշտ կը գովեն, միշտ կը պաշտեն:

2 Տէրն գաւանիլ ամօթ սեպեմ.  
 Ոչ, նա միայն ինձ կը ներէ,  
 Եւ նա միայն հոգւոյս թշուառ  
 կեանք, լոյս և յոյս կը պարգևէ:

3 Ամօթ սեպեմ Տէրս դաւանիլ,  
 Որով միայն կը վերհերում.  
 Ոչ, այս ըլլայ ամօթ ինձի  
 Թէ Տէրս սրտանց սիրած չունիմ:

4 Ձր դաւանիլ ինձ էր հընար,  
 Թէ չըլլայի մեղօք ճշուած,  
 Ողորմելի, անյոյս, թշուառ,  
 Հոգևով կարօտ սիրոյն գըլթած:

5 Ամէն ժամ ես կ'ուրախանամ  
 Որ Տէրս խաչեալ է կենդանի,  
 Եւ երբ մեռնիմ, վստահ եմ թէ  
 Խը քով պիտի գիս ընդունի:

## 253 (168) ԱՄՊԻՆԻ ԲԵՆԵՔԻՆԸ ԿԱՆՈՒԹԱՅԻՆ (8):

1 Երկնի, երկրի Տէր թագաւոր,  
 Արքայութիւնդ է հոգևոր,  
 Սուրբ Հոգիէդ որ չէ ծընած՝  
 Յարմար չէ նա, օտար անոր:

2 Աթոռըդ է արդարութիւն,  
 Եւ օրէնքներդ միշտ սրբութիւն.  
 Չեն մաւտ գտներ սուրբ սահմաններդ  
 Ձրկանք, շարիք, ամբարշտութիւն:

- 3 Դուն աշխարհի լոյս ծագեցար ,  
 Խաւարն քեզի հազորդ շըւար :  
 Ճշմարտութեան ես թագաւոր ,  
 Երկնից մէջ սուտ՝ տեղ չըզանար :
- 4 Արքայութիւնդ է սրբութիւն ,  
 Եւ անլրդով խաղաղութիւն .  
 Կրնայ՞ մանեւ հոն որ սիրէ  
 Մարմին , կիրքերն և պղծութիւն :
- 5 Արդ մենք ալ , Տէր , ենք մարմնաւոր ,  
 Խնդրենք , ըրէ մեզ հոգեւոր ,  
 Արքայութեանդ ըրէ ժառանգ ,  
 Եւ ողորմէ մարդկանց բոլոր :

## 254 ԱՒԴՄԱՆԻ ԿՆԵՆԻ (8) :

- 1 Պատուէր տըւաւ փրկիչն մարդկան  
 Բոլոր իրեն աշակերտաց ,  
 Որ քարոզեն Աւետարան  
 Ամէն երկիր , ամէն ազգաց :
- 2 Չայս պատուիրան դուն միշտ յիշէ ,  
 Ո՛վ Գրիստոսի Եկեղեցի ,  
 Խաչեալ փրկիչն միշտ քարոզէ  
 Անհաւաստի , հեթանոսի :

3 Բոլոր աշխարհք Փրկչին հաւտան ,  
 Անով դանեն յոյս , փրկութիւն .  
 Եւ հասկընան թէ նա միայն  
 է կեանք , ճամբայ , ճշմարտութիւն :

4 Տէր , քու խօսքովդ լուսաւորէ  
 Ամէն մարդիկ բոլոր երկրի .  
 Բոլոր աշխարհ քեզ ճանաչէ  
 Իբրև մէկ հօտ միոյ Հովուի :

5 Քու սուրբ խոստմունքդ յաւերժական  
 Մեղաւորներն դարձի բերեն .  
 Որ բերկրանօք քեզ յախտեան  
 Երկինքի մէջ փառաւորեն :

## 255 Ա-Է-Տ-Ն-Բ-Ի-Ն-Տ-Ն-Է-Ն-Է . ( 8 , 7 , 4 ) :

1 Յուդայի լերանց վրայովը  
 Աւետիս բերող կ'ելլէ .  
 Քաջալերական խօսքովը  
 Գերի Սիօնին կ'ըսէ ,  
 Քու Աստուածըդ  
 Հիմա լուծըդ կը քակէ :

2 Վա՛յ, երկարեցա՛ն գիշերըդ,  
 Քու ցաւերըդ բազմացա՛ն.  
 Քաշուեցա՛ն բարեկամներըդ,  
 Թշնամիք գոռողացա՛ն.  
 Քաջ լեր հիմա,  
 Բարիքի օրեր հատան:

3 Քու արեդ ահա ծագած է,  
 Գիշերուան խաւարն անցաւ,  
 Նեղութիւնդ ամբողջ անցած է,  
 Տէրն քու ազատիչդ եղաւ.  
 Փրկութիւնըդ  
 Լիովին կատարուեցաւ:

256 (105) Ա-Է-Դ-Ե-ՆԸ + Ի-Դ-Ը-ՆԻ-ՆԱԸ Կ-Ն-Ե-Դ  
 -ՆԻ-Դ-Ե (8, 6):

1 Տէր, քաղցրութեամբ վերէն նայէ  
 Քու քարոզիչներուդ.  
 Անոնց սիրտ տուր, և միշտ օգնէ  
 Շնորհքով քու Սուրբ Հոգւոյդ:

2 Ազգու ձայնով թող քարոզեն  
 Աւետարան Փրկչիդ.  
 Բոլոր աշխարհս քեզ դարձունեն,  
 Մեծնայ Եկեղեցիդ:

3 Ամէն ազգաց հասկըցունեն ,  
 Թէ լոկ Յիսուս Փրկիչ  
 Մեզի համար էջ երկինքէն ,  
 Եւ է մեզաց քաւիչ :

4 Ով Տէր , թէ որ հունձքեր շատ կան ,  
 Եւ խիստ քիչ մը շակներ ,  
 Ոյժ տաւր անոնց քարոզութեան ,  
 Ըլլան շատ պտղաբեր :

5 Փրկչիդ անուն , անհուն ալ սէր  
 Ամէն մարդիկ ճանչնան .  
 Որով ամէն կրօնապաշտներ  
 Շուտով քեզի դառնան :

257 “Եւ-նի Ի-ւ-ն -է-ն Ը-ր-ե-ր-տ-ի Կ-ր-տ-ն-ի-ն” . ( 6 , 6 , 8 , 6 ) :

1 Առաւունքս սերմնից ցանէ ,  
 Կէս օրն աւ իրիկունն .  
 Առատ ձեռքով միշտ տարածէ  
 Կենաց տեղեկութիւնն :



2 Անշուշտ պիտի բուսնի  
 Կանանչ ու գեղեցիկ .  
 Խօսար, հասկը, ցորենն ալ լի,  
 Հասուն, բիւրապատիկ :

3 Փուճ տեղ դուն շես կրնար  
 Սուրբ սերմը սերմանել .  
 Կարող է Տէրը և յօժար  
 Պրտուղն յառաջ բերել :

4 Ուստի ցանէ յուսով  
 Խօսքը ճշմարտութեան,  
 Որ օրն հնձոց փառաց թագով  
 Երգես երգ ցնձութեան :

## 258 Ա--+եւ-ի-ն էրդ . (7 . 6 . 8 տող) .

1 Երկրիս ամէն ծայրերը  
 Մեզի կ'աղաղակեն .  
 Մութի մէջ նատողները  
 Դառն արցունքով կ'ըսեն ,  
 Տուէք մեզի ան լոյսը ,  
 Ահա կը կորսը ինք .  
 Ճանչնանք մեր մեծ փրկիչը ,  
 Որ յաւիտեան ապրինք :

- 2 Հնդկաստանի հովերը  
 Թող քաղցրաշունչ փրչեն,  
 Եւ հտաբւէտ թռչները  
 Թող համեմներ բուրեն,  
 Թէպէտ և բընութիւնը  
 Ազնիւ է և պայծառ,  
 Ահա խեղճ մարդկութիւնը  
 Ինկած է և թշուառ:
- 3 Ամէն բան հոն անոյշ է,  
 Սիրուն, բայց ի՞չ օգուտ  
 Որ հեթանոսն ապուշ է,  
 Ու չարագործ և սուտ.  
 Իր Արարիչ Աստուածը  
 Բընաւ ալ շըճանչնար.  
 Եւ ի՞նչ է իր պաշտածը.  
 Անխօս, կոյր փայտ և քար:
- 4 Դուք որ լուսաւորուած էք  
 Լուսով մը երկինքէն,  
 Ճշմարտութիւն սօրված էք  
 Մեր մարդասէր փրկչէն.  
 Կրնա՞ք կենաց ճըրագը  
 Եղբայրներնէդ պահել,  
 Կրնա՞ք մարդոց որդիքը  
 Անոյս կորուստ խրկել:

6 Ոչ, այլ ձեր ունեցածը  
 Կարօաներուն տրե՛ք .  
 Եւ ձեր ձրբի առածը  
 Չրբի հաղորդեցէ՛ք .  
 Մեծ փրկութեանը լուրը  
 Փութով թող քարոզուի .  
 Մեծ փրկութեանը ջուրը  
 Մարւողներուն տրուի :

6 Ով գուք, երկնից հովերը,  
 Աւետարան տարէ՛ք .  
 Եւ գուք, ծովուց ջուրերը,  
 Անոր ճամբայ բրէ՛ք .  
 Շուտով երկրիս ծայրերը  
 Թող բարձրաձայն ցնժան .  
 Կտարեն բոլոր ազգերը  
 Մոլորութեան շղթան :

**259** ՀԵՐՆԱՆԵՐԷՆ ԱՆՆԻ . (6, 5) :

1 Մեզի ողբի ձայն մը՝  
 Երկրի ծայրերէն,  
 Սուգի աղաղակ մը  
 Կու գայ ազգերէն .  
 Կ'ըսէ, Եղբայրներ մեր,  
 Մեզի շուտ եկէ՛ք .  
 Խիստ շատ են ցաւերն մեր,  
 Մեզի օգնեցէ՛ք :

2 Մեղքով խիստ կապուած ենք

Ու դատապարտուած .

Մահուան մէջ նստած ենք

Յոյսէն կտրուած .

Մէկ անձ մը շըկայ ալ

Մեզ մըխիթարող ,

Ըրած աղօթքնուս ալ

Չըկայ միաք գընող :

3 Դուք որ Յիսուսինն էք ,

Մեր ձայնն լրտեցէք .

Չըրի դուք առած էք ,

Չըրի ալ տըէք .

Ճամբան փրկութեանը

Մեզ սորվեցուցէք ,

Մեղքի մեծ դարմանը

Մեզի ճանչցուցէք :

4 Անմահ հոգիները

Կրակէն հանելու՝

Բոլոր ձեր ջանքերը

Արժան է տալու :

Արժատի և ոսկի ալ

Բնաւ մի խընայէք ,

Եւ ձեր անձերնիդ ալ

Կամաւ զոհեցէք :

Ե Կ Ե Ղ Ե Տ Ի Ն

260 Մ-ընդ-ընդ Եկեղեցւոյ համար .  
( 8 . 8 տող ) .

1 Եկեղեցիդ ընդ հանրական  
Որ քու սիրոցդ է առարկայ ,  
Տէր իմ , շընորհ-քըդ հայրական  
Յուցուր այսօր անոր վըրայ :  
Աշակերտներդ կ'աղօթեն  
Մեժ հաւատքով ամէն տեղեր ,  
Իրենց յոյսէն դատարկ չելլեն ,  
Դուն , ով Յիսուս , կաց 'ի մէջ մեր :

2 Տէր , քու բանիդ խոստումն յիշէ ,  
Եւ հաճեա՛իր զայն կատարել .  
Թող Սուրբ Հոգիդ մըխիթարէ ,  
Սորվեցունէ ըզքեզ օրհնել .  
Բացուին աչք մեր առ ըյս փրկչիդ ,  
Ու սիրտերնիս դարձուր , շխտէ :  
Եւ աղօթող Եկեղեցիդ  
Թող երջանիկ դար վայելէ :

- 3 Աւետարան թող տարածուի  
 Մինչև երկրիս վերջին ժայրեր .  
 Ամէն տեղ ալ լրասուի թող ձայն  
 Նոյն օրհնութեան և նոյն երգեր :  
 Եւ ժողովուրդք խիստ վայրենի  
 Խաչին առջև դան ժողովին ,  
 Պատիւ տան մեր անյաղթելի  
 Թագաւորաց Թագաւորին :

## 261 ԲՆԵՆԻԿԵՆՑԻ ԵՆՆԵՆԻՑԻ ԵՆՆԵՆԻՑԻ (Ց) :

- 1 Ով Տէր , քու Սուրբ Եկեղեցիդ  
 է մի միայն և անսասան .  
 Ձի զայն հիմնեց քու Սուրբ Հոգիդ ,  
 Առաջնորդող ճշմարտութեան :
- 2 Ով Տէր , քու Սուրբ Եկեղեցիդ  
 Ձք սրխալիք մինչ յաւիտեան ,  
 Երբ հեռեոյ է Սուրբ Խօսքիդ ,  
 Եւ անձանօթ է սրտութեան :
- 3 Ով Տէր , քու Սուրբ Եկեղեցիդ  
 Քու Սուրբ անուամբդ է ժողոված .  
 Հոն քարոզուի խօսք Սուրբ Գրքիդ ,  
 Մարդկանց սրտուէր հոն չէ մըտած :

4 Ով Տէր, քու Սուրբ Եկեղեցիդ  
 Քաղքի անուամբ չէ որոշուած .  
 Այլ կատարողն ըզխօսք Փրկչիդ՝  
 Նա է անոր մէջ հաստատուած :

5 Տէր, մեզ պահէ յԵկեղեցիդ,  
 Ի սուրբ փարախ ընտրեալ դասին .  
 Մեզ հասցունէ քու Սուրբ Հոգիդ  
 Այն երանեալ յաղթականին :

262 Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն ( 7 ) :

1 Ով սուրբ հարսըն Քրիստոսի,  
 Նոր Սիօն Եկեղեցի .  
 Միշտ Տէրոջ սէրն է քեզի,  
 Այլ թեն ալ քեզ հովանի :

2 Ինք Բարձրեալն կը պաշտպանէ,  
 Քեզ աչքին պէս կը սիրէ .  
 Իբ գըլթովը կ'ազատէ  
 Չարիքէ, շարութենէ :

3 Փառաւոր բաներ կ'ըսեն  
 Քու վըրայ՝ թէ Սուրբ ազգ են .  
 Պարձանքով պիտի ըսեն,  
 Ասիկա է անոնցմէն :

4 Երբ քու գեղեցիկ պատկեր  
 կը տեսնեն ամէն ազգեր ,  
 կը զմայլին , կ'ըսեն , Ո՛ր էր ,  
 Բախտերնիս քեզի կցուէր :

5 Շատ ժողովուրդներ խումբով  
 կը գիմեն քեզ ընծայով .  
 Զի ազգիւր մը կայ քու քով  
 կենդանի յստակ ջուրով :

## 263 Սէ: -- ԵՒԷԶԻ. Սաղ. ՃԻԲ. (8).

1 Կը խնդայի Երբ կ'ըսէին ,  
 Երթանք Տէրոջ տանարն մրսեմ .  
 Մեր ոտուրներն պիտի կայնին  
 Քու գրանըդ մէջ , Երուսաղէմ :

2 Երուսաղէմ աղուոր շինուած ,  
 Շիտակ , ողորկ քաղքի նրման .  
 Տէրոջ ցեղերն հոն են ժողված ,  
 Որ միշտ փառք տան Տէրոջ անուան :

3 Դուք խնդրեցէք խաղաղութիւն  
 Երուսաղէմ քաղքին համար .  
 Ու թող գանեն յաջողութիւն  
 Քեզ սիրողներն միշտ անդադար :



4 Եղբարցս համար պիտի ըսեմ,  
 «Խաղաղութիւն ըլլայ քեզի» .  
 քեզ բարութիւն պիտի ուզեմ,  
 Ձի Տունն Տէրոջ հոն կը կայնի :

**264** Ե՛կէ՛ք Աստուծոյ բնակարանն է . Սաղ .  
 ՃԼԹ . (8) :

- 1 Ով Տէր Աստուած , Տէր բոլորին ,  
 Քու սուրբ տաճարդ մտնենք սիրով .  
 Եւ սուրբ ոտքիդ պատուանդանին  
 Երկրպագենք բոլոր սրտով :
- 2 Պաշտօնեաներդ թող միշտ հաղնին  
 Արդարութիւն և ուղղութիւն .  
 Եւ քու սուրբերդ թող միշտ հրճուին՝  
 քեզ երգելով սուրբ օրհնութիւն :
- 3 Աստուած երգում ըրաւ Դաւթի ,  
 Ճշմարտութեամբ է հաստատուած .  
 «Գահիդ վըրայ պիտի նստի  
 Որովայնիդ պըտուղն օրհնած» :
- 4 Պաշտօնեաներն պիտի հաղնին  
 Իր փրկութիւնն աստուածական .  
 Տէրոջ սուրբերն միշտ խնդագին  
 Պիտի երգեն երգ յաղթութեան :

5 Գաւթէն եղջիւր պիտի բուսնի,  
 Ուր տեղ որ է իմ սուրբ տաճար.  
 Ճրբադ պիտի պատրասարի  
 իմ Օծելոյս փառքին համար:



Կ Ի Ր Ա Կ Ի Օ Ր

265 Տ Ե Ր Ի Ն Ի Ն Ի Ն ( 8 , 6 ) :

1 Այս է այն օրն որ Տէրն օրհնեց ,  
 Երկինքը թող ցնծայ .

Այս օրն իրեն սեպհականեց ,  
 Երկիրն ուրախանայ :

2 Այս օր մեր Տէրն սատանային  
 Յաղթեց , երբոր յարեաւ .

Ննջեցելոց երախայրին  
 Գերեզմանէն ելաւ .

3 Այս օր սուրբերն կը ժողովուին ,  
 Որ զինք սիրով յիշեն .

Իրենց Փրկչովը կը զմայլին ,  
 Իբ փառքը կը յայտնեն .

4 Ահա մեզ օրհնելու կու գայ  
 Մեծ Դաւիթին Որդին .

Յիսուս , ողջոյն քեզ , ուխտանա  
 Օծեայ թագաւորին .

## 266 ՆՊԷ. (6, 6, 8, 6) :

1 Ով Սուրբ Հայր գլխութեանց,  
Դուն ողորմէ մեզի :

Խրկէ հիմա Հոգիդ շնորհաց  
Այս օրըս տէրունի :

2 Քու շնորհքովդ մաքրէ  
Մեր անմաքուր սրտեր :

Վասն Յիսուսի արդ ընդունէ  
Չանկեղծ պաշտօնըս մեր :

3 Շնորհք ըրէ, ցոյց դուն  
Սուրբ գէմքրդ փառաւոր :

Տէր, փրկութեանդ ցնծութիւն,  
Յոյժ կ'աղաչենք, մեզ տուր :

4 Մեր յոյսն միշտ առ քեզ է,  
Դուն ես մեր փրկութիւն :

Այս սուրբ օրուան մէջ մեզ ներէ  
Մեզացըս բազմութիւն :

5 Ով վըշտակիր հոգիս,  
Չրդէ դուն աշխարհի

Բաներն, յանձնեմ՝ Տէրոջս ես զիս,  
Հանգիստ դանեա երկնի :

## 267 Տէրանի օրն հանելի . (8) .

- 1 Գործ հաճելի հոգւոյս է , Տէր ,  
կարգալ անուանդ օրհնութիւններ .  
Առտուն քու սէրդ գովարանել ,  
Իր'կուն խօսքերդ ալ մըտածել :
- 2 Վայել է այս օրն հանգրատեան  
Որ խորհուրդներս յերկինս ըլլան .  
Քնար ներդաշնակ թող սիրտս ըլլայ՝  
Տեառն օրհնութիւն երգել հիմա :
- 3 Սիրտս ցնծացաւ Տէրոջ համար ,  
Իւր գործքն ու խօսքն փառաւորեալ .  
Խիստ մեծ է գործքն փրկութեան ,  
Տնօրէնութիւն իմաստութեան :
- 4 Թէ կատարեալ է փրկութիւնս ,  
Է պատուական երկնից բաժինս .  
Թշնամիէս , որ է մեղք իմ ,  
Ո՛հ , յաւիտեան ես կ'ազատուիմ :
- 5 Հոս ունեցած բաղձանքս բոլորն  
Պիտի ըղգամ , տեսնեմ ես հոն .  
Ամէն փափաքս լցուի պիտ' յոյժ ,  
Սրտիս մտքիս գործն է անոյլ :

# 268 ԿԻՐԱԿԻ ԿՆՆՆԻՆԻ ( 7 ) :

1 Կը սիրեմ զօրն տէրունի ,  
 Զի Բարձրեալն ներկայ լինի .  
 Գալ առջին արգ կը փութամ ,  
 Որ իմ սիրտս Անոր բանամ :

2 Կը լըսէ Աստուած բոլոր  
 Մեր աղօթքն ամէն աւուր .  
 Բայց այսօր մէկտեղ կու գան  
 Իւր սուրբերն 'ի սրբարան :

3 Հրեշտակներն ալ բիւր թըւով  
 Կը պատեն շուրջ զաթոռով .  
 Մինչ յերկինս իրենց դասէն  
 Փառք պատիւ վեր կ'ընծայեն :

4 Սերովրէք բազմութեամբ կան  
 Արքային սուրբ պաշտաման .  
 Փրկելոցն խումբ հրճուալից  
 Օրհնութիւն տան ձայնակից :

5 Քարոզուի Աւետարան  
 Այս օր , մեզք ներուած կ'ըլլան .  
 Է հանգիստ յոգնածներուն ,  
 Անմաքրոց ալ սրբութիւն :

6 Ո՛հ, սրտիս շատ սիրելի  
Այս օրհնեալ օրն տէրունի .  
Օր աղօթք մատուցուելու ,  
Տէրն պատրաստ է լրսելու :

**269** ԵՐԷ՝՝՝՝ Է ԵՐԲ՝՝Բ ԿՆԷԷ՝՝՝ . (8) :

1 Օրն տէրունի երկրիս վերան  
Հոգւոյս իսկ է օր հանգստեան .  
Բայց կատարեալ՝ փառաց հանգիստ  
Սրբոց պատրաստ յերկինս կայ միշտ :

2 Բնաւ յողնութիւն երբէք չլլար ,  
Մահ , մեղք մտնել հոն չեն կրնար .  
Երկնից քաղցրիկ սուրբ օրհնութեանց  
Տրտունջ և ողբ չէ խառնուած :

3 Ոչ ծանր հոգեր և ոչ վախեր  
Քու սուրբ հանգիստդ կրնան աւրել .  
Ոչ անց կայ հոն , ոչ բռնութիւն ,  
Արև դարնան միշտ է փայլուն :

4 Քաղցր եզանակ , ո՛հ , շուտ թող դայ ,  
Ճառագայթէ երկրիս վերայ .  
Այս կեանքս պանդուխտ շուտով անցնի ,  
Փրկչիս քով իմ հոգիս հանգչի :

## 270 ԿԻՐ-ԿԷ ԵՐՈՒՆՆ ԿՂՆԱԾԱՆԷԷ . (7 . 6 տող) .

- 1 Ապահով Տէրն մեզ պահեց  
Այս շարաթ ալ մահուանէ .  
Եւ պսօր մեզ հոս ժողովեց ,  
Որ շքնորհք խնդրենք իրմէ :  
Ի՞նչ հաճոց է կիրակին ,  
է նրման երկնաւորին :
- 2 Երբ շքնորհքդ , Տէր , խնդրենք  
Սիրելի ֆրկչին ձեռքով ,  
Լուսափայլ երեսդ տեսնենք ,  
Մեղքերնիս քաւուի քեզմով .  
Թող աշխարհք անպսպ ըլլայ ,  
Աքերնիս քու փառքդ տեսնայ :
- 3 Երբ քեզ կբ փառարանենք ,  
Տուր որ քեզ ներկայ ճանչնանք .  
Եւ քու փառքդ մենք տեսնենք՝  
Երբ մէկտեղ տաճարդ կու դանք .  
Համե առնել տուր , Տէր , մեզի  
Յախտենական ճաշի :



4 Բարոզուած ճշմարտութիւնն  
 Մեղաւորն թող նորոգէ ,  
 Սիրողներն զարդարութիւնն  
 Եւ սուրբերն մըխիթարէ :  
 Թող ամէն մէկ կիրակի  
 Չատրաստէ մեզ երկինքի :

271 ԿԻՐԱԿԻ ԿՆՆԱԿ ( 6 , 6 , 6 , 6 , 8 , 8 ) :

1 Այս առաւօտն օրհնեալ  
 Ինչ քաղցր է հոգւոյս ,  
 Կու տայ ճառագայթներն  
 Զբարթութիւն սուրբ յոյժ .  
 Գործ աշխարհի , զբարձութիւն  
 Զաւրեն թող զխժ հանգիստ սիրուն :

2 Արքայն կենաց իջեալ  
 Բաշխէ շնորհք երկնային ,  
 Զայն սրաշտեւոյժ ազգերն  
 Հաւտան ու փրկըին .  
 Թող ընդունին մեղաւորներ  
 Բու սուրբ խօսքըդ , շընորհքըդ , Տէր :

3 Սուրբ Աղաւնիդ Բարձրեալ,

Դու մեզ այսօր օրհնէ .

Սրբէ , ս՛հ , մեր սրտերն ,

Անոնց մէջ բընակէ .

Որ մեր հոգին կեանք գտնելով ,

Տէրողը փառք տայ ցնծալով .

**272** Կէտ-ի՛ --- -- . ( 8 , 6 ) :

1 Փառք , օրհնութիւն սրտանց կու տամ .

Սուրբ օրուան համներուս .

Անձիս խիստ հարկաւոր է այն ,

Անմահ կեանք է հոգւոյս :

2 Մէկդի երթան այսօր աշխարհ ,

Բոլոր ունայն բաներն .

Զի նա որ է ծառայ ուխտեալ՝

Պարտի պաշտել ըզՏէրն .

3 Բաղձամ , ով Տէր , քեզ նըւիրել

Իմ սէրս ու միաքս բոլոր .

Հոգւով պաշտօն ալ կատարել

Ըլլայ իմ գործս այսօր .

4 Քու տաճարիդ մէջ քեզ օրհնել՝

Այս է իմ պարտքս անշուշտ .

Ներկայութեանդ ալ գտնուիլ՝

Այս՝ իմ փափաք , խորհուրդ .

# 273 ԿԻՐ-ԿԻ ԵՐ-ԱՆ ԵՐԿԻ-ԱՆՆԸ . (6) :

1 Սուրբ օրն իր վախճանին 13

Հինա ալ մօտեցաւ .

Իմ վրաս այս կիրակին

Ի՞նչպէս հաշիւ տըւաւ :

Արդեօք ինձ փոխ տրուած

Ժամերը յարգեցի՞ :

Թէ օրըդ , ով Աստուած ,

Պարապ տեղ վատնեցի .

2 Դատապարտեալ հոգին

Ի՞նչ մեծ ցաւով կ'ողբայ

Վատնած այն կիրակին ,

Որ սխտի շրջառնայ .

Ի՞նչ յուսահատութիւն՝

Երբ ինքնիրեն ըսէ ,

Պատրաստ կար փրկութիւն ,

Բայց մերժեցի ինձմէ :

3 Կիրակինն ժամերն

Չը յանդգնինք պղծել ,

Կամ աղօթքի օրերն

Ունայն կերպով վատնել :

Սուրբ օրը թող ըլլայ

Մեզի երկնից նըման .

Կանխիկ նաչակ ըլլայ

Վերին սուրբ հանդատեան .



5 Ով Տէր, հետերնիս գանձէ,  
 քու ներկայութիւնը ցուցուր,  
 եւ առ քու սեղանը օրհնէ,  
 քեզմով մեր սրբաւերը լեցուր :

6 Խօսքիդ համեմատ կ'ազաչենք,  
 Մեզի քու Հոգիդ պարգևէ .  
 եւ հոս որ մենք քեզ կը յիշենք,  
 Դուն, ով Տէր Յիսուս, մեզ յիշէ :

**275** “Ա-է-է-ւ ւե-ւ-ւ- յե-ւ-ւ- հ-ւ-ւ-ւ” . Ղուկ .  
 ԻԲ . 19 . (8, 6) :

1 Ետրհացրդ խօսքը կը լըսեմ .  
 Խոնարհ սրտով և հեզ  
 Պատուէրդ պիտի, Տէր, կատարեմ,  
 Պիտի յիշեմ ըզքեզ :

2 Սիրով մարմինդ պարգևեցիր,  
 երկնից հաց, որ ուտեմ .  
 Ուխտիդ գաւաթն ալ ձեռքս տըւիր,  
 Տէր, քեզ պիտի յիշեմ :

3 Կրնամ մտնալ Գեթսեմանի,  
 կամ հոն տաղնապղ տեսնել,  
 Արեան քրտինքը սոսկալի,  
 եւ քեզ, Տէր, չը յիշել :

- 4 Գառն Աստուծոյ, առ Գողգոթա  
 Երբ աչքս դարձրնեմ,  
 Ու քեզ տեսնեմ խաչիդ վըրայ,  
 Պէտք է որ քեզ յիշեմ:
- 5 Ինձի համար կրրած ցաւերդ,  
 Քանի որ շունչ կ'առնեմ,  
 Ո՛հ, Տէր Յիսուս, քու գութդ ու սէրդ  
 Անշուշտ պիտի յիշեմ:
- 6 Եւ երբ մահկանացու ճամբաս  
 Այլի վախճանն գտնէ,  
 Երբոր արքայութեամբըդ գաս՝  
 Դուն, ով Տէր, զիս յիշէ:

## 276 Ն՝ՆԷ. (8, 6):

- 1 Եթէ մարդոց մէջ քաղցրութիւն  
 Անփոխարէն չըմնար,  
 Բարեկամի ներկայութիւնն  
 Անհոգ մընալ չըտար,
- 2 Այն Բարեկամն ի՞նչպէս սիրենք  
 Որ երկինքէն իջաւ,  
 Եւ որ անմահ կեանք ժառանգենք՝  
 Մեզի համար մեռաւ:

- 3 Մեռաւ՝ որբի վիշտէ սաստիկ  
 Մեր վիշտն խափանելու .  
 Լեզու այն սէրն ու երախտիք  
 Կարող չէ պատմելու :
- 4 Երբ կը դիտէր գեռ այն ցաւերն  
 Ուսկից ինք չէր փախչէր ,  
 Ինչ խանդակաթ վերջին խօսքերն ,  
 «Զիս յիշեցէք» , կ'ըսէր :
- 5 Յիշե՞նք մեզի համար կրրած  
 Քու մահը , և սէրդ անհուն .  
 Տէր , սրտերնուս վրայ քանդակուած  
 Զըլայ ուրիշ անուն :

## 277 Գ Ե Ր Ո Ջ Ը Ը Ն Թ Ր Ի Գ Ը . ( 6 , 6 , 8 , 6 ) :

- 1 Տէրոջ պարզեն տեսէք ,  
 Ով մեղաւորք , ծունկ դրէք .  
 Որ պատուական արիւնն թափեց ,  
 Զամօթ , զանէծք մեր կրեց :
- 2 Ահա մեզ հաց կենաց  
 Եկաւ տալ Տէրն փառաց .  
 Մեղաւորին տեղ կը մեռնի ,  
 Որ յաւիտեան ապրի :

3 Տէրն կը հաճի մեզ տալ,  
Գիտէ որ մենք անկար  
Ենք բընութեամբ, չունինք փրկանք  
Տալով գնելու փառք, կեանք :

4 Թող ձեր հաւատքն աճի .  
Եկէք փութանակի ,  
ԸզՏէր Յիսուս ընդունեցէք ,  
Դուք չէք մեռնիր երբէք :

## 278 ԳԵՂՈՍ Է ԸՆԴԵՆՅ ԿԵՆ ( 8 , 6 ) :

1 Ի՞նչ քաղցր այս տեղ և ահաւոր ,  
Ուր քոյն եմ Յիսուսի ,  
Հոս մշտապառ միակ սէրն անոր  
Պայծառ յոյժ կը փայլի :

2 Մեր միտքն ապշած մէկտեղ կ'երգենք -  
Խորհորդ ըսքանչելի .  
Փառք փառք տալով կ'աղաղակենք ,  
«Կոչմանս չենք արժանի» :

3 «Ո՛հ , ի՞նչպէս մենք ձայնիդ լըսող  
Մըտանք ներս , մինչ տեղ կայ ,  
Շատերն երբ են թշուառ ընտրող ,  
Գալ չեն ուզեր , բայց մահ» :



4 Նոյն սէրն որ սյա տօն սահմանեաց,

Նոյն խոհ բերաւ մեզ հոս .

Թէ չէ, մերժած՝ մէջ մեր մեզաց

Կորսուած էինք անպոյս :

5 Գլթա երկրիս, ով մեր Աստուած,

Կանչէ, հոս դան ամէնն,

Սուրբ Խօսքդ յաղթող գրկէ ազգաց,

Ներս առ և օտարներն :



Մ Կ Ր Տ ՈՒ Թ Ի Ի Ն

279 ՄԻՆԻՆ ԿՆԵՐ ԵՒՒ (8) :

- 1 Տէր բազմադուլ ռ ու ողորմած ,  
 Հիմա սիրոյդ բազուկներով  
 Քեզ նըւիրուած այս երախան  
 Առ , նորոգէ ձըրի շնորհքով :
- 2 Մեր նախահօրը արմատէն  
 Ամէնքըս ալ մեղքով ծընանք .  
 Օտարացանք մեր Աստուծմէն ,  
 Ու բարկութեան որդիք եղանք :
- 3 Բայց դուն սիրով ու գըթութեամբ  
 Մեզապարտից ողորմեցար ,  
 Կատարեցիր անգին արեամբ  
 Քու ուխտըդ , Տէր , որ խոստացար :
- 4 Մեծ խոստմունքներ դուն ես տըւեր  
 Բարեկամիդ Աբրահամին ,  
 « Բաշոր ազգեր ու լեզուներ  
 Քու սերունդովըդ օրհնըւին » :
- 5 Ի դործ դըրիք քու խօսքըդ , Տէր ,  
 Ի դործ դըրիք անհուն սիրով .  
 Մեզի հասան այս խոստմունքներ ,  
 Ու մեր որդւոցը , Յիսուսով :

6 Ուստի այս երախան բերինք ,  
Հօտիդ մէջ , ով Տէր , ընդունէ .  
Մենք լոկ ջըբով մըկրտեցինք ,  
Դուն քու Հողւովըդ մըկրատէ :

7 Յուցուր անոր ուզիդ նամբան ,  
Նոր սիրտ անոր մէջ ըստեղծէ .  
Թող կանչուի որդի խոստման ,  
Դուն միշտ անոր առաջնորդէ :

## 280 Աբու-հ-մ. հե. Է. շ. 10-րդ հրատման Կ . ( 8 , 6 ) :

- 1 Ի՞նչ լայն խոստմունք , ի՞նչ փառասոր ,  
Աբրահամին արուած ,  
“ Բեզի և սերունդիդ բոլոր  
Պատի ըլլամ Աստուած ” :
- 2 Այս խօսքն սիրոյ զարմանալի  
Դարէ դար կը տեւէ .  
Քրիստոս , ուխտին հրեշտակն , մեզի  
Խոստմունքը կը կնքէ :
- 3 Ինք մեր տրդաքը կ'ընդունի  
Սիրոյ բազուկներով .  
Իր օրհնութեամբ երանելի  
Կ'ըլլան և ապահով :

4 Հաւատարիմ է Տէր Յիսուս ,  
 Ուխտէն մեզ չըմերժեր .  
 Եւ իր գրքէն զաւակներնուս  
 Անունը չըջնջեր :

## 281 Աւի+ Մի+...Ի+...հ+... (8) :

1 Ով Հայր Աստուած ողորմութեան ,  
 Հաճէ ընել զայս երախան  
 Քուկին շնորհաց ուխտիդ որդի ,  
 Որ քեզ պաշտէ սիրով սրախ :

2 Որդիդ Աստուած , Փրկիչ մարդկան ,  
 Քեզ նըւիրուած այս երախան  
 Քու արիւնովդ դնուած ըրէ ,  
 Ժողովրդեանդ հետ խառնէ :

3 Ով Սուրբ Հոգի , սրբացուցիչ ,  
 Որ ես միայն բնութեան մաքրիչ ,  
 Այս երախան սրբէ , մաքրէ ,  
 Նոր սիրտ անոր դուն պարզեւէ :

4 Ով Հայր , Որդի և Սուրբ Հոգի ,  
 Երրորդութիւն ըսքանչելի ,  
 Մենք զայս քեզի կը նըւիրենք ,  
 Քուկըդ ըրէ , Տէր , կը խնդրենք :

Զ Ա Ն Ա Չ Ա Ն

282 Ա-----տե-ն էրդ . (8) :

1 Արտանց կու տամ փառք քեզ , ով Տէր ,  
Որ պահեցիր զիս այս գիշեր .  
Ինձ տըկարիս դուն հոգ տարիր  
Նոր լոյսն ալ ինձ տեսնել տըիր :

2 Տէր , աս լուսոյն հետ երեսիդ  
Լոյսն ալ շնորհէ քու ծառայիդ .  
Անով հոգւոյս խաւարն մէկդի  
Առ , որ ըլլամ լուսոյ որդի :

3 Այսօր ալ ինձ առաջնորդէ ,  
Ազատ պահէ շարիքներէ .  
Օգնէ ինձ որ բարիք գործեմ ,  
Քեզ և մարդիկ սրտանց սիրեմ :

283 Ա-----տե-ն էրդ . (8 , 6) :

1 Տէր , առտըւանց չուշանալով  
Երեսդ կը փնտրուեմ .  
Միրտս կը մարի մեծ ծարաւով ,  
Մինչև շնորհքդ առնեմ :

2 Անապատին մէջ պսակս է  
 Ճամբորդն որ կը մարի,  
 կը փափաքի՝ գետ մը գլունէ,  
 Խըմէ ու չըմենի:

3 Փառքովդ՝ տեսեր եմ ես, ով Տէր,  
 Քու սուրբ տաճարդ լեցուած:  
 Շնորհէ տեսնեմ կրկին ես, Տէր,  
 Փառքիդ տեսիլքն օրհնած:

## 284 Ա---տեան երգ. (10).

1 Հողիս, արթընցիր, արևը դուն տես,  
 Ճամբուդ մէջ մըտիր, վազէ անոր պէս:  
 Ամէն ծուլութիւնդ քեզմէ թօթափէ,  
 Եւ անհողութիւնդ մէկդի արձակէ:

2 Դուն ալ ասպարէզ ունիս վազելու,  
 Աստուած է որ քեզ իրեն կանչելու  
 Իր ձայնն կ'արձակէ, կը քաջալերէ,  
 Եւ ինքն ալ կու գայ մօտ որ քեզ փնտռէ:

3 Քու առաւօտեան աղօթքդ մատուր,  
 Եւ զո՛հ օրհնութեան անկեղծ մօտեցուր,  
 Քանզի կանչուած ես Փրկիչ Յիսուսին,  
 Սերով հրաւիրուած շնորհաց աթոռին:

- 4 Ուխտերըս կ'ուզեմ, ով Տէր, նորոգել,  
 Սրտանց կ'որոշեմ քեզի ծառայել.  
 Դուն ալ իմ մեղքերս ցօղի պէս ցրուէ.  
 Գիտես յանցանքներս, ինձ առաջնորդէ :
- 5 Առդ Հօրն և Որդւոյն և Սուրբ Հոգիին,  
 Միայն Աստուծոյն, որմէ կը բղխին  
 Բոլոր բարիքներն, թող փառք մատուցուի  
 Եւ օրհնութիւններ յերկնի և յերկրի :

285 Ա-դ-ւ-ւ և իւնի-ւ-ւ հ-ւ-ւ-ւ ե-ւ-ւ-ւ . (8) .

- 1 Ի՞նչ անխախճան է, Տէր, քու սէրն,  
 Ամէն գիշեր քենէ կու գան  
 Նոր պարգևներ, և առտուններ  
 Լռիկ կ'իջնեն ցօղի նրման :
- 2 Ամէն գիշեր զիս կը պահես  
 Զրտեսներւած վրտանդներէ .  
 Եւ առտրւանց դուն կը խրկես  
 Աբեղ որ զիս արթընցունէ :
- 3 Իմ անձըս քեզ կը նըխրեմ  
 Գիշեր ցորեկ, դուն իմ Տէրս ևս .  
 Անթիւ շնորհքներ քեզմէ կ'առնեմ,  
 Փառք յաւիտեանս պիտի տամ քեզ :

## 286 երէ երէկոյեան • (6, 6, 8, 6) •

- 1 Այս օրն անցաւ գընաց ,  
 Խաւարը կ'երևնաց .  
 Տուր որ յիշենք մահուան գիշերն ,  
 Ար շուտ կը մօտենայ •
- 2 Յոգնած , քունով թմրած ,  
 Մեր աչքը կը գոցենք .  
 Գերեզմանին մէջ՝ շատ շանցած  
 Ամէնքս սխտի ննջենք •
- 3 Գիշերս մեզ , Տէր , պահէ  
 Բոլոր վրտանգներէն .  
 Հրեշտակդ խրկէ որ մեզ հսկէ ,  
 Մինչ գայ առտու նորէն •
- 4 Եւ երբ առտուն կանուխ  
 Անխանջ արևն տեսնենք ,  
 Տուր որ անոր նրման անդուլ  
 Մեր առգարէզն վազենք •
- 5 Երբ մեր վախճանը գայ ,  
 Եւ առ կեանքէս զատուինք ,  
 Շնորհէ Փրկչին սիրոյն համար ,  
 Ար մենք քու գերկզ հանդչինք •



287 Ի ռ ի ռ -- Ն Ի ռ ռ . ( 10 ) .

1

Եղաւ իրիկուն , այս օր ալ անցաւ .  
Այս կարճ կեանքերնիս քիչ մ'ալ կարճեցաւ .  
Օրն ետ չըդատնար , անցաւ դընաց ան ,  
Մահն ու դատատան քիչ մ'ալ մտակցան :

2

Փառք քեզ որ այսօր ալ շատ բարիքներ  
Մեզի վայելել արւիր դուն , ով Տէր .  
Քեզմէ է որ ցաւ ու վիշտ չունեցանք ,  
Հանգիստ ապահով այս ժամիս հասանք :

3

Ո՛հ , որչափ մեղքեր դորժած ենք այսօր ,  
Եւ արժանացանք պատժոյ ահաւոր .  
Աստուած ողորմած , անհուն դուժ ունիս ,  
Սրտանց կը խնդրենք , քաւէ մեղքերնիս :

4

Քեզի յանձնելով մեզ ու մերայինք ,  
Քեզ ապաւինած ահա կը պատկինք .  
Պահէ պաշտպանէ մեզ փորձանքներէ ,  
Ու թէ որ կամքդ է , մեզ օր մ'ալ շնորհէ :



Ո՞ր թէ երբ ձրգեմ այս երկիր ,  
 Տէրոջ քաղցըր ձայնն ինձ ըսէ ,  
 «Իմ ուրախութիւնքս մըտիր ,  
 Ու իմ աթոռիս վրայ նստէ» :

289 Ն . Դ . 12 . (8) :

1 Օրերքս շուտ կ'անցնին , կ'երթան  
 Ոստայնանկին կրկոցին պէս .  
 Արագութեամբ կ'անհետանան  
 Յոյժ վազանցիկ շողիի պէս :

2 Ամէն վայրկեան մօտ կը բերէ  
 Զիս իմ կենացքս վախճանին .  
 Ամէն քայլ կը մօտեցրնէ  
 Մահունն և յուրտ գերեզմանին :

3 Ի՞նչ շուտ անցաւ անցեալ տարին .  
 Թրուաւ , գընաց , անհետացաւ .  
 Անձն իմ , արդեօք ըրի՞ր բարին ,  
 Թէ չարութիւնքդ աւելցաւ :

4 Վա՛յ ինձ , բազում անգամ մեղայ  
 Դամերս պարագ տեղ վասնելով .  
 Քանքարթագոյց ծառայ եղայ  
 Կրցած բարիքքս չընելով :

5 Ով Տէր, ըրէ ողորմութիւն,  
 Ինձ սորվեցուր համբել օրերս,  
 Որ ըստանամ իմաստութիւն,  
 Քեզ նըւիրեմ բոլոր ժամերս :

## 290 ԵՒՔԻՆԻ ԶԱՆԻՔԻՆԻ ԿՈՆԵՐ (8) :

1 Ով Տէր Աստուած Իօրայէլին,  
 Երկինքն, երկիրն ալ լրցունող,  
 Երկնից երկինք ամենեկին  
 Պարունակել քեզ շէն կարող :

2 Բայց երկնային պարզեմերով  
 Քու տաճարներդ կը զարգարես,  
 Ու մեր աղօթքը լրսելով  
 Մարդոց շէնքերն տաճարդ կ'ընես :

3 Արդ մենք այս տունը շինեցինք  
 Քեզի տաճար նըւիրելու,  
 Եւ հոս սրտանց կը փափաքինք  
 Ներկայութիւնդ ժայելելու :

4 Եւ կ'աղաչենք խոնարհ սրբաով  
 Մեր այս նըւէրն դուն ընդունէ .  
 Եւ հոս քու տանըդ մէջ փառքով  
 Առատ շնորհքդ տարածէ :

5 Ասոր մէջ թող դարէ 'ի դար  
Անթիւ մարդիկ խօսքերդ լրանն ,  
Եւ Սուրբ Հոգւովդ կենդանարար  
Սրտանց քեզի դառնան . Ամէն :

**291** Զ անորոշիւն հետք երբ . (10) :

1 Ի նշագէս գեղեցիկ անոր ոտքերն է ,  
Որ խաղաղութեան լուրն մեզ կը բերէ ,  
Խաչեալ փրկչին խօսքն ալ կը քարոզէ ,  
Կ'ըսէ Սիօնին , Աստուածըդ կ'իշխէ :

2 Երբ պահապաններդ գէմառ գէմ տեսնեն ,  
Պիտի ցնծութեամբ ամէնք երգեն .  
Եւ ճշմարտութեան մէկ ձայն մը ելլէ ,  
Աստուած իր Սիօնն երբոր կա բերէ :

3 Ո՛վ գուք աւերակք երուսաղեմին ,  
Եկէք , երգեցէք անհուն սէրն փրկչին :  
Քանզի Աստուած մեր կը մրխիթարէ  
Դարձող մեղաւորն , և զայն կը փրկէ :

4 Մեր Տէրը իր սուրբ բացուկն մերկացուց ,  
Ազգաց աշխարհիս իր շնորհքը ցուցուց .  
Երկրին ամէն ծայր պիտի շուտ տեսնէ  
Տէրոջ փրկութիւնն , և զայն վայելէ :



293 Ժ-ւ-ւ Գ-ւ-ւ-ւ-ւ ( 8 ) :

- 1 Յերկնից շնորհօք Հոգւոյդ Սրբոյ ,  
Տէր , ժողովեալ ծառայքդ օրհնէ .  
Արդարութեամբդ հաղուեցու  
Քահանաներդ , օժեալքդ ըրէ :
- 2 Արդ մենք որ կանք 'ի քոյդ տաճար  
Ուսուցանել ճշմարտութիւնդ ,  
Աջոյդ մէջ իբր զաստեղս պայծառ  
Ըլլանք հրեշտակք Եկեղեցւոյդ :
- 3 Իմաստութիւն , նախանձ , հաւատք ,  
Տուր հեղութիւն վերէն , կրբել  
Ի սիրտ մեր ժողովուրդդ՝ կենանք  
Սիրած հոգիքդ անկեղծ սիրել :
- 4 Ստէպ աղօթել , ըլլալ զգաստ դէտ ,  
Գիշեր ցերեկ լուրջ պահպանել ,  
Մեղաւորներն խրատել , սուրբերդ  
Քաջալերել , հօտդ արածել :
- 5 Երբոր մեր գործն հոս լլմբննայ ,  
Խոնարհ յուսով պաշտօնս յանձնենք ,  
Եւ Հովուապետն փառօք երբ գայ ,  
Ըլլանք , Հայր , բուկդ անոնք և մենք :

## 294 ԱՆՆՆՆՆՆԻՆՆ ԿՆՆՆՆ ՎՆՆՆՆՆ (8) :

- 1 Ով քաղցր փրկիչ , հոս դալ հանէ ,  
 Որ շնորհք ըրիր այն հարանիքին .  
 Ներկայութեամբդ , Տէր , մեզ օրհնէ ,  
 Եղիր հոս ալ մեզ հիւր անդին :
- 2 Տէր , կը խնդրենք , ձիրքդ օրհնութեան  
 Աս երկուքին վըրայ հանդչին ,  
 Եւ բարութիւնդ , որ անսխալման ,  
 Երջանկացնէ աստ և յերկին :
- 3 Տէր բարերար , աստա շնորհքով  
 Լեցուր անոնց բշտեմարան  
 Ասատութեամբ , ողջութենով .  
 Տուր սիրտ դովիչ քոյդ բարութեան :
- 4 Այս կեանքն է ալետանջ մէկ ծով ,  
 Փոթորկալից , վրտանդաւոր .  
 Թող միշտ ապրին մէկ սուրբ վարքով ,  
 Մինչև հասնին յերկինս անդորր :
- 5 Երբ մահը դայ զատէ զանոնք ,  
 Զայս կայն քակէ իւր ցուրտ ձեռօք .  
 Թող պատկերիդ փոխուին ասոնք ,  
 Դարձեալ միացին քոյին շնորհօք :





(8, 8) • Գրքի զանազան հատվածներում ընթաց

## Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն Գ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք Ի

**296** Խնդիր Ինքնուրույն • (7) •

- 1 Տէր, կու գանք հիմա առջից,  
 Խոնարհինք մինչ տակ օտքից •  
 Ո՛հ, Տէր, մերժըած չըլլանք •  
 Զո՛ւր արդեօք քեզի կու գանք ։
- 2 Ապատան քեզ մեր հոգիք,  
 Երբ նեղեալք, քեզ յանձնըինք •  
 Լից մեր սիրան շնորհօքդ առատ,  
 Որ արժան քեզ փառք տանք արդ ։
- 3 Քու ճամբուդ մէջ հաստատուած  
 Կը փնտռենք քեզ՝ հօս կեցած •  
 Զենք դիտեր, ի՞նչպէս երթանք,  
 Մինչ քեզմէ շնորհք չըստանանք ։
- 4 Տուր խօսքէդ պատգամ հաստատ,  
 Մեզ կ'ընէ խաղաղ, զըւարթ •  
 Հաղորդէ այժմ՝ Սուրբ Հոգիդ  
 Փրկութիւն ճոխ ՚ի մեր սիրտ ։



## 298 ԵՐԷՆԻՆԻ (8).

- 1 Քեզ փառք տամ այս գիշեր, Աստուած,  
Օրուան բոլոր բարեացն համար,  
Պահէ զիս, Տէր, յամէն շարեաց,  
Ընդ հովանեաւ թեոցդ խնամ տար:
- 2 Վասնն Որդւոցդ ներէ ինձի  
Մեզքերս որ եմ այսօր դորժած.  
Որ հաշտ ըլլամ ընդ աշխարհի,  
Անձիս, Քու հետ, երբ եմ քնացած:
- 3 Սորվիմ ապրիլ, որչափ մահճէս՝  
Գերեզմանէս նոյնչափ վախնամ.  
Ինձ սորվեցու մեռնիլ, որ ես  
Յօրն ահաւոր փառօք ելլամ:
- 4 Թող իմ հոգիս քեզի յանձնեմ,  
Աչքերս գոցեմ, հանդարտ քնանամ.  
Ննջեմ որ զօրութեամբ ելնեմ  
Քեզ ժառայել, երբ կ'արթննամ:
- 5 Ո՛հ, անվախճան օրն ե՞րբ վանեմ  
Պիտի խաւար քունն յաւիտեան,  
Եւ ընդ հրեշտակս երկնից երդեմ  
Փառք քեզ, Արքայդ անմահական:

299 ՆՐ ԴՐԷ (8) 008

1 Աստուած հրգօր, քեզ փառք կու տանք,  
 Մեզ կը պահէս քանի որ կանք.  
 Տարեդ լուխս է ցոյց գըթութեանդ,  
 Ողորմութեամբդ առնու պըսակ:

2 Գիշեր ցերեկ մենք ընտանեօք  
 Երանք ընդ մեր Տէրոջ խնամովք.  
 Իմաստութեամբ առաջնորդեց,  
 Ինք մեզ սընոյց առատ բարեօք:

3 Վասն անցելոյն շնորհակալ ենք,  
 Գալիքն ալ որ շենք գիտեր մենք,  
 Հանդարտ կ'ապրինք ստիցդ առջե,  
 Խնամքիդ բոլոր զայն կը յանձնենք:

5 Թէ անարդուինք, թէ պատուըինք,  
 Քեզմով ուրախ հանգիստ լինինք.  
 Քու բարութեանդ միշտ յուսալով՝  
 Քեզ միշտ օրհնենք, մինչդեռ կ'ապրինք:

## 300 ԾԷՐԻՆԻՆԻ ԱՊՈՒՅՆ ԷՄԵՆԻ (8)

- 1 Հայր բարեխնամ ազգի մարդկան ,  
Մինչև վերջն իմ յոյսս է քեզի .  
Եւ երբ հասնի օր նեղութեան ,  
Յոյս չեմ գըներ ոչինչ բանի :
- 2 Ինձ առաջնորդ քեզ ունեցայ ,  
Դու իմն եղար սերս բարեկամ .  
Կեանքիս մէջ քեզ միայն ճանչցայ ,  
Թող կեանքս քեզմով գանէ վախճան :
- 3 Երբ ծերութիւն , օրեր թշուառ  
Կու գան վրբաս , գիտ մի թողուր .  
Դուրս մի ձրդեր յուսահատեալ ,  
Վերջին օրերս ողբալ արխուր :
- 4 Մինչդեռ կ'ապրիմ դու ես ինձ վէմ ,  
Երկրպագեմ քեզ 'ի մահուն .  
Մահէն ետքն ալ քեզ պիտ' օրհնեմ  
Անվերջ դարեր հետ սուրբերուն :

**301** Օրհնութիւն զսուրբ շնորհաւոր սուրբիցս  
Ք. (8):

- 1 Բարի Աստուած ի սրայելին ,  
 Խոստմունքըդ են բազում , օրհնեալ .  
 Գերազոյնն է տալ Սուրբ Հոգին  
 Որդւոցս որք են բնութեամբ անկեալ :
- 2 Արդ մենք քեզմէ որ ընդունած  
 ենք այս պարգև , սիրուն զաւակ ,  
 Կ'օրհնենք զանուն քո գերամբարձ ,  
 Որ շնորհեցիր անոր ողջ կեանք :
- 3 Այսօր մեր ուխտուն կը կրկնենք ,  
 երբ կը սկըսի ինք նոր տարի .  
 Սիրով քեզի զայն կ'ընծայենք ,  
 Որ քու փառացի համար ապրի :
 Քեզ՝ մի Աստուծոյդ անդադար մատուցուի  
 Երկրպագութիւն , փառք յերկրէս և յերկ-  
 նից ,  
 Ինչպէս 'ի հնուց , այժմ , յաւիտեանքս ար-  
 բուի :

## ՅԱԻԵԼՈՒԱԾ



375 (433) Ս--ԻԲ ԿԼԵԿՄԻ

1 Մութ գետէն անդին կան  
Շատ տըղայք փոքրիկ,  
Որ մեղքէ ազատ են  
Հոն միշտ երջանիկ:  
Ամառուան ծաղիկներէն  
Գեր ի վերոյ գեղով՝  
Կը ցնծան ու միշտ կ'երգեն,  
Նոր ըսկըսուած փառքով:

2 Հոս անոնց աչքերը  
Դառն կը թափէին  
Արտասուք. իսկ վերը՝  
Հիմա կը զմայլին:  
Հիմա քաջավարժ մատերն  
Քնարները կը զարնեն,  
Եւ իրենց անոյշ երգերն  
Փրկիչը կը գովեն:

3 Ձի անոնց ամէնք  
 Ինքք հոն ժողվեց .  
 Մորորած ատենք  
 Ինք զանոնք փնտռեց :  
 Այ ոսկի և ոչ գոհարք  
 Կրնար զանոնք փրկել .  
 Իբ անդ ին արիւն փրկանք  
 Տըւաւ Էմմանուէլ :

4 Այն տըղոց բաժինը  
 Ինձ ալ տրուեցաւ .  
 Կը գովեմ՝ փրկիչքս ,  
 Ար իմ տեղս մեռաւ .  
 Ես անոր արեամբ փրկուած  
 Պիտի հոս խաչս տանիմ ,  
 Ետքն ելլեմ ու հրեշտակաց  
 Դասուն հետ խառնըիմ :

### 376 (140) Կ-ը-տ-ի-ու-ու-ն-ը-ն :

1 Ինընասուն և ինը կար ապահով ,  
 Պաշտպանուած , հանգիստ պառկած ,  
 Բայց մէկ ոչխար մը մուրեկով  
 Լերանց վրայ էր հեռացած .  
 Լերանց վրայ ահեղ ու վայրենի ,  
 Հովուին բարեգուժ ինամբէն հեռի ,  
 Հովուին բարեգուժ ինամբէն հեռի :

2 «Տէր, ահա քոյգ են ինքնատն և ինն .

Սորա շնն քեզ բաւական :”

Պատասխանեց քաջ Հովին թէ «Մին

թըշուառ է մոլորական ,

Եւ ինչ նեղութիւն որ պէտք է կրել ,

Կ’երթամ անապատն ոչխարս գտնել ,

Կ’երթամ անապատն ոչխարս գտնել :”

3 Բայց ոչ մէկը կրցաւ գիտնալ թէ Տէրն

Ինչ խորունկ ջրէ անցաւ ,

Ինչ մութ էր իւր անցուցած գիշեր ,

Մինչև որ կորսուածն գրտաւ .

Լըսեց անապատն անոր խեղճ ձայն

Մահուան մօտ թըշուառ անօգնական ,

Մահուան մօտ թըշուառ անօգնական :

4 «Տէր, ինչո՞ւ այդ արեան կարմիր շիթեր

Լեռն ի վեր են կաթկըթած :”

«Գաւթէն ոչխար մը գուրս էր ինկեր ,

Անոր համար են թափուած :”

«Ուստի՞ են, Տէր, այս ձեռացդ վէրքերն :”

«Շատ փուշք զիս այսպէս ըրին գիշերն :”

«Շատ փուշք զիս այսպէս ըրին գիշերն :”

5 Եւ ահա մուրաժքն կը գանէ,  
 Մեծապէս կ'ուրախանայ .  
 «Ուրախ եղէք ինձի հետ,» կ'ըսէ,  
 «Քանզի կորսուածն գըտայ :»  
 Դասն հրեշտակաց արձագանգ տըլաւ,  
 «Ուրախ եղէք, Տէրն իրենն գըտաւ,»  
 «Ուրախ եղէք, Տէրն իրենն գըտաւ :»

### 377 (117) Մեռնին երգ :

1 Վերջին արևս վար կ'արտօրայ,  
 Մօտ է ինձ իրիկունն .  
 Իմ ասպարէզս կը վերջանայ,  
 Հեռու չէ Հօրքս տունն :  
 Խումբեր հրեշտակաց  
 Թող բոլորաիքս կայնին .  
 Փայլուն թևերովը թող զիս տանին  
 Անմահութեանքս տունն :

2 Շուտով սրբոց հրնուանքն ու երգն  
 Ես ինքս պիտի լքեմ .  
 Արդէն Յորդանանու եզերքն  
 Ոտքովքս կը կոխեմ .  
 Խումբեր հրեշտակաց, Ե՛րգ :

3 Ո՛հ, մօտեցայ իմ Հօրքս տանն  
 Եւ ցնծութեամբ կ'երգեմ.  
 Պայծառ խումբեր ահա կու գան,  
 Թեոյ ձայնն կը լըսեմ:  
 Խումբեր հրեշտակաց, Լ = յն :

4 Շխտակ անոր տանիմ իմ սիրտս՝  
 Որ ինձ կու տայ պըսակ.  
 Ինք իր արեամբ սրբեց մեղքերս,  
 Կու տայ ինձ յաղթանակ:  
 Խումբեր հրեշտակաց, Լ = յն :

### 378 (113) ՍԵՐՄԵԼ Լ ԸՆԵԼ

1

Կը ցանեն իրենց սերմն արշալոյս ծագելէն,  
 Կը ցանեն կէս օրուան տաքութեանըն ատեն,  
 Կը ցանեն ալ մինչեւ սրխալի իրիկուն,  
 Կը ցանեն եւ ի մէջ գիշերուանը մութուն.  
 Հունձքն ի՞նչ պիտի ըլլայ:

2

Կը ցանեն թէ՛ խօսքով թէ՛ գործքով անդադար.  
 Որչափ քաղցըր խօսքերն ու գործքեր բարերար  
 Ատուծոյ օրհնութեամբը կը մըխիթարեն  
 Մեր սրտերն աշխարհիս փորձութեանց դառն ատեն.  
 Հունձքն անոյ՞ կ'ըլլայ:

## 3

Կը ցանեն ալ ոմանք Աստուծոյ պատգամներն,  
 Պատուէրներն, խոստումներն եւ ըսպանալիքներն,  
 Կը յայտեն Գրիստոսի բարի խօսքն փրկութեան,  
 Եւ արտերը ճերմակ կ'ըլլան ուր որ կ'երթան .

Հունձքը հարուստ կ'ըլլայ :

## 4

Եւ ոմանք ալ անգործ ձեռքերնին կը ծալեն,  
 Բայց եւ այնպէս իրենք ալ սերմեր կը ցանեն .  
 Ծուլութեան սերմերէն կը բուսնին դառն ցաւեր,  
 Անօգուտ ալ հոգեր եւ պարսպ զըզումներ .

Հունձքը տրտում կ'ըլլայ :

## 5

Թէ՛ մութի մէջ եւ թէ՛ լուսոյ մէջ մենք ցանենք,  
 Թէ՛ տկարութիւնով, թէ՛ ուժով սերմանենք,  
 Ասանձին, քաղմութեան հետ, սիրով, բարկութեամբ,  
 Թէ՛ իմաստութիւնով, եւ թէ՛ անմըտութեամբ .

Հունձքն ըստոյզ կ'ըլլայ :



## 379 (121) երբ եւ ի-նչ :

1 Երբ իր գանձը, երբ իր գանձը

Ժողովէ մեր փրկիչը,

Իր բոլոր սիրելիները,

Իրեն սեպհական,

Պատուական քարերու պէս,

Առտուան աստղերուն պէս

Փայլելով՝ անոր թագը

Պիտի շարդարեն :

2 Արդարները, արդարները

Իր արքայութեան մէջ

Ժողովելով իր աթոռին վրայ

Պիտի նրատեցնէ :

Պատուական քարերու պէս, Է-յն :

3 Մանուկները, մանուկները

Որ զինքը սիրած են,

Պիտ' ըլլան իր գոհարները,

Իրեն սեպհական :

Պատուական քարերու պէս, Է-յն :

# 380 (132) Գ-դ-է-ն Յ-ի-ն-ի -ի-ր-ոյն :

1 Կ'ուզեմ պատմել հին լուրը  
 Վերին կենաց անհուն,  
 Տէր Յիսուսի փառացը,  
 Եւ իր անբաւ սիրոյն :  
 Պատմեմ ես այն հին լուրը,  
 Ձի է հաւատալի,  
 Կը հաստատէ իղձերբս,  
 Ախորժ և բերկրալի :  
 Պատմեմ միշտ այն հին լուրը,  
 Թող գործս ըլլայ երկինքը  
 Կրկնել հին պատմութիւնը  
 Տէր Յիսուսի սիրոյն :

2 Պատմեմ ես այն հին լուրը,  
 Է շատ զարմանալի :  
 Մտքէ ծընած կեղծիքը  
 Այնպէս չեն հրաշալի :  
 Պատմեմ միշտ այն հին լուրը,  
 Ինձ է շատ սիրելի :  
 Այս է նաև պատճառը  
 Որ կը պատմեմ քեզի :  
 Պատմեմ միշտ, և այն :

3 Պատմեմ ես այն հին լուրը,  
 Յիշե՛լն է քաղցրութիւն.  
 Շատ հեղ կրկնել կ'ըլլայ ինձ  
 Այ մեծ ուրախութիւն :  
 Պատմեմ ես այն հին լուրը  
 Անոնց որ շնն լրսած  
 Մեծ փրկութեան պատգամը,  
 Սուրբ Գիրքն ալ շնն տեսած :  
 Պատմեմ միշտ, և այն :

4 Պատմեմ ես այն հին լուրը,  
 Ջի այն որ լաւ գիտէ,  
 Ուրիշ լրսողներուն պէս,  
 Նորէն լրսել կ'ուզէ :  
 Եւ երբ երկնից փառաց մէջ  
 Երգեմ նոր երգն սրբոց,  
 Ըլլայ այն հին, հին լուրը  
 Զոր եմ սիրած վաղուց :  
 Պատմեմ միշտ, և այն :

**381** (200) Կէս համոզում :

1 Կէս համոզուած ես հաւատալու,  
 Կէս համոզուած ֆրիստոս սիրելու :

Միտքըդ ըսել կու գայ ,  
 «Հոգի , առ այժմ գընա ,  
 Երբ ժամանակ գտնեմ ,  
 Բեզ կը կանչեմ :”

2 Կէս համոզուած դու , մի ուշանար ,  
 Մեծ հրախրմանն անհոգ մի ըլլար .  
 Կանչողն փրկիչդ է ,  
 Սիրով քեզի կ'ըսէ ,  
 «Հանգիստ կու տամ քեզի ,  
 Եկուր ինձի :”

3 Կէս համոզուած դու , հունձքը կ'անցնի ,  
 Շուտ քու վրճիռդ պիտի կընքուի ,  
 Զըլլայ որ ետ մընաս ,  
 Եւ ետքը դառն ողբաս ,  
 «Ո՛հ , ո՛հ , կէս համոզուած ,  
 Բայց կորսըւած :”

382 (115) Տը-- ուշիւտ :

4 Ո՛վ փրկիչ մեր , կ'աղաչենք ,  
 Խեղճ մեղանչական որ ենք ,  
 Միշտ յիշէ մեզ ,  
 Միշտ սիրէ մեզ ,  
 Բաղցըր խընամբդ կ'ուղենք :

Մեր թագաւորն քեզ կ'անուանենք,  
 Սըրտերնիս կը նըւիրենք,  
 Միշտ պահէ մեզ,  
 Եւ օրհնէ մեզ,  
 Մինչ երկնից մէջ սէրդ գովենք :

2 Դուն գրթած ես, եթէ մենք  
 Սուրբ նամբէդ խեղճ մոլորինք,  
 Դուն դարձուր մեզ,  
 Եւ ուղղէ մեզ,  
 Որ ետեւէդ քալենք :  
 Մեր թագաւորն, Է - յը :

3 Տէր, շնորհէ որ, կեանքն անցած,  
 Քեզ տեսնենք աթոռդ նստած,  
 Հոն օրհնենք քեզ,  
 Եւ պատուենք քեզ,  
 Որ ենք քեզմով փրկուած :  
 Մեր թագաւորն, Է - յը :

**383** (130) Օր մ'ալ ինձ Տէր-՛ղը ք-րձի՛ն Կը :

1 Տէրո՛յրս սուրբ գործին մէջ  
 Օր մ'ալ ինձ տըրուեցաւ,  
 Երկրիս լըրումը,  
 Երկնից ծագումը  
 Օր մ'ալ ինձ մօտեցաւ,  
 Սիրովն փրկչիս  
 Կ'ուրախանայ հոգիս :

Տէրոջըս սուրբ գործին մէջ  
 Օր մ'ալ շնորհած է ինքը,  
 Օր մ'ալ մօտ է երկինքը,  
 Երկրէս օր մ'ալ պակասած ։

2 Օր մ'ալ գործել կրցած եմ  
 Տէր Յիսուսին համար,  
 Ինքն է իմ Տէրըս,  
 Իմ յոյս ու սէրըս,  
 Թող հաւատարմաբար  
 Իմ Տէրս պատուեմ,  
 Անոր միշտ ծառայեմ ։  
 Տէրոջըս սուրբ գործին մէջ, Լ - յը ։

3 Օր մ'ալ շնորհուեցաւ ինձ ։  
 Ինչ բերկրութիւն եղաւ  
 Պատմել թէ Տէրը  
 Յաւանեց իր սէրը ։  
 Մեզի համար մեռաւ ։  
 Այս պատմելով՝  
 Իմ սիրտս լեցաւ սիրով ։  
 Տէրոջըս սուրբ գործին մէջ, Լ - յը ։

4 Օր մ'ալ շանքով անցած է ։  
 Աշխատանքով լեցուն ։  
 Բայց յայտնըւած է  
 Եւ մօտեցած է

Երկնից մէջ փառք անհուն .

Իմ Յիսուսիս

Յանձնեմ յոգնած հոգիս :

Տէրօջրս սուրբ գործին մէջ, Լ - ոյն :

Յ Հանգիստ Տէր Յիսուսի հետ՝

Զանքէն ետե կու գայ .

Քաղցր է այս ջանքը,

Այս աշխատանքը .

Եթէ քու կամքդ ըլլայ,

Ո՛վ Տէր, կ'ուզեմ՝

Որ օր մըն ալ գործեմ :

Տէրօջրս սուրբ գործին մէջ, Լ - ոյն :

### 384 (107) Բ-ց Դ-Ն-Ը :

1 Բաց դուռ մը կայ որուն մէջէն

Խաչին փայլունութիւնը

Տեսնել կու տայ ամէն ատեն

Փրկչին մեծ գլխութիւնը :

Ո՛հ, գութ անպատմելի, իրաւ

Այն դուռն ինձի՞ համար բացաւ,

Ինձի՞, ինձի՞, ինձի՞ համար բացաւ :

2 Այն դուռն է ամենուն արձակ,  
 Որ փրկութեան ծարւած են.  
 Մեծ և պղտիկ, հարուստ, տրնանկ,  
 Մըտնել հըրաւիրուած են:  
 Ո՛հ, դու՛թ անպատմելի, իրաւ  
 Այն դուռն ինձի՞ համար բացաւ,  
 ինձի՞, ինձի՞, ինձի՞ համար բացաւ:

3 Շուտով այն բաց դռնէն մտնել  
 Ըլլայ մեր նըպատակը.  
 Մեր խաչն առնել, յարատուել,  
 Եւ ըստանալ պըսակը:  
 Ո՛հ, դու՛թ անպատմելի, Լ-յն:

4 Յետոյ փրկչին հետ վեր ելլենք,  
 Ուր որ գացած է ինքը.  
 Եւ յաւիտեան տեսնենք, սիրենք,  
 Գովենք զանի երկինքը:  
 Ո՛հ, դու՛թ անպատմելի, Լ-յն:

### 385 (113) Այ-ր:

1 Յիսուս կ'ըսէ այսօր,  
 «Ինձի եկուր,»  
 Ինչո՞ւ, ով մեղաւոր,  
 Չես մօտենար:



2 Կ'ըսէ, «Այսօր փնտռէ  
 Դուն ապաւէն,  
 Չի մահն ու դատաստան  
 Օրն ալ մօտ են:»

3 Այսօր քեզ կը կանչէ,  
 Ով մեղաւոր,  
 Սիրով կը հրաւիրէ,  
 Լըսէ անոր:

4 Հոգին ևս կը կանչէ,  
 Անոր լըսէ.  
 Չինք մի տրամեցրներ,  
 Շնորհաց օրն է:

### 386 (141) Քիւրտի Իւլ:

1 Փրկչիս խաչին ներքեւը  
 Կ'ուզեմ առնել կայան,  
 Խիստ ծարաւուտ երկրի մը մէջ՝  
 Ժայռի շուքի նըման.  
 Ինչ զօրաւոր ծածկոյթ է ան  
 Կէս օր՝ տաքութենէն,  
 Ճամբուն վրայ ալ հանգըստարան  
 Օրուան ծանրութենէն:

2 Ի՞նչ քաղցր ու ապահով է  
 փորձուած բընակարան ,  
 Ուր Աստուծոյ արդարութիւնն  
 Ու սէրն կը միանան .  
 Ինչպէս Յակոբ նահապետին  
 Երազն զարմանալի ,  
 Այնպէս խաչն ալ՝ մինչև երկինք  
 Սանդուխ ինձ կը թուի :

3 Երբեմն փրկչիս խաչին վրայ  
 Աչքս հաւատքով տեսաւ  
 Չայն որ զիս փրկելու համար՝  
 Իր անձը զոհ տուաւ .  
 Եւ տեսնելով կը սքանչանայ  
 Իմ սիրտս առ բաներուն ,  
 Իմին մեծ անպիտանութեանս ,  
 Անոր անհուն սիրոյն :

4 Կ'ընտրեմ, ով խաչ, քու շուքըդ  
 Անվտանգ ինձ ապաւէն .  
 Բընաւ ուրիշ լոյս չեմ ուզեր  
 Փրկչիս դէմքին լոյսէն .  
 Ալ յոյսըս չէ երկրիս վատտակն ,  
 Ալ չեմ փնտռեր աշխարհս .  
 Իմ մեղքս միայն ամօթքս է ,  
 Խաչն ալ միայն իմ փառքս :

## 387 (108) Քեզի կարօտ եմ:

1 Քեզի կարօտ եմ, Տէր,  
Ո՛հ, ամէն ժամ:

Անոյշ է ձայնդ ինձի,  
Քեզի կու գամ:

Կարօտ եմ, ո՛հ, կարօտ եմ,

Միշտ քեզի կարօտ եմ,  
Օրհնէ դիս, ով Փրկիչ իմ,  
Քեզի կու գամ:

2 Քեզի կարօտ եմ, Տէր,  
Եղիբ ներկայ:

Երբ մօտ ըլլաս, փորձանքն  
Կը թեթեւնայ:  
Կարօտ եմ, Լ-յն:

3 Քեզի կարօտ եմ, Տէր,  
Շուտով եկուր,

Թէ ոչ իմ կեանքս բոլոր  
Կ'անցնի ի զուր:  
Կարօտ եմ, Լ-յն:

4 Գեղի կարօտ եմ, Տէր,  
 Բու կամօղ յայտնէ,  
 Եւ քու մեծ խոստումներդ  
 Ինձ կատարէ :  
 Կարօտ եմ, Լ - յը :

5 Գեղի կարօտ եմ, Տէր,  
 Ամենասուրբ .  
 Զիս մի թողուր, Յիսուս,  
 Անճար ու որբ :  
 Կարօտ եմ, Լ - յը :

### 388 (191) Փ---բ---ն---ն---ն .

1 Կ'օրհնենք քեզ, Աստուած, զի Փրկիչը եկաւ,  
 Խաչին վրայ մեռաւ եւ վերն փառքով համբարձաւ :  
 Ալէլուիա, մեր Փրկիչը,  
 Ալէլուիա, ամէն .  
 Ալէլուիա, քուկդ է փառքը,  
 Սրբէ մեզ նորէն :

2 Կ'օրհնենք քեզ, Աստուած, զի Հոգիդ ալ իջաւ,  
 Մեզ Փրկիչը յայտնեց եւ խաւարը անցաւ :  
 Ալէլուիա, Լ - յը :

3 Միշտ փառք եւ գովեստ զոհուած Գառնուկին,  
Որ մեր մեղքը ջնջեց ու ներեց դարձողին :

Ալէլուիա, Լ - յն :

4 Միշտ փառք եւ գովեստ շքնորհաց Աստուծոյն,  
Որ սիրեց մեզ, փնտռեց ու տուաւ իր Որդին :

Ալէլուիա, Լ - յն :

5 Ոհ, մեզ արթընցուր եւ Հոգւովդ նորոգէ,  
Ամէն սիրա երկնաւոր եռանդովըդ վառէ :

Ալէլուիա, Լ - յն :

6 Ոհ, մեզ արթընցուր, ըզմեռեալս ողջնցուր,  
Յիսուսի ձայնն լրսնն, որ կ'ըսէ, "Ի՞նչ եկուր"

Ալէլուիա, Լ - յն :

### 389 (129) Ի՛ + -է - կեցի :

1 Ի՛մ քովս կեցիր, գիշերն կը մօտենայ,  
Տէր, քովս կեցիր, խաւարն կը թանձրանայ .  
Երբ այլ մը թիթարիչ չի գտնուիր,

Ո՛վ թշուառաց Օգնողն, ի՛մ քովս կեցիր :

2 Շուտով կենացս օրերն կը վախճանին,  
Անցայտ կ'ըլլայ ամէն ցնձում երկրին .

Հոս հաստատուն, անշարժ բան չերևիր,

Ո՛վ դուն որ անփոփոխ ես, քովս կեցիր :

- 3 Ներկայութեանդ կարօտ եմ անդադար,  
Առանց շնորհքիդ փորձչին յաղթող չըլլար.  
Գեղի պէս ո՞վ կայ առաջնորդ ընտիր.  
Ուր որ ըլլամ, ով Տէր, իմ քովս կեցիր:
- 4 Երբ զիս կ'օրհնես, երկիւղ շունիմ՝ բընաւ,  
Անոյշ կ'ըլլան ինձ արտասուք և ցաւ.  
Դըժոխք և գերեզման այլ ոյժ շունին,  
Երբ քովս կենաս անոնք կը յաղթըին:
- 5 Մինչև վերջին օրերըս մօտենան,  
Մինչև երկնից դռներըն երևնան,  
Խաւար ճամբուս մէջ առաջնորդ եղիր.  
Կենաց, մահուան մէջ ալ, Տէր, քովս կեցիր:

### 390 (119) Կէր-կէ -----:

- 1 Ո՛հ, պայծառ ու գեղեցիկ օր Տէրունի,  
Կողմունենք քու լոյսդ ըզմայլելի,  
Որ այս գիշերուան խաւարը ցըրուելով,  
Եկաւ փայլուն ժպիտներով:  
Ո՛հ, օր խաղաղ, սուրբ, օր երկնային,  
Օր սեպհական, աստուածային,  
Ասաւօտ զըւարթարար ու Տէրունի,  
Քեզ ողջճին, լոյսդ բերկրալի:

- 2 Վեց օրերն աշխատութեան անցան գացին,  
 Մարմնաւոր գործերն վերջացուցին .  
 Արդ ուրախանանք, հասաւ օրն հանգըստեան,  
 Օրն զըւարթ, Տէրունական :  
 Ո՛հ, օր խաղաղ, սուրբ, և ոչն :

- 3 Ուստի վայելենք այս պատուական ժամերն,  
 Ինչպէս պատուիրեց Աստուած մեր Տէրն,  
 Որ առաջնորդուինք երկնից սուրբ հանգըստեան  
 Վայելենք փառք յաւիտեան :  
 Ո՛հ, օր խաղաղ, սուրբ, և ոչն :

## 391 (136) ՀԵԼԵՒԻՅ ՎԵՆԵ :

- 4 Իմ տունս է յերկին, հոս չըկայ ինձ հանգիստ,  
 Արդ հի՛մ աըրաընջեմ, երբ յայտնին փորձեր խիստ .  
 Լըռէ՛, նըսեմ սիրտ, յոսեղոյնն զոր խիթաս՝  
 Զուզիդ լուկ կարճէ, ի քո տուն մերձենաս :  
 Անդէ՛ն զըւարթունք գան իւրեանց գաշնակով,  
 Բարեա՛ւ գաս, կ'երգեն քաղցրալուր ձայներով .  
 Կանգնեալ ի բիւրեղ գուռ՝ ոգիք լուսավառ  
 Նըւագեն ինձ ողջոյն յիւրեանց վեհ բնագաւառ :

2 Ինձի համար չէ իմ բարիքս որոնել  
 Յայսպէս մի աշխարհ, 'ւոչ յոյսերս աստ կերտել .  
 Քաղաք՝ զայն գիտեմ զոր ձեռք ոչ է հիմներ,  
 Երկրի՝ փափաքիմ զոր մեղք ոչ է պըղծեր .  
 Անդէն, Լ - ոյն :

3 Փուշեր, տատասկներ թող անին շուրջ զինեւ,  
 Հակիլ չեմ կամիր ես վարդից աստ վերեւ .  
 Ես ոչ զիմ բաժին, 'ւոչ հանգիստ կը խնդրեմ,  
 Մինչեւ որ յաւէտ Փրկչին գիրկ զայն գտնեմ .  
 Անդէն, Լ - ոյն :

## 392 (109) Թ-դէ +- - յ--երդ :

1 Թաղէ քու ցաւերըդ,  
 Ով թերահաւատ,  
 Սրբէ արցունքներըդ,  
 Մ'ըլլար յուսահատ .  
 Բոլոր տրամուծիւնըդ  
 Պատմէ Յիսուսի .  
 Շուտով նեղութիւնըդ  
 Պիտի փարատի :



2 Խաւար է գիշերը,  
 Լոյս պիտի ծագի.  
 Քեզի համար Տէրը  
 Միշտ հոգ կը տանի.  
 Խընդրէ իւր արևը.  
 Անշուշտ քեզ կու տայ.  
 Դիմէ անոր քովը,  
 Քու բեռդ կ'ամբառնայ :

3 Քեզի ինք նըպաստ է  
 Մեծ իմաստութեամբ.  
 Օգնել միշտ պատրաստ է  
 Անհուն գրթութեամբ.  
 Գընա և տրամածք  
 Դուն մըխիթարէ.  
 Բոլոր մընացածք  
 Տէրոջը պատմէ :

### 393 (131) երկու է-Տ-ն:

1 Մենք երկնից ճամբան գրտած ենք,  
 Տէր Յիսուս անոր լոյսն է.  
 Յորեկուան ու գիշերուան մէջ  
 Մեզ պիտի առաջնորդէ.  
 Երբ անցնինք ահեղ հոսանքք  
 Դէպ ի հանգըստեան երկիրը,  
 Չենք կորսընցըներ շաւիղը,  
 Ձի փրկիչն մեզի է լոյս :

- 2 Այն որ կատաղի ալիքը  
Շուտ կըցաւ խաղաղցընել,  
Կը ցըրուէ մեր արհաւիրքը.  
Այն կընայ հողին փրկել:  
Երբ անցնինք, Լ-յն:
- 3 Ով հովիւ, առաջնորդէ մեզ,  
Մեր ուղիներն չըմուրթին.  
Վըտանգէ դու պահպանէ մեզ,  
Որ պահենք միշտ մեր ուղին:  
Երբ անցնինք, Լ-յն:

### 394 (114) Յ-վ-ւն -ր-ւ-ն:

- 1 Հայր, ճամբադ ինձ սորվեցուր,  
Փորձութեան այս ժամանակն  
Այնպէս անցընել ցուցուր  
Որ առնեմ կենաց պրօական:  
Յաղթողին արմաւենին  
Յայնժամ տուր որ ձեռքս առնեմ,  
Եւ սրբոց ու հրեշտակաց հետ  
Ես նոր երգն երգեմ:
- 2 Սիրտս սիրով թող լեցընէ  
Երկնային քաղցր Աղանին.  
Չար կիրքերս դադրեցընէ,  
Որ յաղթեմ ամէն մեղքին:  
Յաղթողին արմաւենին, Լ-յն:

3 Ձիս խաղաղութեամբ լեցուր,  
 Փոթորիկը հանդարտի.  
 Գանդառներըս դադրեցուր,  
 Թող հոգիս սիրովդ հանգչի :  
 Յաղթողին արմաւենին, Լ-յն :

4 Հրամանովդ սուրբ հրեշտակներն  
 Բոլորաիքս բանակ դընեն,  
 Եւ վերէն սիրոյդ աչքերն  
 Մինչև վերջը վրաս հըսկեն :  
 Յաղթողին արմաւենին, Լ-յն :

### 395 (125) Մ: Դ Ի-վն ԳԵԼ Կ-յ :

1 Քեզ համար, ով սրգաւոր,  
 Մօտ խաչին տեղ կայ.  
 Քու սրտիդ վիշտերն բոլոր,  
 (ինք հրաւէր կու տայ.)  
 Հիմա քու փրկչիդ պատմէ,  
 Չամենայն ազատ խօսէ,  
 Ինք անշուշտ քեզ կը լրտէ.  
 Մօտ խաչին տեղ կայ :

2 Մոլորողդ, օհ, արտորցիր,  
 Մօտ խաչին տեղ կայ.  
 Փրկութեան նամբան գըտիր,

Երջանիկ նամբայ .

Ով յողնած , բեռնաւորած ,  
Փորձութիւններով տանջուած ,  
Հանգրստեան ես հրաւիրուած .

Մօտ խաչին տեղ կայ :

3 Ալ անհոգ ես , մեղաւոր ,

Մօտ խաչին տեղ կայ .

Յիսուսի դիմէ այսօր ,

Ինք միայն կրնայ

Քու բոլոր մեղքերդ ներել ,

Տարակոյսըդ վերջընել ,

Եւ հոգիդ մըխիթարել .

Մօտ խաչին տեղ կայ :

4 Տես , աղբիւր մը կենդանի ,

Մօտ խաչին տեղ կայ .

Բաց ինձի , բաց ալ քեզի .

Զրիապէս թող գայ

Թէ՛ հարուստ և թէ՛ աղքատ ,

Թէ՛ ծառայ և թէ՛ ազատ .

Ամենուն համար առատ՝

Մօտ խաչին տեղ կայ :

5 Հարսը և Հոգին կ'ըսեն ,  
 Մօտ խաչին տեղ կայ .  
 Լըսողներն ալ թող պատմեն .  
 Թող աշխարհն գիտնայ  
 Թէ սիրոյն գանձն է լեցուն ,  
 Եւ ողորմութիւն անհուն  
 Մատուցուած է ամենուն .  
 Մօտ խաչին տեղ կայ :

396 (138) երէ որն-ք-ն-ն-բե-ն :

- 1 Յաւատենական Լակ ,  
 Եհովայ , Աստուած միակ ,  
 Գոյ ըրիւր աշխարհ համայն ,  
 Կառավար ամենիշխան .  
 Դըրութիւնն տիեզերաց  
 Լոկ քեզմով է ըստեղծուած .  
 Բընութեան կարգադրութիւն  
 Լոկ քեզմով է հաստատուն :
- 2 Մեծութեանդ չի կայ սահման ,  
 Գիտութիւնդ է անպայման ,  
 Անպայման և զօրութիւնդ ,  
 Եւ միտքէ վեր բարութիւնդ .  
 Դու պատճառ ես ամենուն ,  
 Եւ ազբիւր բարիքներուն .  
 Դու ողորմութիւն , սէր ես ,  
 Ամենուն կը հաղորդես :

3 Ով երբեակ և մի Աստուած,  
 Ինքնակալ Տէր զօրութեանց,  
 Խընամնող, նայող, սիրող,  
 Ինձ եղիբ առաջնորդող.  
 Մութ ատեն՝ կենացըս լըս,  
 Եւ սրտիս՝ ցաւոց մէջ յոյս,  
 Ի մահուան՝ տըւիչ կենաց,  
 Ինձ եղիբ ուխտիս Աստուած :

### 397 (183) ՔԵՆՏՆՆ ԻՆ Է :

1 Տէրը դուռըս կը զարնէր,  
 Յայտներով իր սէրն անհուն,  
 Ինձ իր մահը կը յիշէր,  
 Եւ իր քաւչական արիւնն.  
 «Ես քու մեղքդ ներել կ'ուզեմ»,  
 Ով մեռնող հոգի, մտնե՞մ :

2 Երբ այս շնորհալի խօսքերն  
 Իմ թշուառ հոգիս լսեց,  
 Իր սիրոյն ուժովը Տէրն  
 Կարծրը սիրաբար շուտ կտարեց .  
 Յայնժամ դուռը լայն բացի,  
 «Տէր Յիսուս, մտիբ», ըսի :

- 3 Խօսքն հազիւ բերնէս ելած՝  
 Ներս մտաւ, ես ալ իսկոյն  
 Ոտքերուն առջևն ինկած՝  
 Մաղթեցի ողորմութիւն.  
 Իմ անձէս, գետի նըման,  
 Սէր և սիրտ մէկտեղ անցան :
- 4 Բայց մինչ ես անոր ոտքերն  
 Արցունքովս կը լըւայի,  
 «Ես ձրբի բոլոր մեղքերդ  
 Կը ներեմ», ըսաւ ինձի.  
 «Հաստատուն դուն գանձէ  
 Մինչ ցըմահ, և պըսակուէ :»
- 5 Այս խօսքով իսկոյն իմ սիրտս  
 Սուրբ ուրախութեամբ լեցաւ,  
 Եւ մըրըրկածուի հոգիս  
 Փառաւոր հանգիստ մըտաւ :  
 Ապշութիւն էր սուրբ սիրոյն,  
 Երկնաւոր երանութիւն :
- 6 Երազի պէս սուտ հանոյք  
 Ալ անհետ եղան աչքէս.  
 Մերթեցի բոլոր աշխարհք  
 Որ ալ չըզատուիմ փրկչէս.  
 Ես անորն եմ, սէր նորա  
 Արդ իմն է. Ալէլուիա :

## 398 (201) ՏԵՐ-ՆԷ ԴԴԷ՛

- 1 Ի՞նչպէս բարեկամ է Տէրը,  
 Միշտ մեզի կը համբերէ,  
 կը ներէ մեր յանցանքները,  
 Մեր վիշտերն ալ կը կրէ,  
 Քրիստոնեայ, արտօնութիւնըդ  
 Այս է, միշտ բերկրապատար,  
 Քու ամէն փորձառութիւնըդ  
 Աղօթքով Տէրոջը տար :
- 2 Շատ անգամ խաղաղութիւնը,  
 Ո՛հ, ի զուր կը կորսընցնենք,  
 Աղօթքի արտօնութիւնը  
 Երբ մոռնանք կամ զանց ընենք :  
 Մէկը կա՞, որ Յիսուսի շափ  
 Յաւակից քեզի ըլլար .  
 Վըստահէ Անոր, հոգերըդ  
 Աղօթքով Տէրոջը տար :
- 3 Դուն յոգնած բեռնաւորուած ես .  
 Սիրելիքըդ հեռացածն .  
 Քու Փրկիչըդ քեզ կանչած է,  
 Ինք կ'ըլլայ քեզ ապաստան :  
 Յիսուսի բաց բազուկները  
 Ազաւէն են փրկարար .  
 Շուտ գիմէ հոն, և ամէն բան  
 Աղօթքով Տէրոջը տար :



## 399 (149) Հ-ՅԵ յիէ իւրոյ երեւ:

- 1 Հացդ ձրգէ ջրոց երեսը,  
 Մի կարծեր թէ ընկրղմի,  
 Թէ և ուշանայ արդիւնքը,  
 Անպատճառ գրանես պիտի.  
 Տուր բաժին եօթնին՝ ութին ալ,  
 կարօտից առատ բաշխէ,  
 Չի Աստուած խոստում տրւած է  
 Որ քեզ աւելի օրհնէ:
- 2 Հացդ ձրգէ ջրոց երեսը,  
 Չի մէկ սերմ տարուած ալեօք  
 Բուսնելով հեռու երկրի մէջ,  
 կը բերէ պրտուղ ասոք.  
 Նոյն կերպով բարի ջանիցդ մէջ  
 Քեզ կ'օգնեն խառն ալիքներն,  
 Փրկարար ճշմարտութիւնը  
 Քարոզել երկրիս ծայրերն:
- 3 Հացդ ձրգէ ջրոց երեսը,  
 Ճոխ բարիքըդ տարածէ,  
 Թրչուառաց հասցուր դարմանը,  
 Լքեալներն մըխիթարէ.  
 Մի վախնար թէ քաղց հասնի քեզ,  
 Տէրն պիտոյքդ կը լեցընէ,  
 Միշտ կու տայ քեզ փոխարէնը,  
 Վարձքն ալ լի կը պարգևէ:

## 400 (146) Մ-հ-ս-ն թեղւ:

- 1 Կը սպասեմ գետին եղերքը,  
 Սիրտս անցնիլ շատ կը բաղձայ,  
 Եւ կը զգամ սրբոց քաղցր երգը  
 Որ հեռուէն ականջս կու գայ:  
 Կը տեսնեմ նոր արշալոյսը,  
 Երկնային լերանց ծայրերն,  
 Ուր շարերն տանջել կարող չեն,  
 Կը հանգչին ալ յոգնածներն:
- 2 Արտասուաց ձորին այն կողմը  
 Սուրբ գաշտից վրայ շողշողուն,  
 Կատարեալ երջանկութիւն կայ  
 Անվախճան գարերն փայլուն:  
 Ո՛հ, կ'ուզեմ ըլլալ երկնից մէջ,  
 Հրեշտակաց անշարժ տուներն,  
 Ուր շարերն տանջել կարող չեն,  
 Կը հանգչին ալ յոգնածներն:
- 3 Նաւ սպտրաստ է մութ գետին վրայ  
 Միւս եղերքն զիս տանելու  
 Որ անցնի նեղեալ հոգի իմ  
 Ուր չկայ բան նեղելու:  
 Ո՛հ, ցնծմամբ կ'երթամ հանգիստը  
 Ուր Յիսուս կայ և սուրբերն,  
 Հոն շարերն տանջել կարող չեն,  
 Կը հանգչին ալ յոգնածներն:

## 401 (154) Ա- շ-բ-հ-ո-ց -Բ-ու-ն :

- 1 Եկ արամայից դու, երբ ցաւ քեզ պատած է,  
 Եկ շքնորհաց աթոռին ջերմ, խոնարհ.  
 Հոս բեր քու սիրտըդ, միշտով երբ խոցուած է,  
 Դեզ կը գտնեն հոս ամէն ցաւք գըծուար :
- 2 Հոս մոլորեալն կը գտնէ կենաց լոյսը,  
 Հոս ալ արամեայրն ցնծում անբապառ.  
 Մըխիթարիչն հոս կու տայ խորախոյսը.  
 Դեզ կը գտնեն հոս ամէն ցաւք գըծուար :
- 3 Հոս կենսատու երկնից ջուրը բըղխեալ է,  
 Սէր կը վազէ աթոռէն անդադար.  
 Քեզ է կոչումը, պայմանն հաւատալ է.  
 Դեզ կը գտնեն հոս ամէն ցաւք գըծուար :

## 402 (143) Բ-բ-է- Հ-Վ-Է-Է :

- 1 Տէր, հովուի պէս խընամէ մեզ,  
 Օգնութեանդ կը կարօտինք,  
 Զուրերու քով արածէ մեզ,  
 Արօտիդ կը փափաքինք.  
 Տէր, հովիւ մեր,  
 Քաւեցիր մեզ, քու կդ լինինք :

2 Այխարներդ ենք, պաշտպանէ մեզ,  
 փարախիդ տեսուչ ըլլաս,  
 Մըթութեան մէջ պատասպարէ մեզ,  
 Մոլորեալն գութով գտնաս.  
 Տէր, հովիւ մեր,  
 Ո՛հ, բազուկդ մեր վրայ բանաս:

3 Խոստացած ես ընդունիլ մեզ,  
 Թէպէտ ենք շատ մեղսալից,  
 Բարեգութ ես ողորմիլ մեզ,  
 Եւ մեղքէ սրբել անբիծ.  
 Տէր, հովիւ մեր,  
 Կը գիմենք քեզ յուսալից:

4 Պարգևէ մեզ երախտիբըդ,  
 Կամքդ ընել խիստ զօրացուր,  
 Տուր որ մենք քալենք շաւղըդ,  
 Սրտերնիս սիրովդ լեցուր.  
 Տէր, հովիւ մեր,  
 Ո՛հ, հօտիդ մեզ միացուր:

**403** (194, 204) Ե՛ւ... Բ՛նէ:

1 Իմ շուրջս կենաց յուզեալ ծովուն  
 Լացով իմ աչքըս կը նայի.  
 Բայց ինձ կու գայ մէկ ձայն սիրուն,  
 Եւ այն կ'ըսէ, "Եկուր ինձի:""

- 2 Կ'ըսէ թէ ո՛ր նեղեալ հոգւոյս  
Հանգրստութիւն կը գտնուի .  
Ո՛հ, երբ կ'ըլլամ յողնած, անյոյս,  
Ի՞նչ քաղցր այն ձայն, «Եկուր ինձի»:
- 3 Երբօր վախճանս կը մօտենայ,  
Ու սիրտըս շատ կը զարհուրի,  
Մահուան երկիւղը վրաս կու գայ,  
Այն ձայն կ'ըսէ, «Եկուր ինձի»:
- 4 «Այխարհս կ'անցնի, եկուր ինձի,  
Երկիրս բընաւ հանգիստ շունի .  
Աչքերդ գէպ ի յերկինս վերցուր,  
Ես եմ՝ բաժինդ, եկուր ինձի»:
- 5 Ո՛վ ձայն գըթած, ո՛վ ձայն սիրուն,  
Յաւ ու տաղնայ երբ վրաս հասնի,  
Տուր խորախոյս սրբաի իմոյ,  
Մեղմով ըսէ, «Եկուր ինձի»:

**404** (159) ԲԵՒՆԷՆԻ - - - ԴԵՒ

- 1 Գիշերային դաշտաց վըրայ  
Անթիւ աստղեր կը փայլէին,  
Բայց լոկ մէկ աստղը լոյս կու տար  
Մեղաւորի տըխուր աչքին .  
Ահա այն զօրքը լուսափայլ  
Կը հռչակեն փառքն Արարչի,  
Բայց չեն կարող փրկիչն յայտնել .  
Միայն աստղըն Բեթլէհեմի :

2 Անգամ մը ես կը նաւէի .  
 Սաստիկ մըրրիկ, խաւար գիշեր .  
 Ծովուն անդունդը ճեղքըւած  
 Իմ նաւըս շուտ պիտի կըլլէր .  
 Ահով արիւնըս պաղեցաւ .  
 Մահ գէ՛մ առ գէ՛մ եկաւ ինձի .  
 Յայնժամ իսկոյն մէկ աստղ ելաւ .  
 Պայծառ աստղըն բեթլէհեմի :

3 Իմ լոյսըս, յոյսըս Այն միայն,  
 Իմ մեծ վախերըս փարատեց .  
 Ալեաց ու փոթորկի մէջէն  
 Նաւահանգ իստն առաջնորդեց .  
 Արդ ամբացած և ապահով  
 Այսօր և միշտ գովեմ պիտի,  
 Ու յաւիտենական երգով,  
 Միայն աստղըն բեթլէհեմի :

405 (172) Փ-՝-+ -- Ա-+---՝:

1 Ով Հայր, Աստուած իմ, կը կանչե՞ս  
 Զաւակդ երկար ատեն կորսուած .  
 Ամէն մեղքերս պիտի ներե՞ս .  
 Կու գամ, փրկէ՛ զիս, Տէր գըլթած :

2 Ո՛վ Տէր Յիսուս, քովէս կ'անցնի՞ս,  
 Շնորհքով ու գրթութեամբ լեցուն,  
 Մըտիկ կ'ընե՞ս արկար ձայնիս,  
 Կու գամ ողորմութեան ժամուն:

3 Ո՛վ Սուրբ Հոգի, կը համոզե՞ս,  
 Երկար ատեն քեզ մերժեցի,  
 Եւ դա՛րձեալ այժմ կը հրաւիրես,  
 Կու գամ, սիրովդ գրթա ինձի:

4 Այ՛ն, ո՛վ Տէր, քու սէրդ սիրոյս  
 Առիթ կ'ըլլայ, ոտքերդ կ'իյնամ,  
 Շնորհէ որ քուկըդ ըլլալուս  
 Երջանկութիւնն փորձով գիտնամ:

**406** (157) Ի՛՛ Տէր- Ի՛՛ կ'---Ը---րդէ:

1 Ի՛՛ Տէրքս ինձ կ'առաջնորդէ,  
 Իրեն ձեռքովը զիս կ'ուղղէ,  
 Ուր որ ըլլամ, ինչ որ ընեմ,  
 Առաջնորդող ձեռքն կը տեսնեմ,  
 Կ'առաջնորդէ, կ'առաջնորդէ,  
 Իրեն ձեռքովը զիս կ'ուղղէ,  
 Ես աշակերտ միշտ գըտնըիմ:  
 Եւ հետեող հաւատարիմ:

- 2 Թող անասպատը թափառիմ,  
 կամ եղեմայ շուքէն անցնիմ,  
 Թէ լոյս, թէ մէզ զիս կը պատէ,  
 Դարձեալ Աստուած կ'առաջնորդէ :  
 կ'առաջնորդէ, Լ - յը :
- 3 Տէր, ձեռքդ ձեռքիս մէջ ըմբըռնեմ,  
 Այսուհետեւ չը տրտընջեմ,  
 Գոհ, ալ վիճակըս ինչ որ է,  
 Աստուածքս ինձ կ'առաջնորդէ :  
 կ'առաջնորդէ, Լ - յը :
- 4 Երբ հոս ընթացքըս կատարեմ,  
 Շնորհքովդ երբ աշխարհիս յաղթեմ,  
 Մահուան ցուրտ գետն զիս չը խառովէ .  
 Հոն ալ Տէրն ինձ կ'առաջնորդէ :  
 կ'առաջնորդէ, Լ - յը :

407 (188) երէ -----րէ-ն :

- 1 Ի՞նչ սրբատաշարժ այն քաղցը երգերն,  
 Որ ականջնիս կ'իյնան,  
 Երբ մաղթելու, Տէրն սիրողներն  
 Աստուանց կը միանան :



- 2 Դէպ ի երկինք անուշ հովերն  
Մաղթանքը կը տանին,  
Հայրն կը լսէ անոնց ձայներն,  
Կ'որհնէ ալ լիովին:
- 3 Նոյնպէս Յիսուս կանուխ ելաւ  
Ըղծիւ աղօթելու,  
Ինքն անապատն առանձնացաւ  
Հօրն հետ հաղորդելու:
- 4 Եւ հիմա ալ ինք կ'աղօթէ  
Լուսոյ մէջ երկնային,  
Մեզի համար կը միջնորդէ,  
Որ դեռ ծովն ենք մըթին:
- 5 Ով Տէր, մեր նաւն այսօր մըտիր,  
Ալիքն հանդարտեցուր,  
Մեզ նաւավար հըզօր եղիր,  
Եւ զերծ ցամաքն հասցուր:

**408** (169) Եւ: ԿՆ-9:

- 1 Տըխուր ողբով մ'ըսեր ինձի,  
Կեանքս է միայն երազ,  
Գործ կայ ինձի, գործ կայ քեզի  
Ամէն տեղ հանապազ:

- 2 Կեանքս իրական է, փութաջան,  
Եւ նըպատակ ունի.  
Անոր վախճան չէ դերեզմանն,  
Անդին ալ կը նայի:
- 3 Կեանքս օգտակար և թանկագին  
Ընել ենք հրաիրուած.  
«Դուն հող էիր, դառնաս հողին»,  
Հողւոյն վրայ չէ ըսուած:
- 4 Ապառնիին շապարիննք,  
Անցեալը թող թաղուի.  
Մենք ներկային մէջ թող ապրինք  
Արթուն և կենդանի:
- 5 Ամէն դարու մեծ, բարերար  
Մարդոց կեանքն կը փայլի.  
Մեր ետեւէն հեաք օգտակար  
Զըգել է պարտք մեզի:
- 6 Յառաջ երթանք, վեր նայելով  
Մեր կեանքն վրսեմ ընենք.  
Արթուն ըլլանք, և եռանդով  
Տէրոջը ծառայենք:

409 (119) Ն-Է-Է-Ն-Ն-Է-Ն Է-Ն-Ն-Ն-Ն-Ն :

- 1 Գաղանի իմաստութեամբ Աստուած  
Հրաշներ կը կատարէ .  
Փոթորիկին վըրայ նստած՝  
Ամպերն իր կառքն կ'ընէ :
- 2 Իր առաջադրութիւնքն անհուն  
Հանք են խոր հանճարի .  
Իր գերագոյն խորհուրդն փայլուն  
Ի գործ պիտի գըրուի :
- 3 Վախկտ սուրբեր, ո՞հ, քաջ եղէք .  
Ամպերն երկիւղ կու տան ,  
Բայց վախճանին ըսպասեցէք ,  
Բարիք պիտի տեղան :
- 4 Տըկար աչքով ու խորհուրդով  
Դուք Տէրը մի դատէք .  
Խոժոռ նայուածքներուն ներքեւ  
Ժըպիտ պիտի տեսնէք :
- 5 Խորհուրդն ամէն ժամ կը բացուի ,  
Պիտի շուտ հասուննայ .  
Բողբոջն թէպէտ դառն գըտնըի ,  
Երազիկն անոյշ կ'ըլլայ :

6 Թերահաւատութիւնն մարդկան  
 Մոլար է, կը խարէ .  
 Աստուած ինքն է իրեն թարգման,  
 Ամէն բան կը պարզէ :

## 410 (180) ՏԸ- երեկոյեան - զգիւտ :

1 Ո՛հ, նայէ ինձ և լըսէ զիս,  
 Բարեգութ Հոյիւ, Յիսուս .  
 Այս բոլոր գիշերն պահէ զիս  
 Մինչ վաղուան զըւարթ նոր լոյս :

2 Դուն այսօր զիս պաշտպանած ես,  
 Գահութիւնքս ընդունէ .  
 Հագցուցած և կերակրած ես,  
 Հիմա ձայնս սիրով լըսէ :

3 Կ'աղաչեմ, բոլոր մեղքերքս  
 Զբիապէս ներէ, ջնջէ,  
 Եւ սիրած բարեկամներքս  
 Պաշտպանէ ու միշտ օրհնէ :

4 Հոս փորձութենէ պահէ զիս,  
 Քու սիրովըդ թող ապրիմ .  
 Ետքն երկնից մէջ ընդունէ զիս,  
 Հոն քեզի հետ բընակիմ :

111 (147) ՅԷ----- Ն----- Կ----- :

- 1 Ի՞նչ են այս մեծ բազմութիւններն,  
Այս անձկութեամբ դիզուող խումբերն,  
Այս ժողովները օրէ օր,  
Այս գրգռումները անսովոր :  
«Յիսուս Նազովրեցին կ'անցնի»,  
Մեզմ' ձայներով շատերէ կ'ըսուի :
- 2 Յիսուս Նազովրեցին ո՞վ է  
Որ ժողովուրդն այդպէս շարժէ .  
Կրնա՞յ անցնող օտարական  
Իր կամքին պէս իշխել մարդկան :  
«Յիսուս Նազովրեցին կ'անցնի»,  
Մեծ մարգարէ,» շատերէ կ'ըսուի :
- 3 Ան է որ մեր վիշտերն կրբեց,  
Եւ մեր ախտերը բըժըշկեց .  
Հիւանդ և կաղ և կոյր բերին,  
Անոր առջևը ձրգեցին :  
Յիսուս Նազովրեցին կ'անցնէր,  
Սըրտաբեկեալն յուսով կը լեցուէր :
- 4 Մեր օրերուն մէջ ալ կու գայ,  
Մեր դըռներուն կը մտանայ .  
Այո, նա կը հանի մանկի,  
Մեզի հետ և ընթրիք ընել :

Յիսուս Նազովրեցին կ'անցնի,  
 Ո՛վ բերկրութեամբ զինքը կ'ընդունի:

5 Ծանրարեւնեալք, շուտով եկէք,  
 Ներուժ, հանգիստ, շքնորհք զըտէք:  
 Գըտէք հոս բարիքներ անհուն  
 Եւ անվախճան ուրախութիւն:  
 Յիսուս Նազովրեցին կու գայ,  
 Փորձուածներուն ապաւէն մը կայ:

6 Բայց այս հրաւերն եթէ մերժէք,  
 Այս սէրն անհուն արհամարհէք,  
 Ինքն ալ ցաւով ձեզ կը ձըզէ,  
 Չեք դառն ազօթքը կը մերժէ:  
 Յիսուս եկաւ ու մեկնեցաւ,  
 Ալ փրկութեան ժամանակն անցաւ:

## 412 (163) Պ-հ-դ-ն, է՛նչ կ'--ե-ե-:

1 Պահապան, ի՞նչ կ'աւետես,  
 Ե՛րբ պիտի գիշերն անցնի:  
 Ո՛վ պանդուխտ, լերանց վըրայ  
 Աստղն առաւօտեան փայլի:  
 Պահապան, կը գուշակէ  
 Օր ցնձմա՞ն թէ օր սուգի:  
 Ո՛վ պանդուխտ, օրն բերկրութեան  
 Խոստացեալ իսրայելի:

- 2 Պահապան, ի՞նչ կ'աւետես,  
 Բարձրացա՛ւ աստղըն փայլուն:  
 Ո՛վ պանդուխտ, կը հռչակէ  
 Աշխարհիս խաղաղութիւն:  
 Պահապան, պիտի լոյս տա՞յ  
 Հեռաւոր, օտար մարդոց:  
 Ո՛վ պանդուխտ, օր ծագեցաւ  
 Վասն համայն խաւարելոց:
- 3 Արդ, ով պահապան, մեր աչքն  
 Արշալոյսն կը նշմարէ.  
 Ո՛վ պանդուխտ, լոյսն երկնային  
 Վախն ու մահն կը փարատէ:  
 Պահապան, ալ մի հակեր,  
 Բերկրայից քու տունդ գընա:  
 Ո՛վ պանդուխտ, ահա արեւն  
 Կը փայլի լերանց վըրայ:
- 4 Ո՛հ, Արև արդարութեան  
 Աշխարհիս վրայ ծագեցաւ.  
 Ո՛հ, Իշխանն խաղաղութեան,  
 Աստուծոյ Որդին, եկաւ:

## 413 (161) Ք... Ե-ԵՆԷ, Տէր, Կուգե՛՛:

1 Քու ձայնըդ, Տէր, կը լսեմ,  
Որով զիս կը կանչես.

Կու գամ՝ որ զիս սուրբ արիւնովդ  
Լըւաս, մեղքէ մաքրես :

Տէր, քեզի կու գամ.

Հիմա զիս լըւա,

Ձիս մաքրէ սուրբ արիւնովդ

Հեղեալ ի Գողգոթա :

2 Տըկար և պիղծ կու գամ,

Գու, Տէր, ինձ ոյժ կու տաս

Եւ, որ ձիւնէն ճերմակ բլլամ,

Սուրբ արիւնովդ կը լուաս :

Տէր, քեզի կու գամ, Ե-ԵՆ :

3 Ձիս, Տէր, վստահութեան,

Յուսոյ և հաւատոյ

Կը հրաիրես, խաղաղութեան

Եւ կատարեալ սիրոյ :

Տէր, քեզի կու գամ, Ե-ԵՆ :

4 Թող յարձակին փորձանք,

Կու տաս ինձ յաղթանակ,

Կու տաս հոս շնորհք և ըսփոփանք,

Վերջն ալ փառաց պըսակ :

Տէր, քեզի կու գամ, Ե-ԵՆ :



5 փա՛ռք քաւութեան արեանն,  
 փա՛ռք ֆրիստոսի շնորհացն,  
 Մեր կատարեալ արդարութեանն  
 Եւ անվախճան կենացն :  
 Տէր, քեզի կու գամ, Լ-յն :

**414** (175) Տէր Յիսուսի Բ-նի-ն ԳԷ:

1 «Տէր Յիսուսի բազկաց մէջ  
 Պիտ' իմ հոգիս հանգչի,  
 Խր մեծ սիրոյն գրոշակն ինձ  
 Պիտ' ըլլայ հովանի:»  
 Սուրբ հրեշտակաց երգի պէս  
 Զայն մը յերկնից կու գայ,  
 Ինձ ամենայն վշտաց մէջ  
 Քաղցրը հրճուանք կու տայ,  
 Տէր Յիսուսի, Լ-յն :

2 Հոն աշխարհիս հոգերը  
 Զիս շէն կրնար նեղել,  
 Չար Սատանին հրապոյրքը  
 Ալ շէն կրնար խաբել :  
 Հոս քիչ մ'ալ աշխատանք կայ,  
 Քիչ մըն ալ փորձութիւնք,  
 Քիչ մըն ալ ցաւ և վիշտ կայ,  
 Ալ միայն քիչ մ'արցունք :  
 Տէր Յիսուսի, Լ-յն :

- 3 Տէրն, անոյշ ապաստանըս,  
 վասն իմ մեղաց մեռաւ .  
 Ալ այս անշարժ վէմին վրայ  
 իմ յոյս հաստատուեցաւ :  
 Հոս անգորր կը սպասեմ ես  
 Մինչ մութ գիշերն անցնի,  
 եւ ոսկեղէն եզրին վրայ  
 Այդ փառաւոր ծագի :  
 Տէր Յիսուսի, Է-ՅԷ :

## 415 (167) ՄԷ ՆԷՆԷԷ ԴՂԷ)՝՝ՂԷՆՆ :

- 1 Ո՛հ, մի զիջանիր, մի անսար փորձիչին,  
 Ձի մէկ զիջանիլն կը տանի ուրիշին .  
 Մեղքին դէմ կուռէ և կիրքերըդ զըսպէ,  
 Նայէ Յիսուսի, որ քեզ զօրացընէ .  
 Բու փրկիչդ կը գըթայ քեզ,  
 Յաղթութիւն պիտի տայ քեզ,  
 կը լսէ քու աղօթքըդ,  
 Բեզ կը զօրացընէ :
- 2 Ատէ սրտութիւն և ամէն շար խօսքեր,  
 եւ ապականիչ ընկերներ մի սիրեր .  
 վախցիր Աստուծմէ, սուրբ անունը յարգէ,  
 Նայէ Յիսուսի, որ քեզ զօրացընէ .  
 Բու փրկիչդ, Է-ՅԷ :

3 Աստուած պիտի լարձք տայ ամէն յաղթողին,  
 Յաղթէ հաւատքով փորձութեան և մեղքին.  
 Արթուն եղիր միշտ, եռանդով աղօթէ,  
 Նայէ Յիսուսի, որ քեզ զօրացընէ.  
 Գու փրկիչդ, Է-յն:

## 416 (165) Ո՛վ ե՛ս --ն+:

1 Այդ խուճեր եերմակ հազուած  
 Ո՛վ ե՛ն և ուսկի՞ց եկան,  
 Աստուծոյ աթոռն պատած,  
 Որք կ'երգեն միաբերան.  
 «Միանգամ մորթուած Գառնուկն,  
 Յախտեանքս կենդանի,  
 Փառք, պատիւ և օրհնութիւն  
 Ընդունել է արժանի:»

2 Հրրային տաղնայներէն,  
 Մեծ նեղութենէն ելած,  
 Աթոռին առջև կ'երգեն  
 Աստուծոյ կնքով կնքուած.  
 Հոն իրենց փրկչին ուժով  
 Մրցեցան, յաղթող ելան,  
 Լուսափայլ հանդերձներով  
 Հոս փառաց մէջ կը կենան:

3 Ա պիտի շանթեման,  
 Ոչ կրնան ալ ծարաիլ.  
 Տաքութիւն անոնց վրբան  
 Ա կարող չէ յարձակիլ.  
 Գառնն պիտի հովուէ զանոնք,  
 Գառնն պիտի առաջնորդէ,  
 Ա թերէն ամէն արցունք  
 Ինքն Աստուած պիտի սրբէ :

417 (177) Լ-ւ տե՛նք ՚ի- :

1 Լայր չք փրկեր զիս .  
 Անդադար դառն արցունքներս  
 Չեն կրնար սրբել մեղքերս .  
 Ոչ հեռացընել վախերս .  
 Լայր չք փրկեր զիս .  
 Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ ,  
 Ինձ համար շարչարուեցաւ ,  
 Չիս փնտռել յերկնից իջաւ .  
 Ինք պիտի փրկէ զիս :

2 Գործը չք փրկեր զիս .  
 Անձնուրաց երախտիքներ ,  
 Ճիգն ու ջանք ալ մարդասէր ,  
 Բնաւ հոգիս չեն նորոգեր .  
 Գործը չք փրկեր զիս .  
 Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ , Լ-յն :

3 Ոչ ալ ըսպասելը .  
 Ըսպասելրս է մեռնիլ .  
 Ինձ շօգնե՛ր անյոյս պատկիլ ,  
 Արարչիս դէ՛մ դանդատիլ ,  
 Ոչ ալ սպասելը :  
 Տէ՛ր Յիսուս ի՞մ տեղս մեռաւ , Է-յն :

4 Կը փրկէ հաւատքը .  
 Աստուծոյ Որդւոյն նայիմ ,  
 Եւ իւր բազուկներն նեատուիմ ,  
 Ալ անոր ապաւինիմ .  
 Կը փրկէ հաւատքը :  
 Տէ՛ր Յիսուս ի՞մ տեղս մեռաւ , Է-յն :

## 418 (179) Մտ Է-յն .

1 Ո՛վ Տէ՛ր , միշտ հոգիս պահէ  
 Քու խաչիգ մօտերը ,  
 Ուր աղբիւր մը կը հոսէ  
 Իւր բուժող ջուրերը :  
 Տէ՛ր , քու խաչիգ միշտ ընեմ  
 Փառքս ու ցնծութիւնքս ,  
 Մինչ գետէն անդին գտնեմ  
 Քո՛վիգ երանութիւնքս :

2 Մօտ խաչիդ հողիս հասաւ ,  
 Տէր , ողորմութեանըդ .  
 Հոն իմ շուրջըս փայլեցաւ  
 Աստղ առաւօտեանըդ :  
 Տէր , քու խաչդ , Լ - ոյն :

3 Տէր , քու խաչըդ օրէ օր  
 Բեր աչքիս առջեւը ,  
 Անդադար մընամ անօր  
 Ըստուերին ներքեւը :  
 Տէր , քու խաչդ , Լ - ոյն :

4 Մօտ խաչին ես կը սպասեմ ,  
 Մինչ Տէրոջը փառքը  
 Հոն , գետէն անդին , տեօնեմ  
 Ոսկեղէն եզերքը :  
 Տէր , քու խաչդ , Լ - ոյն :

#### 419 (162) Կ-յ - Բն-ու-ե- Ա-դ-ու-ն :

1 Աստղ , յուօին , պայծառ արեւ ,  
 Որոտում , փայլակ , անձրեւ ,  
 Փոքր բըլուր եւ բարձր լեռն ,  
 Գեղեցիկ թռչնոց երգերն ,  
 Որ եւ իցէ արարած  
 Միշտ կը քարոզէ զԱստուած :

2 Մով , ցամաք , ամպերն երկնից ,  
 Հով մեզմ կամ մըրբերկալից ,  
 Կը գոչէ մէկտեղ համայն  
 Տիեզերքը բարձրաձայն ,  
 Թէ զորձքովը յայտնուած  
 Կայ ամենուրեք Աստուած :

## 420 (173) Տէրը յէտի հոգայ :

1 Կերպով մը անշուշտ պիտի Տէրը հոգայ .  
իմ կերպըս չըլլայ ալ :

Քու կերպըդ չըլլայ ալ :

Բայց Տէրը պիտի իւր կերպովը հոգայ :

Օ՛ն, Տէրովը յուսա, պիտի նա հոգայ :

Օ՛ն, Տէրովը յուսա, պիտի նա հոգայ :

2 Յարմար ժամու մէջ պիտի Տէրը հոգայ .  
իմ ժամըս չըլլայ ալ :

Քու ժամըդ չըլլայ ալ :

Բայց Տէրը պիտի իւր ժամուն մէջ հոգայ :

Օ՛ն, Տէրովը յուսա, Է-յը :

3 Մի՛ յուսահատիր, պիտի Տէրը հոգայ .  
ինք ինչ որ խօսած է,

Անվրէպ կատարած է .

Վստահ ըլլանք, Տէրը անշուշտ կը հոգայ :

Օ՛ն, Տէրովը յուսա, Է-յը :

4 Օ՛ն, Տէրը ծովուն մէջ ճամբայ կը բանայ .  
ինք միշտ յաղթական է,

Մեզի ալ պաշտպան է .

Մեր երգն այս ըլլայ, «Պիտի Տէրը հոգայ» :

Օ՛ն, Տէրովը յուսա, Է-յը :

## 421 (194) ԵՐԻՆՆԵՐ ՀԷՐ ԵՆՆԵՐ

- 1 Կայ Հիւր մը որ դրան քով կանգնած  
Հեղիկ ձայնով դուռն կը զարնէ .  
Երկար ատեն է ըսպատած ,  
Եւ տակաւին հոն կը սպասէ :
- 2 Իւր դէմքն է ի՛նչպէս սիրելի .  
Իւր սէրն է ի՛նչպէս գերազանց .  
Գըթած սրտիւ , առատ շնորհօք ,  
Կը մօտենայ իւր թշնամեաց :
- 3 Բայց բարեկամ է ինձ իրաւ .  
Այո , ինչպէս ես կարօտած ,  
Քանզի քեզի համար մեռաւ ,  
Քու մեղքերովըդ խաչ ելած :
- 4 Ելիր , անհուն սէրն ճանչնալով ,  
Իւր թշնամին և քոյդ մերժէ ,  
Մեղք ատելի է գիտնալով  
Հիւրն երկնաւոր ներս ընդունէ :
- 5 Եթէ զինք հիմա չընդունիս  
Գուցէ քեզմէ պիտ' հեռանայ .  
Եթէ անգամ մը քեզ թողու  
Գուցէ պիտի ալ չըդառնայ :



## 422 (194) ԱՆՆՆԻ ԴԻԻ :

- 1 Եզո՞ւկ ինձի, ի՞նչ էր ըրի .  
 Ձի՞ժ բարերար Հայր Թողուցի,  
 Եւ շանսալով բարի խրատուն,  
 Մեղայ, մեղայ յամենայնի :
- 2 Դառն ցաւերով և միշտերով  
 Արդարապէս կը պատժուիմ,  
 Կամաւ իմ Հօրս սունէն ելայ  
 Որ սովամահ հոս կորընչիմ :
- 3 Իսկ փրկութեան ալ յոյս չըկա՞յ .  
 Դառնամ առ Հայրս, գոչեմ, «Մեղայ,  
 Ձեմ արժանի որդիդ լինել,  
 Ձիս ընդունէ իբրև ծառայ :”
- 4 Այո, մեղայ, Աստուած իմ, Հայր,  
 Քու ոտքդ կ’իյնամ ես կորսուած,  
 Անթիւ մեղքերըս ինձ ներէ,  
 Եւ ընդունէ դիս, Հայր գըթած :

## 423 (198) Քչի-... յ-բ-...

- 1 Հրեշտակն յերկնից կ'իջնայ,  
 կ'ըսէ մարդկան սեռին,  
 «Աղամորդի, ցնծա,  
 Ահա քեզ աւետիս :  
 Քրիստոս յարեաւ ի մեռելոց  
 Իբր անդրանիկ յարուցելոց :”
- 2 Երբ կ'որոտար երկինք,  
 երկրի հիմն սարսեցաւ .  
 Ապշած ինկան մարդիկ,  
 Տապանը բացուեցաւ : Քրիստոս, և այլն :
- 3 «Հոս չէ ան որ մեռաւ,  
 կանայք, ինչո՞ւ կ'ողբաք .  
 Սուգի ատենն անցաւ,  
 Ուրախանայ աշխարհք : Քրիստոս,» և այլն :
- 4 «Եկէք, ու զիս տեսէք :”  
 Ըսաւ ինքն, Տէրն փառաց .  
 «Բոլոր աշխարհք գացէք,  
 Ըսէք ամէն ազանց, Քրիստոս,» և այլն :
- 5 Արդ մենք ալ յարութեան  
 Հանդէսըն կատարենք,  
 Եւ ի ձայն ցնծութեան  
 Ուրախալից գոչենք, «Քրիստոս,» և այլն :

## 424 (197) ԽՐԻՍՏՈՍԻ ԱՆՆՈՒՄԻ ԵՆՆՈՒՄԻ :

- 1 Խորութիւնն ողորմութեանն .  
 Միթէ Տէրն ինձի նրման  
 Չար մէկուն կրնա՞յ ներել,  
 Գլուխն մեղաւորաց փրկել :
- 2 Աստուծոյ Որդին մերժած,  
 Խաչն ալ ոտնակոխ ըրած,  
 Խը շնորհքներն անարգեցի,  
 Չինքն ըսպէս տրամեցուցի :
- 3 Բայց Յիսուս միջնորդ է իմ,  
 Խը արեանն ապաւինիմ .  
 Տէրն է սէր, գիտեմ, կը զգամ,  
 Ալ ինչո՞ւ վախկոտ ըլլամ :
- 4 Համարձակ Անոր երթամ,  
 Աթոռին առջեւն իյնամ,  
 Մեղքերուս ներումն առնեմ,  
 Եւ առատ շքնորհք գտնեմ :
- 5 Տէր, օգնէ ինձ որ զղջամ,  
 Մեղքերուս փրաց ողբամ,  
 Ապրստամբութիւնս ձըգեմ,  
 Գեղ գտունամ ու ծառայեմ :

## 425 (196) ՅԷ-----Է ԴԷԿԷ

- 1 Տէր Յիսուս, հոգւոց բըժիշկ,  
 Զօրավիգ մեղաւորին,  
 Խիստ կատաղած կրքիցս ալիք  
 Բարձրացան յոյժ ի վ'րայ իմ՝  
 Խորտակիչ հոգմոց մըրբիկ  
 Կ'ընկղմէ զիս գլխովին,  
 Ճար չունիմ, չունիմ կարիք՝  
 Թէ չօգնեա կը կորսըւիմ։
- 2 Ձիք, չրկայ այլ ապաւէն,  
 Իսկապէս անօգնական՝  
 Մի միայն ճարս է ի քէն,  
 Գըլթառատ փրկիչ մարդկան,  
 Արդ գըլթաւ և յիս նայէ  
 Քու աչքովդ սղորմութեան,  
 Թէ և սիրտս է քարեղէն  
 Շընորհաց ալ անարժան։
- 3 Տէր, դու ես ինձ ամէն բան,  
 Լոյս մտքիս և կեանք սրտիս,  
 Ըստփականք ի նեղութեան,  
 Քաւութիւն բոլոր մեղքիս,  
 Առաջնորդ կենաց ճամբուն,  
 Զարթուցիչ խղճմըտանքիս,  
 Վասն որոյ առջևդ կ'իյնամ,  
 Մինչ գըլթաս, զիս ընդունիս։

## 426 (204) Սաղ. ԻԳ.

- 1 Տէրը իմ հովիւս է . ես բանի մը կարօտութիւն պիտի | շունե | նամ . ||
- 2 Ձիս խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցընէ . հանդարտ շուրերուն քովը ինծի կ'ա | աջնոր | դէ . ||
- 3 Հոգիս կը նորոգէ . իր անուանը համար արդարութեան ճամբաներուն մէջ կ'ա | աջնոր | դէ ին | ծի . ||
- 4 Թէ և մահուան շուքի ձորին մէջն ալ պըտըտիմ , շարէն պիտի չը վախնամ . վասն զի դուն իմ հետս ես . քու ցուպդ ու գաւազանդ՝ անոնք իս պիտի մը | խի | թա | րեն . ||
- 5 Սեղան կը պատրաստես իմ առջիս , իմ թշնամիներուս դիմացը , իմ գլուխս իւղով կ'օծես . իմ բաժակս | խիտ լե | ցուն է . ||
- 6 Յիրաւի բարերարութիւնը ու ողորմութիւնը իմ հետս պիտի գան կենացս բոլոր օրերուն մէջ , ու շատ օրեր Տէրօջը աունը պիտի | բընա | կիմ . || Ա | մէն . ||

## 427 (205) Սաղ. Կէ.

- 1 Աստուած ողորմի մեզի, ու | օրհնէ | մեզ, ||  
 երեսը փայ | լեցը | նէ մեր | վրայ, ||
- 2 Որ երկրի վրայ քու ճամբադ | ճանչցը | լի, ||  
 ու ամէն ազգաց | մէջ քու | փրկու | թիւնդ : ||
- 3 Թող ժողովուրդները | քեզ գո | վեն, || ով  
 Աստուած, բոլոր ժողովուրդ | ները | քեզ  
 գո | վեն : ||
- 4 Ազգերը թող ուրախանան | ու ցըն | ծան, ||  
 վասն զի ժողովուրդները ուղղութիւնով  
 պիտի դատես, ու երկրի ազգերուն դուն  
 պի | տի ա | ռաջնոր | դես : ||
- 5 Թող ժողովուրդները | քեզ գո | վեն, || ով  
 Աստուած, բոլոր ժողովուրդ | ները | քեզ  
 գո | վեն : ||
- 6 Երկիրը իր պըտուղը | պիտի | տայ, || ու Աստ-  
 ուած, մեր Աստուածը | մեզ պի | տի օրհնէ : ||
- 7 Աստուած մեզ պի | տի օրհ | նէ, || ու երկրի  
 ամէն ծայրերը ան | կէ պի | տի վախ | նան, ||  
 Ա | մէն : ||

428 (205) Մատթ. ԺԱ. 28—30,  
և Յայտ. ԻԲ. 17.

1 Եկէք ինձի, բոլոր յոգնած և բեռնաւորած ներս, և ես պիտի հանգուցանեմ ըզձեզ:

2 Առէք իմ լուծա ձեր վրայ, և սորվեցէք ինչ որ հեզ եմ և խոնարհ սրբաբանս, և ձեր անձերուն հանգիստ պիտի գըսանէք:

3 Քանզի իմ լուծա քաղցր է, և իմ բեռս՝ թեթեւ: Քանզի իմ լուծա քաղցր է, և իմ բեռս՝ թեթեւ:

4 Եւ Հոգին և Հարսը կ'ըսեն, Եկ, և ով որ կը լսէ՝ թող ըսէ, Եկ: և ով որ ծարարի է՝ թող գայ, և ով որ կ'ուզէ՝ կենաց շուրն առնու ձրի:

Ա՛մէն, Ա՛մէն:

## 429 (206) Ո- Երկինքն և Երկիրն :

Ու երկինքէն ձայն մը լըսեցի, որ կ'ըսէր, Գը-  
րէ, Այսուհետեւ, այսուհետեւ երանելի են  
ան մեռելները որոնք Տէրոջմով կը ննջեն :

Այո, կ'ըսէ Հոգին, այո, այո, այո, կ'ըսէ  
Հոգին, Որ իրենց աշխատութենէն, իրենց  
աշխատութենէն հանգչին, Ու իրենց՝ իրենց  
գործերը իրենց ետեւէն կ'երթան, ետեւէն  
կ'երթան :

## 430 (207) Հ-ԿՏ Տէր-ը և Ե :

Հոգի Տէրոջը վրայ ձըգէ,

Հոգի Տէրոջը վրայ ձըգէ,

Տէրոջը վրայ ձըգէ,

Հոգի Տէրոջը վրայ ձըգէ,

Ու ան քեզ պիտի խընամէ ու մըխիթարէ,

Քեզ պիտի խընամէ ու մըխիթարէ,

Քեզ պիտի խընամէ ու մըխիթարէ,

Քեզ պիտի խընամէ ու մըխիթարէ :

Հոգի Տէրոջը վրայ ձըգէ,

Հոգի Տէրոջը վրայ ձըգէ :



431 (208) Փ-ռ+ է ք-ը-ն-ն :

## ՄԱՍՆ Ա.

Փառք ի բարձունս | Աստու | ծոյ, || և յերկիր  
խաղաղութիւն, ի մար|դիկ | . . . | հաճութիւն. ||

Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս. օրհնեալ  
ես, Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և զո-  
վեմք ըզ|քեզ. ||

Խոստովանիմք, Տէր, զքեզ և երկիր պաղա-  
նեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք,  
Տէր, զքէն վասն մե | ծի փա | ռաց | . . . | քոյ : ||

## ՄԱՍՆ Բ.

Տէր թաղաւոր, սուրբդ | երկնա | յին. || Աս-  
տուած և | Հայր ա | մենա | կալ. ||

Տէր և Որդի Հօր | միա | ծին, || Յիսուս  
Քրիս | տոս և | սուրբ Որ | դի. ||

## ՄԱՍՆ Գ.

Տէր Աստուած, Գառն Աստուծոյ և | Որդի |  
Հօր, || որ առեր զմերս ի կուսէն. ո | զորմե | ցար. ||

Բարձեր զմեզս աշխարհի. և արդ ընկալ զա-  
զա | շանքս | մեր. || Սուրբդ որ նստիս ընդ աջմէ  
Հօր, ո | զորմեաց | մեզ : ||

## ՄԱՍՆ Դ.

Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ  
 ես, դու միայն Տէր մեր Յի | սուս ֆրիս | տոս . ||  
 Տէր և Հոգիդ Սուրբ, որ ի | փառս Աս | տուած  
 ընդ | Հօր . || Ա | մէն . ||

## 432 (209) Տէր--նի --ւն+ը .

Ով Հայր մեր որ յերկինս ես, քու ա | նու-  
 նըդ | սուրբ ըլ | լայ . || քու թագաւորու | թիւնդ  
 գայ, քու կամօքդ ըլլայ, ինչպէս երկինքը |  
 նոյնպէս | երկրի | վրայ . ||

Մեր հանապազօրդ | հացը . . . տուր | մեզ  
 այս | օր . || և ներէ մեզ մեր պարտքերը, ինչ-  
 պէս և մենք կը ներենք մեր | պարտա | պան-  
 նե | ըուն . ||

Եւ մի տանիր զմեզ ի փորձու | թիւն, այլ  
 ազա | տէ ըդ | մեզ չա | րէն . || Քանզի քուկդ է  
 թագաւորու | թիւնը և զօրու | թիւնը և փառքը |  
 յաւ | տեանս . Ա | մէն . ||

## 433

Ն: Գ: Գ:

- 1 Այս նոր տարուան սեմէն, Հայր իմ,  
 Ներս անցնելու կը վարանիմ,  
 Ամէն բան գոց, ծածուկ, մըթին  
 Եւ անծանօթ ինձ կը թըլին:
- 2 Լի թերութեամբ անցեալն անցաւ,  
 Զոր լոկ յիշելն սրտիս տայ ցաւ:  
 Արագ, արագ կ'անցնի ներկան,  
 Կ'ազդէ սարսափ մութ ապագան:
- 3 Տարուէ տարի եւս աւելի  
 Սիրտս կը գանամ շար մեղսալի,  
 Տըգէտ եմ ես, յիմար, անզօր,  
 Իսկ թշնամիս՝ խիտա զօրաւոր:
- 4 Ո՛վ Հինաւորց անփոփոխ վէմ,  
 Հոգւոյդ քաղցրիկ ձայնն կը լրտեմ  
 Թ'ինչպէս սուրբ լոյս քոյդ երեսաց  
 Յաղթէ խաւարն, վանէ ի բաց:

5 Թ'ինչպէս տրկարն կը զօրանայ՝  
 Եթէ սրտանց քեզի հաւտայ,  
 Եւ թէ օրէնք քո մընայուն  
 Կ'ընէ տրդէտ մարդն իմաստուն :

6 Ուստի, Հայր իմ, բռնէ ձեռքէս,  
 Եւ հետևիմ ո՛ւր ցուցընես.  
 Հաստատ գիտնամ ո՛չ կեանք, ո՛չ մահ,  
 Ո՛չ հրեշտակներ, ոչ շարին ահ,

7 Ո՛չ շարշարանք, ո՛չ նեղութիւն,  
 Ո՛չ թշնամեաց իշխանութիւն,  
 Ո՛չ վախ, վրտանգ, սիրելեաց սէր,  
 Ո՛չ ապառնի, ներկայ բաներ,

8 Ո՛չ բարձրութիւն, ո՛չ խորութիւն,  
 Եւ ո՛չ իրաց փոփոխութիւն,  
 Եւ ո՛չ երբէք մի արարած՝  
 Կարեն կորզել զիս՝ քո ձեռաց :

## 434 Աստուած էր բերդ է հաստատուն :

1 Աստուած մեր բերդ է հաստատուն,  
 Եւ է հրզոր պաշտպան մը,  
 Երբ վիշտ պատէ և փորձութիւն,  
 Ինքն է քաջ օգնական մը .  
 Ձի խաւարի իշխան,  
 Արթուն և ժրբաշան,  
 Գարանամուտ կ'ըլլայ,  
 Բռնել մեզ կը փութայ  
 Որ տապալէ անդունդը :

2 Մեր զօրութիւն է սրնոտի,  
 Մեր քաջութիւն խոտան է,  
 Այլ զօրապետ կայ խիստ արի,  
 Խաղաղութեան իշխանն է :  
 Մի՛ վ է այս զօրակալ .  
 «Յիսուս Բրիտոս Օծեալ»  
 Փորձիչը Նա յաղթեց,  
 Եւ մահը խափանեց .  
 Ամենազօր փրկիչ է :

3 Թող Սատանան յոյժ աշխատի  
 Իւր դաւերով բռնել մեզ .  
 Մենք վախ չունինք զի Տէրն բարի  
 Կարող է պաշտպանել մեզ :

Գեւք ալ պատիր, անթիւ,  
 Մեզ պաշարեն խըստիւ,  
 Կրնանք հանդարտ կենալ  
 Մինչ Տէրն ամենակայ  
 Անյաղթ մեր ապաւէնն է:

## 436 Այսօր -- էլ է օր է՛:

- 1 Քաղցրիկ ազգու խորհուրդ մը կայ,  
 Կըրկին կըրկին իմ միաքս կու գայ.  
 Մօտ եմ երկնից ա՛լ աւելի,  
 Այսօր քան թէ երբէք էի:
- 2 Մօտ եմ իմ Հօրքս երկնաւոր  
 Ինձ պատրաստած տան փառաւոր.  
 Մօտ եմ հերմակ մեծ Աթոռին,  
 Մօտ եմ յասպիս փայլուն ծովին:
- 3 Կենացս վախճանն ա՛լ աւելի  
 Մօտ է, որ բեռս ուսէս ձգուի,  
 Մօտ եմ իմ խաչս վար դընելու,  
 Մօտ եմ պըսակս ժառանգելու:
- 4 Հայր իմ, եզիր ինձ վէ՛մ ամօր,  
 Տըկար մարմինս դուն զօրացուր.  
 Չիս քու զօրեղ թևովդ բռնէ,  
 Յոյսս անհաստատ դուն հաստատէ:
- 5 Պատրաստ ըլլամ մահուան գետէն  
 Անցնիլ, երբոր կանչես մէկէն.  
 Թերևս մօտ եմ ա՛լ աւելի,  
 Բան թէ իմին մըտքէս կ'անցնի:

## 436 Ա-Ե-Ն ԿԵ ԵՐԻՒՆ ։

- 1 Մէկ քաղցր վըսեմ խորհուրդ  
Շատ հեղ կու գայ ինձի .  
Մօտ եմ երկնից այս օր , այս օր ,  
Քան զոր երբէք էի .  
Մօտ եմ երկնից ,  
Մօտ եմ երկնից ,  
Մօտ եմ երկնից այս օր , այս օր ,  
Քան զոր երբէք էի ։
- 2 Մօտ եմ իմ Հօրքս տանն ,  
Ուր օթեանք շատ կան .  
Մօտ եմ մեծ աթոռին այս օր ,  
Մօտ և ոսկի դրբանն ։  
Մօտ եմ երկնից , Լ - յն ։
- 3 Մօտ եմ գերեզմանին ,  
Յաւէս ազատելու ,  
Մօտ՝ խաչքս ձրգելու այս օր ,  
Պրսակս իսկ առնելու ։  
Մօտ եմ երկնից , Լ - յն ։
- 4 Փրկիչ իմ , մօտս եղիր ,  
Երբ խոր ձորէն անցնիմ .  
Զի մօտ եմ ես երկնից , այսօր ,  
Քան զոր ես կր խորհիմ ։  
Մօտ եմ երկնից , Լ - յն ։

## 437 Հայր իմ, +-- կ-իդ Բ-դ շԱՄՆ՝

- 1 Արև, անձրև ինք կը զրկէ,  
 Երկուքն ալ պէտք են ծագիկին :  
 Եւ արտասուք ու խնդուի ին  
 Հարկ են կարօտ, խեղճ հոգիին .  
 Թէև արև, անձրև ինձ գայ,  
 Հայր իմ, քու կամքըդ թող ըլլայ .
- 2 Երբեք սիրով լեցուած զաւակն  
 Իր հօրը դէմ արտունջ կ'ընէ՞ .  
 Ըստեղծողիս հետ թող իմ սիրտս  
 Հըլու զակի պէս միշտ գործէ .  
 Թէև արև, անձրև ինձ գայ,  
 Հայր իմ, քու կամքըդ թող ըլլայ .
- 3 Ինձ որոշուած կենաց վիճակն  
 Ամենալաւ կ'ուզեմ սեպել,  
 Եւ երբ իյնայ վրաս չուք մահուան,  
 Ուրախութեամբ սա երգն ըսել .  
 Թէև արև, անձրև ինձ գայ,  
 Հայր իմ, քու կամքըդ թող ըլլայ .



438 Լ-է, Յէ----- Է՛ ի-ն-է :

1 Արլսուի Տէրոջը ձայնը ,

«Ո՛վ կ'երթայ այս օր գործել :

Ալ արտերը ճերմկցած են ,

Եւ Երանակ է այժմ հնձել :»

Եւ Տէրոջը վարձքն առատ է ,

Ինք պիտի հատուցանէ :

Ո՛վ յօժար է պատասխան տալ ,

«Հոս եմ ես , Տէր , զիս զրկէ :»

2 Թէ հեթանոսաց երկիրը

Չես կարող դուն պըտըտիլ ,

Խաւարի մէջ նստողները

